Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

UGPGL
514

12/45

Սոնիա Պողոսեան
ՍԵՐԻՐԱԿԱՆՑ
Ա՛ՄԱՐԱԿԱՆ

ԵՊԻԿՏԵՏԵԱՅ

ԱՌԱԾՔ ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

Սերեր
514
ur

ԵՊԻԿՏԵՏԵԱՅ

ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ԱՌԱԾՔ ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Հ. Բ. Ե. Վ. Մ.

521

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
1871

514-2009
4473
41
Հ518

Մատենադարան

ԵՊԻԿՏԵՏՈՒՆ
ԱՌԱՔԵԼՈՅ ԲԱՐՈՅԿԱՆՔԻ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ճշմարիտ բարեաց։

1. Աստուածքն յերանութիւն ստեղծին զմարդիկ. յանցանօք իւրեանց վատաբաղդիկք լինին։

2. Որպէս օչ կանգնի նպաստակ՝ որպէս զի թիւրեցի օք 'ի նմանէ, այսպէս չիք յաշխարհի չար 'ի բնէ։

3. Եւ չար և բարի ըստ կամաց մերոց լինին։

4. Վասն էր արանջէս. աստուածութեան եւ քեզ յիւրայոցն զմեծագոյնն, զաղնուագոյն, զթագաւորականն և զաստուածական. այսինքն է՝ յօգուտ քո խելամուտ լինել, և 'ի քումիսկ յանձնէդ հայթհայթել

զքո կարևոր բարիս։ Զի՞նչ ևս խնդրես. լիր ուրեմն գոհացող, շնորհակալու հօր քում բարերարի, և մի գաղարիր ժամել 'ի նմանէ։

5. Ամենայն ինչ որ յաշխարհիս՝ է որ 'ի մէնջ կախեալ կայ և է որ ոչ. 'ի մէնջ՝ կարծիք մեր, շարժուածք, խղճք, յօժարութիւնք և ատելութիւնք. բովանդակ ասել, ամենայն գործք մեր։

6. Իսկ որ ոչն 'ի մէնջ, մարմինք մեր, ինչք, համբաւ, իշխանութիւն. և բովանդակ՝ ամենայն որ ոչն է 'ի համար գործոց մերոց։

7. Այն որ զմէնջն կախի՝ ազատ է 'ի բնէ, և չիք որ խոչիան կամ խոչընդոտն նմա լինիցի. իսկ որ ոչն՝ տկար է և. ստրուկ, նկուն և նշաւակ բազում ինչ խոչիանչաց և գրժպատահից, և համանգամայն՝ եկամուտ։

8. Եւ արդ յիշեա, զի եթէ առ ազատս ունիցիս զառ 'ի բնէ ստերկացեալն, կամ թէ զքո ինչ համարիցիս զայն որ չիցէ կախեալ զքէն՝ ամենայն ուրեք գտցես զքեզ խոչ

ընդ ոտն. վշտացիս և նեղեսցիս և 'ի զուր բամբասիցես զաստուածն և զմարդիկ։ Իսկ եթէ զպատշաճեալսն եւեթ անձին քում՝ համարիցիս քեզ և ոչ զօտարացն, ապա ոչ ոք բռնադատիցէ զքեզ առնել՝ զոր ոչն կամիցիս, կամ խափանել զոր կամիցիսն առնել. ոչ զոք ամբասանիցես, ոչ կալցես զումեքէ տրտունջ. և հակառակ կամաց քոց և ոչ մի ինչ ոչ առնիցես. ոչ ոք ստնանիցէ քեզ. քէն ընդ ումեք ոչ ունիցիս, և ոչ ուստեք հատցէ քեզ մեռաս։

9. Եւ քանզի առ մեծամեծս ձըգտին իւրքն քո, յիշեա և զայն զի մեծամեծ ճգանց պէտք են առ 'ի դամագիւտ նոցին լինել. և զի յամենայն արտաքնոց իրաց՝ հարկ է քեզ յոմանց հրաժարել խպառ, զոմանս՝ այլուամ թողուլ պատեհի. քանզի եթէ բնաւին միանգամայն հետամուտ եղեալ՝ ջանայցես ըզբառամբ ածել և զՀշմարիտ բարին և զմեծութիւնս և զիշխանութիւնս, գուցէ և 'ի յետնոցս վրիպիցիս,

ակնկալու և այլոցն էլով. և առանց
ինչ երկրայութեան զուրկ գտանի-
ցես յայնցանէ՝ որ միայն կարողն են
առնել զքեզ ազատ և երանելի։

10. Եւ արդ յառաջ քան զա-
մենայն յորժամ խորհուրդ գժպհի
անկցի 'ի միտս քո, փութաջիր ա-
սել. «Մատացածին ցնորք իմն է դու
և ոչ որ ինչ երևիսդ»։ Յետ այնո-
րիկ քաջ քննեա զայն և խելամուտ
լեր. և առ 'ի բարեգոյ հատու լինել
այնմ՝ վարեսջիր կանոնաք զոր ու-
սարդ, և մանաւանդ առաջնոյն
այնու, այն ինքն է՝ գիտելն եթէ այն
որ երևեցաւն քեզ յորոց անուն կոչէ,
յայնցանէ՞ որ 'ի մէնջն կախեալ կան,
եթէ որ ոչն. և թէ չկոչեն 'ի կարողու-
թեան մերում, ապա գիտեա ան-
երկմիտ՝ զի և ոչ անկ են քեզ։

11. Յիշեա զի կէտ ըղձից քոց է
հատանել ըղձացելումդ. և առնիր եր-
կիւղն՝ քոխորշելն յորմէ երկնչիս։ Որ
ոչ հատանէ փափաքանացն՝ վատա-
բաղդիկ է, իսկ որ գթէ յայն յորմէ
զանգիտէրն՝ եղկելի է։ Արդ եթէ դու
զայնոսիկ միայն ատիցես որ հակա-

ռակքն են Ճշմարիտ բարեաց քում և որ 'ի քէն կախեալն կան, մի զԹիցես բնաւ 'ի խորշելիսն։ իսկ եԹէ երկնչիս 'ի մահուանէ, 'ի հիւանդութեանց և յաղքատութէ, եղիցիս առաւելեալ։ Փոխանակ ահաբեկ լինելոց յիրաց որ ոչն են կախեալ 'ի մէնջ՝ երկիր յայնցանէ որ ընդ մերով իշխանութիւն են։ և զիպձս քո կարձեա առ ժամայն։ զի եԹէ ըղձանայցես իրաց որ չեն ընդ մերով իշխանութեամբ, ապա ոչ էս դու բաւական Ճանաչել զարդարև փափագելիսն։ Եւ արդ մինչև ի՞նչ քո այդմ ձեռնհաս լեալ՝ շատ համարեալիր ինդրել և պահել զհանդիպեալսն քեզ։ այլ և զայն մեղմով, ընտրութեամբ և անխուճաչաց։

12. Հիւանդութիւնք խափանք են մարմնոյ և ոչ կամաց, բայց եԹէ ինքնին յօժարեսցի։ Կաղ եմ։ այս արդեալ է ոտիցս, բայց ոչ կամաց իմոց։ Զնոյն բան ասա և զամենայն արկածից որ կասեցուսցեն զքեզ։ և ծանիցես, զի ԹէպԷտ լիցին ինչ իմիք արդեալ՝ բայց քեզ ոչ բնաւ։

13. Զարդաւոր եթէ լիցես կը-
ռինչ չարտգուշակ, մի խառվեցուս-
ցեն զքեզ խորհուրդք քո, այլ էլ
խելամուտ յանձին քում և ասա-
ինձ բնաւ յարկածից այսոր չարա-
գոյժ գուշակիդ՝ ոչ ինչ հասցէ, այլ
միայն եղկելի մարմնոյս, գուշնա-
քեայ ընչից, կամ փանաքի վարկի
անուանս, կամ մանկանց իմոց, և
կամ ամուսնոյ իմոյ. իսկ ինձ՝ եթէ
կամիցիս միայն՝ բաստ բարի լցէ.
քան զի որ ինչ և դիպեսցի՝ կարող
եմ հանել անտի օգուտ մեծ:

14. Յամենայնի որ զբօսական
քեզ լցէ, կամ 'ի պէտս ինչ կամ
հաճոյ ախորժակացդ, յիշեցո՛ ցանձն
քո թէ զինչ բնաւ լցեն զոքա ատու-
գասպէս, սկսեալ 'ի փոքունց մինչև
ցմեծամեծան: Եթէ սիրիցես անօթ
ինչ բրտի, ասա, թէ զոր սիրեմն ա-
նօթ ինչ հոգեղէն է. որպէս զի եթէ
խորտակիցի՝ մի ինչ խառվիցես: Եթէ
զորդեակ քո սիրես և կամ զկին,
ասա դու ցքեզ, թէ սիրեմ մարդ մի
մահկանացու. որպէս զի եթէ մե-
ռանիցի՝ մի յայլ յայլմէ լինիցես:

15. Եթէ զայն կամիս զի մանկունք քո և կին և բարեկամք՝ կեցցեն հանապազ, ցնորեալ մոլիս. քանզի այնու կամիս իմն նուաճել իրս՝ յոր չեան ձեռնհաս, և զօտարին գրաւել: Նոյնպէս եթէ կամիցիս զի ծառայ քո ոչ բնաւ սխալակիցէ, մոլիս, քանզի այսու կամիս իմն զի թերութիւն ոչ լինէր թերութիւն, այլ այլ իմն ինչ: Կամիցիս չեչանել 'ի դէրև 'ի յուսոյդ. — կարես քաջ. — փափաքեաց այնմ միայնոյ՝ որ չեչանէ ըստ կար ձեռին քո:

16. Մի զայն խնդրեր զի ըստ ըղձից քոց իրքն պատահեսցին, այլ զի որպէս ինչ պատահիցեն պատահեսցին, և յաջողեսցիս միշտ:

17. Հանդերձեալք նաւաչու լինել՝ փափագեմք հողմոյ աջողակի՝ զի յառաջեալ երթիցեմք. և մինչդեռ սպասեմք՝ վարանեալ նստիմք, և հայիմք սաէպ քննել թէ ուստի հողմն շնչիցէ: «Աւաղ, ասեմք, հանապազ հիւսիսակ է. զի՞նչ օգուտ մեզ 'ի հողմոյ հիւսիսոյ՝ որ հակա-

ռակ է մեզ։ Եթէ ընչեցէ արևմը-
տեան հողմն »։ Բարեկամ, ընչեցէ
նա երբ և կամեցի, մանաւանդ թէ
ընչեսցէ՝ երբ տեսան նորա կամք
լցեն։ Մինթէ դու լցես իշխան հող-
մոց իբրև այլ ոմն Եւոլոս։ Որ ինչ
անկ է մեզ՝ զայն եւեթ արժան է առ-
նել, զայլն ամենայն վարել որպէս
և հանդիպին։

18. Թրասէաս ասէր. Սիրեմ
այսօր 'ի մահ մատնիլ քան վաղիւ
յաքսոր։ Սա որ Ռուփոս եւ պա-
տասխանի. « Եթէ իբրև զվատթա-
րագոյն զառաջինն ընտրես, մոլիս,
իսկ եթէ իբրև զլաւագոյն՝ ո՞ արար
զքեզ իշխան ընտրուիլ եանդ »։

19. Որ արժանապէս զինչանի հար-
կին՝ խմաստուն է և Ճարտար 'ի գի-
տել զգործս աստուածոյն։

20. Արդոյ են ինձ միշտ հանդի-
պեալքն, քանզի հաւանեալ եմ թէ
քաջ քան զիս ընտրեն զիք զօրուան
իմ։ Վասն որոյ փարիմ զնոքօք, ըղ-
հեռ կրթիմ նոցին, և ըստ կամն նո-
ցա ուղղեմ զիղձս իմ և զշարժմունս,
զկամս իմ և զերկիւղ. պարզաբար

ասել, զոր նոքայն կամին՝ կամիմ և ես։

21. Բնութիւն արդարև բարի մին է և աքանչելի, որ ուժգնագոյնս յաբեցուցանէ զմեզ ընդ կեանս, ասէր Քսենոփոն։ Խնամով դարմանեմք ըզմարմին մեր՝ թէպէտև դժպհի և տխեղծ ևս կցէ. այլ եթէ զընկերին հասանէր մեզ խնամել լոկ միայն աւուրս չորս՝ անտանելի լինէր։

22. Ճշմարիտ երջանկութեան սեփհական է յարատևն լինել և անարգել յամենայն խափանչաց. և որ զերկոսին զայսոսիկ շնորհս ոչ ունի՝ չէ նա ճշմարիտ երանութիւն։

23. Զէ պարտ խնդակից լինել ընդ մարդկան և երանել, բայց վասն այնպիսեաց եթէ՝ ընդ որս արժան կցէ նոցա ուրախանալ, և որք արդարև իսկ արդոյք կցեն և նոցա շահաւէտք։

24. Երջանկութեան և ըզձից անմարթ է կալ 'ի միասին։

25. Ճշմարիտ աւուրք հանդիսից են քեզ աւուրք՝ յորս փորձութեանց ինչ յաղթեցեր, կամ հա-

ջածեցեր, և կամ գոնեայ նկուն ա-
ղարեր զգուռզութիւն, զժպրհու-
թիւն, զջարամտութիւն, զջարա-
խօսութիւն, զնախանձ, զցոփաբա-
նութիւն, զզեղխութիւն, և կամ
զմի յախակց որք բռնացեալ են 'ի
քեզ։ Ընդ այս առաւել արժան է
քեզ զոհս մատուցանել, քան եթէ
'ի ձեռս բերեալ էր քո զպատիւ
հիւպատոսական, և կամ զհրամա-
նատարութիւն բանակի։

26. Զի՞նչ իցէ հատարակացն ուղ-
ղադատութիւն։ Զոր օրինակ ամե-
նայն որ ունի լսելիս ինչ հատարակ-
օրէն, որով հաւասար ամենեցուն
ընտրէ զձայնս, և զամենայն բար-
բառս զոր խօսիցին. բայց է և այլ
նմին արուեստական լսելիք՝ որ զա-
նազանէ զեղանակս և նշանակէ. այս-
պէս դոյ յամենայն մարդիկ բնա-
ւորական նմին զգացումն, որ եթէ չի-
ցեն այլով իւրեք ախտացեալ յոգւոջ,
հաւասարապէս խելամուտ առնէ
զնոսա ամենայնի որ առաջի առնիցի
նոցա. և բերումն այս հաւասար
յամենեսին՝ սա կոչի «հատարակաց
ուղղադատութիւն կամ զգացումն»։

27. Պահակապանք առ ամենայն որ մերձենայ հարցանեն զնիշ բանի անցեալ. այսպէս արասցես և դու. ամենայնի որ յանդիման լինի պատ-կերի մատաց քոց՝ հարց զնիշ բանի անցեալ, և ոչ հասցեն քեզ յանկարծակի խաբկանք:

28. Ի Հռովմ երթաս հատանելով զերկայն Ճանապարհն, որպէս զի յաջողեսցի քեզ վարել 'ի հայրենիսդ պաշտօն շքեղագոյն քան զոր այժմդ ունիս: Իսկ զո՞ր ուղի հատեալ ելեալ քո երբեք վասն լաւագոյն ինչ կարծիս և վարկ ստանալոյ: Կամ ընդ ո՞ւմ եղեր խորհրդակից յուղղութիւն թերութեանց քոց: Ե՞րբ և յո՞ր տիս սկսար քննել զքո կարծիսդ: Ա՛նց ընդ ամենայն ամս կենաց քոց, և ահա գոյցես զի զոր այժմ առնես՝ զնոյն միշտ արարեալ է քո:

29. Տրիբուն ժողովրդեան եղեալ ուրուք՝ դառնայ 'ի տուն, և գտանէ զայն ջահալոյց պայծառացեալ, և խուռն բազմութիւն մարդկան որք դան շնորհաւոր ասել նմա. փութայ ելանել 'ի Կապիտոլիոն,

զոհս զոհել և շնորհս մատուցանել զկոյ։ Իսկ ո՞ ոք 'ի մէնջ շնորհս կալցի զնոցանէ՝ վասն այն զի ունի ուղղախոհ միտս, և չափաւոր և ըստ բընութեան խղճս։

30. Որպիսի խնամով քննէ լուսափոխն զդրամն զոր տան նմա. զամենայն զգայարանս առ նոյն կրթէ. զաչս ասեմ և զձեռս, զհոտոտելիս և զլսելիս. ոչ շատանայ փորձել զինչիւն դրամոյն մի անգամ կամ երկիցս, և 'ի սուէպ փորձոյ ձայնիցն զոգցեալ ինն երաժիշտ լինի։ Եւ մեք ամենեքեան լուսայափոխ եմք յիրս՝ զորս կարծեմք եթէ անկք ի ցեն մեզ. զամենայն ճիգն և զինամ 'ի կիր առնումք զի մի արդեօք խաբիցիմք։ Այլ ուր բանք ի ցեն զմտաց մերոց և զկարծեաց քննութենէ, զի մի արդեօք արկցեն զմեզ 'ի հրապոյրս պատրանաց, անդ յոյլք և անհոգք գտանիմք, իբր այն թէ մեզ ինչ ոչ պատշաճիցեն. այսպէս անդէտք եմք վտանգին՝ որ անտի հասանէ մեզ։

31. Կալ հանապազ առաջի աչաց մատցդ զայսոսիկ հասարակաց

առաջս. «Զի՞նչ ինչ ինչ ասէ իմ. Զի՞նչ որ ոչ ասէ իմ: Ո՞ր այն ասէ որ տուաւ ինձ: Զի՞նչ կամիցին գնքն զի ես գործիցեմ: Եւ զի՞նչ զոր ոչն կամին թէ առնիցեմ»: Մինչև ցարդ թոյլ եառն քեզ վայելել՝ ի բարութիւն մեծամեծս. եառն քեզ ժամանակս անձամբ անձին պատրաստելոյ, ընթեռնլոյ, և մտախոհ լինելոյ, գրելոյ զկարևոր ասացս զայսոցիկ, և պատրաստ գոլոյ՝ ինքոյն: Բաւական էր քեզ ժամանակն այն: Եւ այժմ ասեն. «Եկ, մարմնոյ, հանդէս արա ուսմանդ, երևեցո զանձն քո եթէ ըմբիշ ոք ասցես՝ մեզ արժանաւոր, ըմբիշ արժանաւոր պատկաց. թէ արդեօք մի՝ ի վատոցն ըմբշամարտից՝ որք ընթանան ընդ երկիր, և ամենայն ուրեք՝ ի պարտութիւն մատնին»:

32. Մի պարծիր բնաւ ընդ եկամուտս առաւելութիւնս ինչ: Եթէ երիվար պարծենալով ասէր, դեղեցիկ եմ ես, նեղելի էր արդեօք. այլ դու յորժամ ասես պանծալով՝ «Երիվար ունիմ գեղեցիկ», դի-

574-2009
(591)
44433
41

տեսա, զի պարծիս ունել երիվար գեղեցիկ։ Եւ զինչ յայդմ կայցէ քո սեփական. բայց եթէ վարիցն մտաբերութիւն խորհրդոցդ։ Վասն այսորիկ յորժամ 'ի վարելն քո զմիտս՝ պատկառ կայցես բնութեան օրինաց, յայնժամ ունիս մասն պարծանաց, զի պանծաս ընդ քո ինչ սեպհական։

33. Յորժամ լսեմ կոչել զոք երջանիկ՝ քանզի հաճոյ է յաչս իշխանին, նախ հարցանեմ եթէ զինչ գէպ եղև նմա։ Ասեն, դաւառաստէր կարդեցաւ։ — Եւ միթէ միանգամայն ստացաւ նա և զամենայն որ կարեւորն է 'ի բարւոք վարչութիւն։ — Պրեստրութիւն, ասեն, էհաս։ — Այլ ունիցի՞ և զամենայն որ ինչ պէտոյն է առ 'ի լինել պրեստր։ Ոչ եթէ իշխանութիւնքն ինչ առնեն ըստմարդ երջանիկ, այլ բարւոքն վարել զնոսին և յօգուտ։

34. Քաջ զգոյշ լեր անձին քում, զի մի արդեօք տեսեալ զոք մեծարեալ պատուով, կամ ամբարձեալ յաւագութիւն, մեծ և կամ բար-

գաւառական զիարդ և է օրինակաւ, ձգեալ և պատրեալ յեռանդանէ մատցդ համարիցիս զնա երջանիկ. քանզի եթէ խակական բարիք հաստատեալ են յիրս որ ընդ մերում իշխանութեամբ են, ոչ եանեխանձ, ոչ մախանք և ոչ չարակենութիւն դամադիւտ լիցին. և դու ինքնին ոչ եւ կամիցիս լինել ոչ ղօրապետ, ոչ ծերակոյտ, ոչ հիւպատ, այլ աղատ միայն. և մի եւեթ է ճանապարհ առ ազատութիւնս այս. արհամարհելն զիրս՝ որ չիցեն յիշխանութեան մերում:

35. Յամենայնի պարտ և արժան է առնել զոր հնարն է, և կալ մնալ անվրդով և անդորր: Կամք են ինձ նաւարկել. և զինչ պարտիցիմ առնել: Բարեաք ընտրել ըզնաւն, զնաւուղին, զնաւատուն, զեղանակն, զօրն, զհողմն. ահաւասիկ այս ամենայն 'ի ձեռս իմ է: Իսկ մինչ 'ի խորան խաղամ, և ահա մըրրիկ մեծ յառնէ. այնուհետև ոչ ինձ այլ նաւուղին է գործ: Ընկղմի նաւն յանդունդս, և զինչ պարտ

ւցէ ինձ առնել։ Զոր հնարաւորն է՝ առնեմ. ոչ ճիչ բառնամ վայրապարը, ոչ տագնապիմ։ Գիտեմ, զի որ ծնանի՝ և մեռանելոց է. այս օրէն է հաստատեալ. պարտ է և ինձ ուրեմն մեռանել։ Զեմ ես յաւերժականն, այլ մարդ եմ, մասն ինչ 'ի բոլորէն, որպէս ժամ մի մասն ինչ է աւուր։ Գայ ժամ մի, և անցանէ. դամ և անցանեմ և ես ըստ նմին օրինակի. չէք ինչ խոսիր ընդ օրինակ անցեցն, թէպէտև տենդիւ ւցէ, թէպէտ և ջրով. հաւասար է ամենայն։

36. Ի կրկին զանազանեալ բնութեանց հաստատեալ եմք մեք. 'ի մարմնոյ՝ որով հաստատիմք եմք անբանեցն, և 'ի հոգւոյ՝ որով հաղորդ եմք աստուածոցն։ Ոմանք միտեն յառաջին այս յարենակցութիւն, եթէ օրէն ւցէ կոչել այսպէս, արենակցութիւն խոտան և մեռելատիպ. և ոմանք հակամէտ լինին յերկրորդն, յարենակցութիւնն այն երանելի և աստուածական. վասն այսորիկ սոքա ազնուախոհք լինին,

իսկ նոքա որ բաղմութիւնքն են՝ բե-
ին 'ի խորհուրդս վաղթարս և գեա-
նաքարշս։ Զինչ լցեմ ես։ — Այր
որուսալ և տառապեալ. և մանուն-
քըս յորոց հասանեալէ մարմինս այս՝
արդարև կարի նման տղկաղկք են և
թշուառագոյնք. այլ է ինչ 'ի քեզ
աղնուականագոյն քան զմանքդ.
և արդ ընդէր բնաւ ապախտ արա-
րեալ զայսպիսի վսեմական սկըզ-
բամբք, յարիցես 'ի միս և 'ի մար-
մին։ Ահա գահավէժք ընդ որ խարդ-
սաւանակ լինին գոգցես ամենայն
մարդիկ, և ահա վասն այսորիկ իսկ
են 'ի նոսին այնքան ճիւաղք, այն-
քան գայլք, առիւծք, վագրքք, և
խոզք։ Զդոյշ լեր անձին քում, և
զուն գործեա չյաւելուլ զթիւ
ճիւաղացդ այդոցիկ։

37. Ճշմարիտ բարին մարդոյ զբ-
տանի միշտ յայնմ մասին՝ որով ո-
ւրուշի յանբանից. եթէ այս մասն քաջ
ամրացեալ լցէ և զինեալ, և եթէ
առաքինութիւնքն բարեռք զգու-
շացին նմա՝ առ 'ի վանել զթշնա-
մին, մարթ է մարդոյ կալ յապա-
հովի և անկասկած։

38. Թշուառ լցէ երիվար զի ոչ երդէ։ Ոչ. այլ երբ ոչն կարասցէ ընթանալ։ Թշուառ լցէ շուն զի ոչ սլանայ ընդ երկինս։ — Ոչ. այլ եթէ ոչ լցէ քաջ հոտառու։ Մինթէ թշուառ լցէ և մարդ՝ զի չկարէ հեղձուցանել զառիւծունս, կամ նորանշանս գործել։ Ոչ բնաւ. զի ոչ առ այդոսիկ հաստատեցաւ։ Այլ թշուառ յայնժամ է յորժամ կորուսցէ զհամեստութիւն, զգութ, զհաւատարմութիւն, զարդարութիւն. և յորժամ դրոշմեալքն յոդուոջ նորա տիպք աստուածականք՝ 'ի բաց ջնջեսցին։

39. Ի քո ձեռս է 'ի բարին կըրթել զամենայն պատահար։ Մի՞ և ասուրեմն ասեր ինձ. «Զի՞նչ արդեօք հանդիպեսցի»։ Քեզ զի՞ փոյթ է՝ եթէ որ զինչ և պատահեսցի կարիցես դու զայն 'ի լաւ անդր վարել, և զամենայն պատահար փոխել 'ի բարեբաստութիւն մեծ։ Հերակլէս աստուց երբեք, եթէ մի՞ պատահեսցի ինձ առիւծ ահագին և կինճ վնիթխարի, կամ արք հրեշաւորք և կա-

տաղնք մի՛ լեցին ինձ դիմամարտք։ Զմի՞ վշտադնիս։ — Եթէ կինձ ահա՜ ուր եղեկ քեզ ընդ առաջ, մեծագոյն ևս և առաւել փառաւոր լեցի կըռիւն։ Եթէ հանդիպեացին քեզ յուղղոջ արք անհեղեղք և անհամբոյրք, անհետ առնելով զնոսա յերկրէն՝ երախտաւորագոյն ևս գըտցիս։ — «Այլ եթէ մեռանիցի՞մ»։ Եւ կարի խակ քաջ։ մեռցիս դու ըզգործ դիւցազին գործելով։ Եւ զի՞նչ քան զայդ պանծալի կայցէ։

40. Հերակլէս 'ի փորձ արկեալ Յեւրիսթեայ, չասէր բնաւ զանձն վատաբաղդիկ, և կատարէր զդժընդակագոյն հրամանս բռնաւորին։ Եւ դու 'ի դից մատուցեալ 'ի փորձ, 'ի դիցն ասեմ որ զքեզ ստեղծին, աղաղակ բառնաս, քանքարտաս, և եղկելի զքեզ ասես։ Որպիսի՛ վատութիւն, որպիսի՛ մեղկութիւն։

41. Մահ և աքսոր և այլ ամենայն որ թուին քեզ ահագինք՝ առաջի աչաց քոց կացցեն հանապազօր, և մանաւանդ մահն. ոչ ևս լեցին 'ի քեզ խորհուրդք վատք, և ոչ ևս

մոլութեամբ ըղձակաթ խմիք լինի-
ցիս։

42. Յիշեա զի դերասան ես 'ի թատերական խաղի՝ յոր հեղինակ նորին եմոյծ զքեզ, եթէ երկայն կցէ և եթէ հակիրճ։ Եթէ կամի զի զձև մուրացիկ աղքատի բերցես, հարկ է քեզ ըստ կարի քում քաջ կերպարանել զայն։ Նոյնպէս եթէ կամիցի քեզ բերել զձև կաղի, կամ զկիշեանն, կամ զսոսկականի ուրուք. քանզի քեզ անկ է քաջիկ զվիճակեալն քեզ կերպարանել անձն, այլում է անկ վիճակեցուցանելն զքեզ։

43. Մարթ է քեզ չյաղթիլ բընաւ, եթէ ոչ լիցիս միջամուխ 'ի կռիւ՝ որոյ յաղթութիւն չկցէ գըլխովին 'ի ձեռս քո։

44. Եթէ դեր 'ի վերոյ քան ըզկար քոյին առցես քեզ մասն 'ի թատեր, ոչ միայն անյաջող գոցիս 'ի նմին, այլ և յայնմանէ՝ յորում յաջողելն մարթէիր՝ վրիպեսցիս։

45. Բարեկամ, քննեա նախ զայն որում փափաքեսդ, և ապա տես

յանձն քո և 'ի բնութիւն՝ եթէ կցէ բաւական տանել զբեռնն զայն։ Կամիցիս արդեօք լինել հնգամարտիկ կամ սուսերամարտ։ Քննեա զբազուկդ, փորձեա զաշդերդ և զկոլս. զի ոչ ամենեքեան ծնեալք եմք առ այն գործ։ Համարիցին եթէ կրթեալ յայդ արուեստ՝ կարիցեն այնուհետև ուսել կամ ընդել հանդոյն այլոց, կամ նման նոցին հրաժարել յամենայն հեշտութենց։ Հարկ 'ի վերայ կայ հսկել, վաստակել, հեռանալ 'ի ծնողաց և 'ի բարեկամաց, լինել խաղալիկ մանկան վիրց, յամենայնի նկուն լինել 'ի հեռամտութեան պատուոյ և պաշտամանց յատեանս, միով բանիւ յամենայն գործառնութիւնս։ Քաջ զմտաւ ած զայս ամենայն, և ապա տես եթէ կամիցիս այսու օրինակաւ դնել զանդորրութիւն քո, զաղատութիւն և զանվեհերութիւն։ Ապա թէ ոչ՝ կրթեաց զհետ այլում գործոց, և մի՛ տղայաբար գործեր. և մի՛ լեցիս այսօր խմաստասէր, վաղիւ համարակալ, և 'ի միւսում աւուր

հաւատոր, և յետ այնր հաղարապետ
Իշխանին. զի չեն այսոքիկ համա-
ձայնք իրերաց։ Արժան է քեզ լի-
նել այր մի ևեթ, այր մի առեմ բա-
րի կամ չար. պարտ է քեզ ինամ
տանել այնմիկ՝ որ յանկաւոր ելցէ
մարմնոյդ. հարկ է քեզ նկրտել 'ի
տայցումն բարեաց նեղքնոց կամ
արտաքնոց. այսինքն է՝ հարկ է քեզ
տանալ զբարս խմաստասիրի և
կամ զառն սոսկականի։

46. Ոմն ջանայ տրնբուն լինել,
այլ ոմն ապարատեա զօրաց. իսկ ես
ինդրեմ համեստութիւն և պար-
կեշտութիւն, քանզի ազատ եմ և
բարեկամ աստուածոց, և հնազանդ
լինիմ նոցա բոլորով սրտիւ։ Պարտ
է ինձ ուրեմն ոչ մեծ ինչ համարել
զմարմին կամ զինչս, և զպատիւ,
ոչ զհամբաւ և ոչ զօտարոտի ինչ
իրս. զի դիցն կամք են անարդս հա-
մարել զայդպիսիս։ Զի եթէ կամք
ինչ էին նոցա՝ առնէին զդոսա ինձ
'ի բարիս. և զի ոչ այդպէս արարին՝
ապա չեն դոքա բարիք. և պարտ
է ինձ հնազանդել դիցն հրամանաց։

47. Զնք ոչ որոյ չկայէ ինքնաբոյս ինն դաղափար և ծանօթութիւն բարւոյ կամ չարի, վայելչի և անվայելի, արդարոյ և անարդարոյ, երջանկութեան և թշուառութեան, և պարտուց՝ կատարելոց կամ հեղգացելոց։ Իսկ արդ ուստի՞ կայէ այն զի յաճախ պատրին մարդիկ՝ երբ զառանձինն ինչ զգործոց դատաստան առնիցեն։ — Յայն սակս, որպէս 'ի վերոյ անդր ասացի, զի չարաչար վարեմք զհատարակաց ծանօթութիւնս մեր, և դատեմք զաղփիաղփուն և կանխակալ ինչ կարծեօք։ Ամենեքին առ հատարակ 'ի կիր առնուն զբառքս՝ դեղեցիկ, բարի, չար, լաւ, արդար, անարդար, մինչ չև ուսեալ քաջ և կշռակի 'ի վար արկանել զայնոսիկ. ասել ծնանին կագք և կռիւք և պատերազմունք։ Եւ ասեմ. «Արդար է այս». այլ ոչ ասէ. «Այդ անիրաւ է»։ Զի՞արդ միաբանել, կամ ո՞ր կանոն կայէ մեզ ուղիղ դատելոյ։ Վճարիցի արդեօք կարծեօք։ Այլ աւադիկ մեք երկոքեան և իւրաքան-

չիւր զիւր կարծիս ունի հակառակ։ Եւ դարձեալ զինքդ հնար ի՞նչ կարծեաց լինել դատաւոր անքոյթ։ Զի՞ ցե՞ն և յիմարաց՝ իւրեանց կարծիք։ Եւ սակայն հարկ 'ի վերայ կայ զի ի՞նչ ինչ կանոն անսխալ առ 'ի ճանաչել զճշմարտութիւն. քանզի անմարթ է զից թողուլ զմարդիկ խաղառ յանգիտութիւն պարտուց իւրեանց 'ի կենցաղավարելն։ Ելցուք ուրեմն 'ի խնդիր կանոնիս այսմ, որով կարեմք միայն ճողոպրել 'ի մերոց վրիպանաց, և բուժել զժպիրհոութիւն և զյիմարութիւն կարծեաց։ Եւ է կանոնս վերընծայել տեսակին զհանգամանս՝ զոր տամք սեռին, զի այսու աշխարհածանօթ և վկայեալ հանգամանօքս ուղղեսցուք զկանխակալ կարծիս մեր զմէն մի առանձնակի գործոց։ Օրինակ լիցի, ունիմք զդաղափար բարւոյ. և խնդիր է զհեշտութենէ, եթէ ի՞նչ բարի. քննեսցուք ընդ այսմ դաղափարի և 'ի նժարս նորին կշռեսցուք։ Եւ կշռեալ իմ նշանակօք բարւոյն՝ որ ենն կշիռք իմ, գտանեմ թէթև,

և 'ի բաց ընկենում. քանզի բարին հաստատուն լինն է և քաջ քաջ ծանրակշիռ:

48. Որպէս վաճառական ոչ մերժէ զդրամ զուտ և արքայական, նոյնպէս և հոգի ոչ մերժէ բնաւ զՀնմարիտ բարին: Ընդունի յաճախ և զկեղծեալ դրամն, բայց 'ի պատկերէ անտի իշխանին պատրեալ, անհմուտ գոլով 'ի ճանաչել զնարդաւանն:

49. Ո՞յր ինչ դրամն այս: — Տրայինոս: — Ընդունելի է ինձ և պահեմ իսկ զայն: — Ներոնի. — Մերժեմ զայն և դարշիմ: Այսպէս արա զբարեաց և զչարաց: Ո՞ ինչ դա: — Այր մի քաղցրահամբոյր, ընկերասէր, բարերար, համբերատար, մարդասէր: — Ընդունիմ զնա և առնեմ ինձ քաղաքակից, դրակից, բարեկամ, ընկերակից և հիւր: — Եւ ո՞ դա ինչ: Այրն որ զնմանութիւն լինն բերէ զՆերոնի, դժնեայ, չարագործ, անհաշտելի, և աննեղոյզ ամենեքին: — Հերքեմ ես զնա 'ի բաց: Եւ ընդէր ասացեր բնաւ

զնա մարդ։ Մարդ ոք գժնեայ, քի-
նախնդիր և ցասկոտ, չէ նա մարդ.
որպէս և ոչ խնձոր մոմակերտ՝ լոկ
խնձոր, զորոյ զձև և զգոյն ևեթ
ունի։

50. Խորհիս դու միայն բնակել
յապարանս, և խուռն բազմութիւն
ծառայից ունել զքեզ 'ի սպասու,
փերեւեալ մեծածախ հանդերձիւք,
դասս որսականաց ունել ընդ քեզ,
և երաժշտաց և դուսանաց պարս։
Նախանձիցիմ քեզ վասն այգոյիկ։
Այլ լոկ քո բարգաւաճեալ զբան
մատցդ. Ջանացար ստանալ ոսկեմիտ
կարծիս. կրթեցար զհետ ճշմար-
տութեան։ Եւ առ լմէ զբարիցիս ընդ իս
զի գերազանց եմ յիրս յորս դուն
անփոյթ եղեր։ — «Այլ իրդ այդ մե-
ծամեծար է և ծանրագին»։ Ազնիւ,
զի զգաս դու զայդ. — իսկ ո՞ արդե-
լուցու զքեզ կրթել զհետ նորին։
Փոխանակ որսականացդ, և երա-
ժշտաց և դուսանաց՝ արք իմաս-
տունք ակուռմբ առցեն զքեզ։ Ո՞վ ոք
առաւել քան զքեզ կարիցէ գտա-
նել պարտապ, գիրս և հրահանգիչս։

Արդ սկիզբն արա, ծախեա և տուր զդոյզն մի մասն ժամանակիդ 'ի մշակութիւն բանիդ։ Պարզաբար ասել, ընտրեա։ Եթէ յաւելուցուս անձնատուր լինել յարտաքինս և էթ, ուստիցիս արդարև ինչս և կարասիս անզուգականս և պայծառս քան զայլոց. այլ աղքատին բան քո այդպէս ամայի թողեալ՝ կացցէ մնասցէ նիւն, տխեղծ և աղտեղի։

51. Կորուստեր զինչս, զնաղ, զերաժշտութիւն և զհեշտալիս. և համարիս զու զայդ մեծ ինն կորուստ, և ոչ կարես միսիթարիլ։ Այլ յորժամ կորուստեր զհաւատարմութիւն, զպարկեշտութիւն, զքաղցրութիւն և զհամեստութիւն, ըզկորուստ սոցա ոչ ինչ համարիս։ Եւ սակայն արտաքին բարիք յօտար ինն և բռնագատեալ հարկէ կատարեցան 'ի մէնջ, զորս չունելն և ոչ կորուսանելն ամօթալի է։ Իսկ զսոսա զներքին բարիքս՝ առ մեզս մեր կորուսանեմք. և որպէս ամօթ և ցաւ է չունելն զնոսին, նոյնպէս ամօթ մեծ է և ցաւ անհնարին թէ ոք կորուսանիցէ։

52. Ոչ ոք կարէ լինել ապիրատ և մոլի առանց ինչ ստուգապէս կորուսանելոյ և վնասելոյ։

53. Բնական խիմն է և արդարացի՝ զի որ սրտի մտօք զհետ կրթիցի ի միք՝ յաջողեսցէ և 'ինամին, գերազանցելով զայլսովք՝ որոց չիցէ նոյն փոյթ։ Ամն զամենայն զկեանս իւր տքնի 'ի կուտել մթերել. ևեթ ինչս և յառաջել. այն ինչ յարուցեալ 'ի քնոյ՝ խորհի թէ զիարդ հնարեսցի շողոմն առնել 'պաշտօնէից իշխանին կամ գրանիան սիրելոյ, փարեալ քծնի առ նոքօք, փաղաքշի, և կաշառակուրծ ևս առնէ։ Յաղօթս իւրև'ի զոհս՝ ոչ այլ ինչ խնդրէ 'ի դից բայց եթէ հաճոյ լինել նոցա։ Յամենայն երեկոյի առնէ քննութիւն խղճի մտացն, յոր ինչ իրս թերի գտայ. զինչ արարի. զի՞ իւիք զոր պարտն է առնել՝ զանց արարի։ Սուտացայ արդեօք ասել տեառն խմուտ շողոմարար ինչ բան՝ ընդ որ հաճէրն։ Թուեաւ արդեօք յանխորհուրդս 'ի շրթանցս բան ճշմարտութեան՝ ընդ որ ոչն հաճէր։ Սիթէ մուտացայ զբ-

բուատեալ զԹերուԹիւնանորա, կամ գովել զանիրաւ ինչ կամ զվատԹաբ նորա գործ։ ԵԹէ ըստ գիպաց վրի-պեսցէ 'ի բերանոյն բան արժանաւոր առն բարւոյ և ազատի, քըրԹմընջէ, սորջանայ և կորուսեալ համարի զանձն։ Ահա այսպէս յառաջագէմ լինի նա, և մԹերէ ինչս։ Իսկ դու ոչ շողոմես ումեք. չհարկանիս 'ի քծինս, մշակես զոգիդ, և դուն գործես ստանալ ուղղախոհ կարծիս. քննուԹիւն խղճիդ յոյժ այլ-ազգ ինն է յառաջնոյն։ Հարցանես ցանձն քո. «ՄինԹէ արարի ապահոս զիւրիք որ անկ էր ճշմարիտ երջանկուԹեան, և հաճոյական դից։ Յանցեաց ինչ արդեօք բարեկամուԹեան, ընկերուԹեան և արդարուԹեան։ Արարի արդեօք զանց զոր արժան էր առնել առն լաւի»։ Այսպիսի խղճս հակառակս, զգացմունս ընդդիմակս և զանազանեալ ունելով ջանս, զմի՞ դժկամակիցիս եԹէ ոչ հաւասար նմա յաջողիցին քեզ ստացուածք ընչից. կամ զմի՞ չարակնիցես ընդ այն. մինչդեռ նա ան-

երկբայանալէս բնաւ իսկ ոչ նախան-
ձի ընդ քեզ։ — Այս են իրացդ
պատճառք. զի նա խորասուզեալ 'ի
կուրութեան և 'ի տգիտութեան՝ ա-
մենեւիմբ հաւանեալ է եթէ վայելէ
զառոյգ բարիս. իսկ դու տակաւին
աղօտ աղօտ լուսով, և զաղփաղփուն
'ի սկզբունս, ոչ բաւեաս քաջիկ տե-
սանել և հասու լինել եթէ երջան-
կութիւն 'ի քո կողմն է։

54. Զիք ինչ այնպէս յաճախ տե-
սանել որպէս աւագորեար որք կար-
ծեն զինքեանս հմուտս յամենայնի,
թէպէտ և 'ի յոյժ կարևորացն իսկ
գիտութենէ զուրկք են։ Եւ զի յըղ-
փացեալք են մեծութեամբ և չեն
խմիք կարօտ, կարծեն թէ և չիցէ ինչ
պակաս 'ինոցանէ։ Զայս ասէի յա-
ւուր միում միոյ 'ի գլխաւորաց նո-
ցին. «Հաճոյ ես յաչս իշխանին. ու-
նիս յանձանձիչս հզօրս, և դաշնա-
կիցս մեծամեծս. հաչակաւանուանդ
կարես օգնել բարեկամացդ, փնտռել
թշնամեաց։ — Եւ արդ ի՞նչ իւիք պա-
կաս ասեմ. Հարց ինձ։ — Կարևո-
րագոյնն և պիտանեագոյն 'ի ճշմարիտ

երջանկութիւն՝ պակասէ քեզ. և մինչև ցարդ զոր ոչն էր քեզ վայել՝ զայն արարեր. ահաւասիկ այս են ինքք կարևորքք։ Բնաւ գիտես իսկ ոչ թէ զինչ գիքն իցեն, և զինչ մարդս. ոչ գիտես զքնութիւն բարւոյ և չարի. և որ առաւել յասլշութիւն կրթիցէ զքեզ՝ այն է, զի չճանաչես և զանձն քո »։ Աւաղ, խուսափեա դու և ցասնուս ընդ իս զի այսպէս համարձակախօս լինիմ։ Զինչ չար արարի քեզ. ոչ ապաքէն կարիա-ռեմ քեզ զհայելին՝ որ երևեցու-ցանէ զքեզ որպէս և եսդ։

55. Աղնուականութիւն մարդոյն յառաքինութենէ և ոչ 'ի զարմէն է։ « Պատուականագոյն եմ քան զքեզ, զի հայրն իմ հիւպատ էր. ես արի-բուն եմ, և դու ոչինչ ես »։ Ո՛վ սի-րելի, եթէ էաք մեք երիվարք երի-կու, և ասէիր ինձ, « Հայրն իմ ե-րագընթաց էր քան զամենայն երի-վարս ժամանակին. և են իմ խար բազում և գարի շատ, և կազմածք շքեղ.» ասացեալ էր իմ ցքեզ. « Բա-րի է, այլ եկ ընթացուք »։ Միթէ

չեցէ՞ ինչ մարդում սեպհականա-
գոյն, որպէս և երիվարի՝ ընթացք
իւր յորմէ մարթիցէ Ճանաչել ըզ-
ձիրս նորին և կշռել զգինն։ Եւ
չեցէ՞ն այսպիսիք պարկեշտութիւն,
հաւատարմութիւն և արդարու-
թիւն։ Արդ եկ ցոյց ինձ զքեզ՝ ի վե-
րոյ լինելդ յայսոսիկ քան զիս. ցոյց
ինձ, թէ պիտանեգոյն քան զիս ի-
ցես իբրև մարդ։ Եթէ ասիցես,
«Գիտեմ զռընչալ, կարեմ աքսո-
ռել». ապա քեզ պատասխանի, զի
պանծաս ձրիւք որ սեպհական են
իշոյ և ձիոյ, այլ ոչ մարդոյ։

56. «Պրեսոր եմ յԵլլադայ»։ —
Դո՞ւ պրեսոր։ Եւ գիտիցես դատել.
ո՞ր բնաւ ուսար զայդ ուսումն։ —
«Վկայութեան գիր ունիմ ի Կեսա-
րու»։ — Իսկ եթէ Կեսար ապայր
քեզ հրովարտակ դատաստան առ-
նելոյ զերաժշտութենէ, որոյ ու-
սեալդ իսկ չէ և ոչ ընչանակ խա-
զիցն, զինչ արդեօք առնէիր, և առ
ինչ լինէր քեզ այն պիտանա-
ցու։ Այլ թողցուք զայդ, և հար-
ցիցս ևս զքեզ, թէ որո՞ւ օրինակաւ

մեր 'ի պաշտօնդ։ Ո՞ սատայաւ քեզ զայդ. զմի՞ ձեռն համբուրեցեր. կամ յորո՞յ գրան ոգար. զոր ո՞ւմ խնդեցեր կաշառս։ Որպիսի՞ նուաստութեամբք, որպիսի՞ անարգանօք կամ որո՞ւ սատութեամբ սատայար զոր զայդ։

87. Զրի ումեք չտայ ինչ օք։ Կամի՞ ամբառնալ 'ի պատիւ հիւպատոսական։ Հարկ է հեռատեսութիւն ունել, ապաչել, թախանձել, համբուրել զձեռս սորա կամ զնորա, տուայտիլ 'ի սեամն գրանց. գալ ընդ բաղուստ նուաստութի և գարշանս, և զօր ամենայն առաքել նրանոր պարգևս։ Եւ զի՞նչ ելեալ հիւպատան լինել։ — Տալ կրել առաջի իւր եպիսկոպսան խուրձս գաւազանաց, նստել եպիսկոպս կամ չորիցս անգամ 'ի բեմի, տալ խաղս և խրախճանս ժողովրդեան. ահաւասիկ ամենայն։ Իսկ առ 'ի լինել ազատ 'ի կրից և 'ի յուզմանց, առ 'ի ստանալ զանյողդողդութի և զմեծանձնութիւն, առ 'ի ննջել 'ի նընջելն, և հսկել 'ի հսկելն, առ լի-

նել անվիշտ և անեղկիւղ, զու և ոչ մի ինչ կամիցիս ասել. և ոչ առ փոքր մի բնաւ նեղիլ։ Զու ինքնին զատեսա զանձն քո եթէ ուռնիցիս իրաւունս։

58. Նախամեծար քան զքեզ ասարին զոք 'ի խնջոյս, կամ 'ի խորհրդեան կամ յայցելութեան։ Եթէ բարիք ինչ իցեն նախատարուութիւնքդ, զարա է քեզ խնդալ զի վիճակեցան ընկերի քում։ Իսկ եթէ չարիք, մի տրամեսջիր զի ա զատ իցես յայնցանէ։ Բայց զայս գիտասջիր զի առ 'ի սատանալ զայն որ ոչն կախի զմէնջ՝ անհնար է քեզ որ չառնես զայն ինչ զոր առնեն ընդունողք նոցին, մանաւանի նոցին գոլ։ Քանզի զնաթդ հնար է որում ոչն երբեք երթայ 'ի գուռն մեծի իշխանին՝ գտանել շնորհս հաւասար այնմիկ որ զոր ամենայն յառաջեն առ նա. սինամ որ ոչ զհետ երթայ նորա՝ յորժամ ելցէ ի տանէ, ընդ այնմ որ ընկերակից լինի նմին. կամ այնմ որ ոչ շողոմէ նմին և ոչ գովէ, ընդ այնմիկ որ անդադար շողոքորթէ և գովեսաս բարբառի։ Անիրաւ

ուրեմն էս և անյագ, եթէ չտալով
ինչ յայնցանէ որովք գնեալ լինին
շնորհքդ՝ կամիցիս ստանալ ձրի։
Քանզի վաճառն հազար 'ի շուկայի.
— Լումայի միոյ։ — Եթէ դրացին քո
տայ զլումայն և գնէ զհազարն, և
դու չտաս ինչ և դառնաս առանց
հազարի, մի համարիցիս նուազ ինչ
քան զնա ունել. զի եթէ նա ունի
զհազարն, ունիս և դու զլումայդ
զոր ոչ էտուր։ Այսպէս և ստաս-
նօր։ Ոչ հրաւիրեցար դու 'ի խըն-
ջոյս։ — Սակայն և ոչ էտուր կոչ-
նատեառն զգինս խնջոյիցն՝ որով
վաճառէին։ Եւ է գինն գովեստ ինչ,
կամ այցելութիւն, կամ հաճոյք
ինչ և կամ ծառայութիւն։ Տուր ու-
րեմն զգինան՝ եթէ ստանալ կամի-
ցիս։ Իսկ եթէ առանց գնոյ կամիցիս
ունել վաճառս, անյագ էս և պան-
դոյր։ Այլ չիցէ քեզ ինչ որ փոխա-
նակիցէ զխնջոյն՝ յորում չգտաւ
քեզ տեղի։ Է քո արդարև ինչ որ
առաւել արժէ քան զխնջոյն. այն
է չգովէն զնա յակամայս, և ոչ
աւ դրան նորա հանդուրժել՝ գո-

ռոզութեան և ժպիտութեան նո-
ին։

59. Եթէ սոգտանս ինչ համա-
ինչիս նախախնամութեան, մուտ 'ի
ներքս 'ի քեզ, և անբասիր արասցես
զնա։ Ի՞նչ իւիք չարագործն յօրանայ-
ցէ առաւել քան զքեզ։ Մինթէ մե-
ծութեամբքն։ Այլ քննեա քաջ
զներքինն նորա, տես որպիսի կեանս
վարէ, և ծանիր համարիցիս նմանել
նմա։ Զայս ասէի յեռանդն՝ ցերի-
տասարդ ոմն, որ դժկամակ լինէր
ընդ բարեբաստութիւն Փիլոսոփո-
գեայ։ «Մինթէ կամիցի՞ս ասեմ, նին-
ջել ընդ Սուրայի»։ — Օ՛ն և օն ա-
ռասցեն ինձ դիք, պատասխանեաց,
լաւ եւս իցէ ինձ մեռանել։ Արդ ընդ-
էր ուրեմն դժկամակիցիս եթէ Փի-
լոսոփոսդ ընդունիցի զգինս վաճա-
ռոյն որ առ Սուրայի. կամ ընդէր
գրիցես զնա բարեբաստիկ վասն ի-
ռաց յորոց խորշիսն և գարշիս դու։
Ի՞նչ զրկեաց զմեզ նախախնամու-
թիւն՝ 'ի տալն զընտրելագոյնն յիւ-
րոց տրիցս։ Զիցէ՞ արդեօք իմաստու-
թիւն պատուական քան զՃոխու-

թիւնս։ Մի արդ քրիստոնէք, զի ու-
նիս զպատուականագոյնն։

60. Իբրև զի զաչացու ես և անի-
բաւ։ Կարես դու ինքն ինչման լի-
նել, և կամիս բիւրուց իրաց ներ-
քոյ անկանել որք չեն քեզ բնիկք,
և որք օտարացուցանեն զքեզ 'ի
սոյգ բարւոյդ։

61. Ոչ կարես լինել ոչ Հերա-
կլէս և ոչ Թէսէոս, առ 'ի սրբել
զերկիր 'ի հրեշից. այլ դոյ քեզ հը-
նար զնմանութիւն բերելոյ նոցին,
սրբելով զանձնդ 'ի հրեշից անսի-
որք 'ի ներքս 'ի քեզ են։ Ի ներքս 'ի
սրտիդ բուներալ կան կինձն և ա-
ռիւծ և վիշապն բազմագլխեան, աղէ
նուաճեա զդոսա։ Փոխան Պրոկուս-
տեայ և Սկիրոնի, ընկճեա զցաւս,
զերկիւղ, զընչաքաղցութիւն, զնա-
խանձ, զչարակամութիւն, զագա-
հութիւն, զմեղկութիւն և զշուայ-
տութիւն։ Միակ հնար նուաճելոյ
զհրեշքդ՝ այս է, ունել յանդիման
աչաց զդիան, յարիւ 'ինոսին, նուի-
րել նոցա զանձն, և նոցին ևեթ հրա-
մանաց հպատակ կալ։

62. Թօմաքիեաց ուրեմն զլուծդ, և ազատեալ՝ի գերութենէ՝ ամբարձ զաչս քո յերկինս, և ասա ցԱ. տուածն քո. Հրամայեա ինձ որպէս և հաճոյ լցէ քեզ, և ոչ մերժեցիս յամենայնէ զոր ինչ կամիցիս առաքել ինձ, և արդարացուցիս զկամս քո առ ամենայն մարդիկ:

63. Փոխան շնթելոյ առ ծերունի ձոխ, յաճախեաց առ իմաստուն: Այս ընտանութիւն չածէ երբէք զքեզ շառագունանս, և ոչ բնաւ ունայնաձեռն ելցես դու անտի: Եթէ ինձ ոչ հաւատաս, աղէ փորձեա. զի առանց ամօթոյ է փորձդ այդ:

64. Զքոյն քաջ պահեա, և օտարին մի ցանկար. և ոչ ինչ ոչ լցի քեզ խոչընդոտն առ'ի լինելոյ երջանիկ,

65. Յիշեա զի պարտ է քեզ վարել'ի կենցաղումս որպէս թէ'ի խնջոյս: Սկուտեղ ինչ բերաւ քեզ առաջի: Զգեա զձեռն քո վայելչապէս և սուր համեստաբար: Բառնայցեն'ի բաց. — Մի քուռն հար-

կանիցես զնմանէ։ Տակաւին ոչ մա-
ռուցաւ քեզ. — մի ձգտիր փարիս-
քանօք, այլ ապատեա մինչև հասցէ
առ քեզ։ Այսպէս վարեսջիր ընդ
մանկուանդ, ընդ կնոջ, ընդ պաշտա-
մունս և ընդ պատիւս և ընդ մեծու-
թիւնս, և եղիցիս արժանի զկոյս ան-
գամ սեղանակից լինելոյ։ Իսկ եթէ
յառաջի գնել զոցին քեզ՝ զու ոչ
առնուցուս, այլ և խոտիցես, յայն-
ժամ ոչ միայն սեղանակից լիցիս
զկոյս, այլ և ընկերակից և թագա-
ւիչ. քանզի այդու օրինակաւ Դիո-
գինէս և Հերակլիդէս և այլք ոմանք
յիրաւի դերաշխարհիկք եղեն, և
ընդ ամենայն աշխարհ այդպէս ծա-
նուցան։

66. Սիրէր Սոկրատ զմանկուն
լուր, այլ սիրէր ազատօրէն, իբրև
մարդ որ յիշեցէ եթէ զդիս արժան
է սիրել 'ի վերայ քան զամենայն։ Եւ
վասն այսորիկ հարցաւ և հատաց մինչ
երբեք անարժան առն բարեաց, ոչ
առաջի դատաւորաց ի պաշտպանել
անձինն, ոչ մինչ ատենակալն էր,
և ոչ իսկ 'ի պատերազմի գոլով։ Իսկ

մեզ՝ ամենայն ինչ պատճառք հա-
մարեալ են նուաստութեան և վա-
տութեան. և որդի և մայր և եղ-
բայր։ Այլ չէր պարտ չէր արժան
մեզ երբեք 'ի թշուառութիւն կոր-
ծանել վասն այլոց. այլ ընդհա-
կառակն 'ի դէպ էր վարել զամե-
նայն յերջանկութիւն մեր, և զաս-
տուածն գլխովին՝ որք յերանու-
թիւն հաստատեցին զմեզ։

67. Մի և վասն միոյ իրիք ասի-
ցես. «Կորուսի զայն». այլ ասա.
«Հատուցի»։ — Մեռաւ որդին
քո։ — Հատուցեր զայն։ Կի՞ն քո
մեռաւ։ Հատուցեր զայն։ Զերկիր
կալուածոցդ բարձի՞ն 'ի քէն։ Դար-
ձեալ և այն փոխատրութիւն է։
Այլ ապառում՞ ոք էր որ զքեզն կո-
ղոպտեաց։ Եւ զի՞ փոյթ քեզ եթէ
այսու կամ այնու ձեռամբ եբարձ
'ի քէն տուողն զտուրսն։ Յորչափ
'ի ձեռս քոյ է՝ վարեա զայն 'ի ոչիս
քո իբրև զոչ քոյ, այլ որպէս ան-
ցաւորք որք վարեցին անօթոք պան-
դոկի։

68. Համարեաց թէ վարէր քա-

ղաք ըստ սկզբանց Եպիկուրեայ, և
ահա ամենայն ինչ վեր 'ի վայր շըր-
ջէր, ամենայն ինչ կերպարանափոխ
լինէր. անդ ոչ ամուսնութիւնք, ոչ
դատաւորք, ոչ վարժարանք, ոչ
ուղղութիւն, և ոչ հրահանգք: Սր-
տատահման լեցին անտի բարեպաշ-
տութիւն և սրբութիւն, արդարու-
թիւն և համեստութիւն: Անդ ա-
մենայն ոք զհետ կրթիցի վաստակ
վարկածոց որք կորուստ բերեն քա-
ղաքաց, և որոց կանայք անգամ
և կարի իսկ շքեղեալք՝ հանդուրժել
ոչ կարիցեն: Իսկ 'ի քաղաքի որոյ
վարչութիւն ելեալ ըստ սկզբանց բա-
նին Թելադրելոյ, ամենայն ինչ բա-
ղեկարգ ամենայն ինչ ուղիղ եղիցի.
Անդ ամենայն ոք ողջախոհ կար-
ծեաց զհետ երթիցէ. ամենայն ա-
ռաքինութիւնք 'ի պատուի կալ-
ցին, արդարութիւն ծաղկեսցի, քա-
ղաքական տեսչութիւն ամենեքին
անսագիւտ եղիցի. անդ ամուս-
նասցին և ծնցին որդիս, կրթիցեն
զնոսին, և ծառայեսցեն ատուա-
ծոց: Անդ այր գոհ լեցի ընդ կին

քեր, և ոչ ևս ցանկացի կնոջ ընկերի. շատացի ընչիք իւրովք, և ոչ ակն դիցէ այլոցն: Միով բանիւ անդ ամենայն պարտք լիով կատարեցին, և ամենայն զօդք միութեան անխզելի կացցեն:

69. Անտուադիկ և երրորդ խմն. «Կրիտոն, անցցուք ընդ այս անլեհեր սրտիւ, զի դիք ընդ դա առաջնորդեն մեզ, և կոչեն: Անիտոս և Մելիտոս կարեն զիս 'ի մահ մատնել, այլ չար առնել՝ ոչ»:

70. Կա՛ց հատատուն 'ի հրահանգս այսպիսեաց խմատից, և հպատակ կաց որպէս օրինաց՝ զորոց և զփոքրումբ իսկ զանց առնել ամպարշտութիւն ի՛ցէ. և մի՛ ինչ զչարիցիս ընդ ատացեալսն զքէն. զի այդ չէ ընդ քոյով իշխանութեամբ:

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Ընչաւէրութեան։

71. Զամ ընչից իւրաքանչիւր՝ մարմնոյն է, որպէս չամ կոշկի՝ ոտն։ Եթէ զհետ երթիցես այսմ կանոնի, կալցես հանապազ չամ արդարակ. իսկ եթէ զանցանիցես՝ կորուսեալ է քեզ, և հարկ հասցէ գահավէժ լինել յանդունդս նմին անյատակս։ Այսպէս և 'ի կոշկին, եթէ գամ մի զանցանիցես զչամու ոտիցդ, նախ ունիցիս կոշիկս ոսկեզօծս, ապա ծիրանեայս, և յետոյ ուրեմն և սաղնէգործեալս խնդրիցես. զի անցելոյն ըստ չամի՝ չիք չամ։

72. Ընչաւէտ լինել չես ձեռնհաս, այլ կարես լինել երջանիկ։ Ճոխութիւնք ինքնին չեն միշտ բարիք, այլ սատուգիւ են միշտ սակաւաւոքք. իսկ երջանկութիւն որ յիմաստութենէ անտի՝ անանցական է։

73. Կեանք որ ընդ բաղդին սահեալ գնան՝ նման են ջրոցն հեղեղա-

ալ, որ հանապազ պղտորք են և տղմուտ, փնտասկար, սարսռասէր, վրդովալից և անցաւոր. իսկ հոգի որ առաքինութեամբք անանցի՝ նըման է աղբեր որ բղխիցէ հանապազ ջուր ակամակիտ, վճիտ, առողջարար և առատաբուղխ, և որ ոչ բնաւ ցամաքիցի։

74. Սատցար քեզ առատապէս ինչս գեղեցիկս, անօթս ունիս բազումս ոսկիս և արծաթիս. փարթամ ես. բայց զուրկ ես 'ի լաւագունէն. որ է հատատութիւնն, հնազանդելն հրամանաց դից, անդորրութիւն, և ազատութիւն յամենայն հոգոց և յերկեղէ։ Իսկ ես թէպէտ և յետին յաղքատաց կցեմ, ընչեղագոյն եմ քան զքեզ։ Զէ՞ ինձ փոյթ թէ չունիցիմ պաշտպան յարքունիս, թէ ստպտանիցէ ոք զիս առ իշխանին. ես ոչ զոք շոշմեմ։ Եւ ահա զայս ունիմ փոխանակ ամենայն ընչից։ Ունիս դու քեզ անօթս ոսկիս և արծաթեայս, այլ ամենայն խորհուրդք քո և փափաքք և միտումն քո համայն և ողջոյն իսկ գործք քո՝ կաւեղէնք են։

75. Այնքան գժուարին է մեծատանց սառնալ խմաստութիւն, որքան խմաստնոց՝ զինչս:

76. Ոչ եթէ աղքատութիւնն ինչ վշտացուցանէ, այլ խղճն. այսպէս ոչ ընչեղութիւն թափէ զանձն յերկիւղէ՝ այլ բան:

77. Եթէ տեսանէիր զիժ կամ զօձ յոսկեղէն տփի՝ միթէ առաւելաշնորհ ինն համարէիր զնա. միթէ ոչ զնոյն կրէիր երկիւղ վասն ապիրատ և թունալից բնութեան նորին: Զնոյն խորհեաց և վասն անզգամին՝ եթէ տեսանիցես զնա լցեալ մեծութեամբք:

78. Մի զարդարեր զտուն քո պատկերօք և գունագեղ նկարուք, այլ համակ փայլեցո՛ անդ զխմաստութիւն և զչափաւորութիւն: Պատկերքն խաբեբայք են 'ի զբօսանս և 'ի պատրանս աչաց. իսկ խմաստութիւնն զարդ է հաստատուն, իրական և տեւական:

79. Ճոխ և բազմապայծառ կապտեաք զարդարել զտուն՝ սէր է շռայլութեան. այլ պճնել զհոգին

լաւութեամբ առատամտութեամբ և արդարութեամբ՝ հոյակապ և բարեբարոյ յարդարել զմարդ։

80. Մեկ մանուկ զձեռն յամուն նեղաբերան յորում կայցեն կաղին և թուղ, և առնու լեարուն, և ոչ կարելով ճողոպրել զձեռնն առլցեալ՝ սկսանի լալ։ — «Որդեակ իմ, թող զկէսն, և շատ իսկ լեաձեռն հանցես»։ Այսպիսի ումն էս դու տղայ. բազմաց փափաքիս և ոչ կարես սահանալ. փոքու իմիք ցանկա, և դայցես։

81. Անհանճար է ասել. Մեծատուն եմ քան զքեզ, ուրեմն և լաւագոյն քան զքեզ. Ճոխաբան եմ քան զքեզ, ապա և արդոյ քան զքեզ։ Եթէ կամիս խօսել իմաստնաբար՝ ասա. Ընչեղ եմ քան զքեզ. ուրեմն և ինչք իմ առաւել են քան զքոյդ. Ճարտարախօս եմ, ուրեմն և սացուածն իմ արդոյ քան ըզքոյդ։ Սակայն դու ոչ բարիս ունիս և ոչ սացուած ընտիր։

82. Եթէ արիանիցէ ոք 'ի հրապարակի թուղ կամ կաղին, ոգորին

մանկունք ընդ իրեարս առ 'ի կորզել զայն. իսկ արք անցանեն անփոյթ։ Վարչութիւնս գաւառաց քաշեսեն. ահա և այդ մանկանց։ Պատիւք պրեատրականք և հիւպատաստութիւնք. ահա և այդ մանկանց։ Համարիմ ես զայդոսիկ թուղ և կալին. յորոց եթէ անկցի ըստ դիպաց 'ի վերայ հանդերձիս՝ առնում և ուտեմ. այս չափ ինչ արժէ և ոչ աւելի. այլ ոչ ընդդձեալ ընդդեցից զայն, և ոչ վասն այնորիկ արմնկցի մղեցից զոք։

83. Յիշեա զի ընչեղք և բռնաւորք և թագաւորք ընծային 'ի հանդէս ողբերգական. իսկ աղքատ ըստնաւ ոչ երևի 'ի թատեր ուրեք, բայց եթէ 'ի պարս երդեցկաց և կաքաւաց։ Թագաւորքն բարեյաջողք հանդիսանան 'ի սիզբան անդ. ամենայն ինչ զուարթ է զնոքօք, ամենևին պատուական և մեծարեալք. քաղինք կանգնին նոցա, և յարդարին արքունիք նոցին պատիւք և նաչոտիւք. այլ յաւարտ երկրորդի և ֆամ չորրորդի արարուածոյ թա-

տերն՝ կարդան նոքա. «Ո՞Կիւթեր-
ոն, ընդէ՞ր ընկալար զիս»:

84. Աստուածք թողուն զիս յաղ-
քատութեան, 'ի նուաստութեան
և 'ի գերութեան. այլ ոչ եթէ առ
'ի քէն ինչ վրիժուց. միթէ անար-
գեցէ՞ տէր զծառայ հաւատարիմ:
Եւ ոչ իսկ առ անփութութեան. զի
և փոքրագունից անգամ ինամ տա-
նին: Այլ կամին զի հրահանգեցայց.
կամին նկատել, եթէ ի՞նչ նոցա
մարտիկ առաքինի և քաղաքացի
բարի. կամին դարձեալ զի կայցեմ
ես վկայ նոցունց առ մարդիկ:

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս արժանաւորութեան և հասարա-
կութեան:

85. Կա՛լ դու քեզ յայսմ հեռէ
սեփհական ինչ օրինակ վարուց, և
կանոնս ուրուք վարեցիս հանապազ
և յառաջնութեան և 'ի ժողովս:

86. Մի ծիծաղիր, ոչ յերկար, ոչ յաճախ և ոչ քրքիջ բարձեալ։

87. Զգոյշ լեր ջուտել արտաքոյ, և փախիր 'ի հասարակաց կոչնոց. այլ եթէ դէպք ինչ անսովորք հարկ առնիցեն քեզ զանցանել յիրիդ, ընդ ագոյնս ուշ կալջիր՝ մի խոտորել զհետ բարուց և սովորութեանց ռամկին. զայս գիտասջիր, զի թէ ոք 'ի կոչնականացն պէղծ իցէ. և որ բազմին առ նմա, և նման նմին գործէ, ընդ նմին և աղտեղի, թէպէտ և առանձինն ունէր զմաքրութիւն։

88. Զպէտս մարմնականս այնքան ուրկ 'ի վար, որքան հոգւոյն պէտք պահանջիցեն. այսինքն են կերակուր, հանգերձք, բնակարան, ապաստաւորք, և այլն. և 'ի բաց թողեալ զամենայն մեղկութիւն և զընդդուեալն հեթեթանս։

89. Յաճախագոյնս լուռ կաց, և կամ զկարևորսն ասել խօսեաց, և այն կարճառօտ բանիւք։ Դուն ուրիշք հարկ լիցի մեզ խօսել եթէ ըստ պատեհի ժամանակին ասել խօսեա-

ցուք. այլ մի՛ բնաւ անկցուք զա-
նարդ և զգռեհիկ բանիւք. մի՛ խո-
սեսցուք մի՛ զդուպարաց սուսերա-
մարտից, մի՛ զձիընթացից, մի՛ զըմբըշ-
ամարտից, և մի՛ զըմպելոյ և զու-
տելոյ, որք 'ի կարգի ռամկական խո-
սից են: Եւ 'ի վեր քան զամենայն,
մի՛ խոսեսցուք զուսմեքէ 'ի պարսաւ
կամ 'ի գովեսա, և կամ առ 'ի բաղ-
դատելոյ ընդ միմեանս:

90. Եթէ կարես շրջեա քո բա-
նիւքդ զնոսս բարեկամացդ 'ի պար-
կեշտ և 'ի յարմարաւոր ինչ նրա-
խակ եթէ գոցիս ընդ օտարս, կամ
'ի լռութեան:

91. Ըստ բազմապատիկ բնու-
թեանց վիճակիդ՝ հարկ է քեզ և
զնրբաքանչիւր զպարտան կատարել:
Մարդ ես, և աշխարհաքաղաքացի,
տատուածոց զաւակ, և հարազատ
ամենայն մարդկան: Եւ յետ այսո-
ցիկ, ըստ այլ տեսչութեան՝ 'ի դա-
սուէ ծերակուտին ես, կամ յայլ
ինչ պատուի, երիտասարդ ես կամ
աւագ հասակաւ, որդի ես, կամ
հայր և ամուսին: Տես թէ զինչ ինչ

այս ամենայն անուանք 'ի քէն պա-
հանջեցեն, և դուն գործեա չառ-
նել անպատիւ և ոչ զմի։

92. Զունիս ապրուստ, և հար-
ցանես զիս, եթէ առ 'ի սառանալ՝ ար-
ժա՞ն լցէ քեզ նուաստանալ մին-
չև յանարգագոյն պաշտամունս,
մինչև մատուցանել կռիւ առ տէրդ։
Զի՞նչ առացից քեզ։ Են որք համա-
ին թէ լաւ ևս լցէ հարկանել և
զայդ սպաս, քան սովամահ լինել.
և են որք յանտանելի ունին զայդ։
Արդ մի՛ զիս ինչ՝ այլ զքեզ ինքն
հարցցես վասն այդր բանի. գիտե-
լով քաջ զչափ անձինդ։

93. Մարդիկ ըստ հաճոյից իւ-
րեանց բարձրագոյն կամ նուաս-
տագոյն գին հատանեն զանձանց, և
անձնիւր արժէ ըստ իւրում վար-
կին. գին հա՛ա և դու զքէն կամ իբրև
զաղատէ և կամ իբրև զսարկէ. 'ի
քո ձեռս է այդ։

94. Կամիս դու նմանել բազմ-
ամբոխոյ մարդութէ, որպէս թէ
մի զգեստուդ նմանի այլոց ամենայն
թելոց նորին. իսկ ես նմանել կա-

միմ ժամանակներին ծերությունց, որ ոչ միայն փայլ զփայլն հարկանէ, այլ և զամենայն յոր անկցի՝ գեղեցիկ յարդարէ։ Արդ ընդէր խրատ տաս ինձ լինել հանգոյն այլոց։ Եղէց ուրեմն իբրև զթեղն, և ոչ որպէս զծիրանին։

95. Գեղեցիկ ասաց Ադրիպպինոս. «Զեղէց բնաւ խոչընդակն ինձ»։

96. Մինչև ցերբ գանգաղեցես համարել զքեզ արժանաւոր մեծամեծ իրաց, և այնպէս կազմել զքեզ, զի մի ևս արատեցես զուղիղ բանն։ Ընկալար պատուէրս որոց արժան էր հաւան լինել, և եղեր. և արդ ո՞ւմ այլ վարժանքեան ակն կալեալ մնաս, զի ուղղեցես զանձն 'ի գալատեան նորին։ Զես այսուհետև տղայ մի մանուկ, այլ այր կատարեալ։ Եթէ յանհոգս կաս, եթէ վայրապար զբօսնուս, եթէ յաճախես առաջադրութիւնս, և զոր ամենայն որոշեցես օր խնամ տանելոյ անձինդ, և ահա մինչև եկեալ քո զդուշացեալ իմիք՝ վրէպ գոցես յուղղութեանց, և կացցես մնայցես

'ի տգիտութեան քում և 'ի կեանս և յետ մահու։ Հապա, արիացիր և համարեաց զքեզ արժանի յայսմ օրէ, և առյապա կեալ իբրև զմարդ. և իբրև զմարդ՝ որոյ զարդացեալ իսկ ի՞նչ սակաւիկ մի 'ի զգօնութեան. և որ ինչ թուի քեզ գեղեցիկ և լաւ՝ լիցի քեզ օրէնք անդ ընդ ժելի։ Եւ եթէ յանդիման լինիցի քեզ ինչ տարժանելի կամ հաճոյական, դերապանծ կամ անարդ, համարեաց զասպարէզ բացեալ, զոլիմպիական մրցանան պատրաստեալ, և չգուցէ ժամանակ յապաղելոյ. և թէ 'ի վայրկեան մի և 'ի գործ մի միակ արիական կամ անարի՝ հասատաեալ կայցէ զարդացումն քո կամ կորուսա։ Այսպուն Սոկրատ ժամանեաց 'ի կատարելութիւն, վարելով զամենայն դէպս 'ի զարդացումն անձին, և զբանին միայն զհետ երթալով։ Եւ դու թէպէտ և ոչ լիցես հաւասար Սոկրատայ, սակայն կեաց որպէս թէ նըմանն նմա ունիցիս լինել։

97. Որպէս լապաերք վառեալք

'ի նաւահանգիստս՝ նպաստ մեծ լինին նաւաց մոլորելոց, այսպէս և այր բարի յամբոխեալ քաղաքի մեծապէս օժանդակէ քաղաքակցաց իւրոց։

98. Եթէ յաղնուաւոհմ տանէ ելեալ, այնպէս յօրանաս պերճանաս ազնուականութեամբդ՝ մինչև անդադար զայնմանէ խօսել և տաղտուկ բերել ամենեցուն. այլ զաստուած ունելով քեզ 'ի հայր և զնոյն 'ի ներքս 'ի քեզ, մուտանաս զայսպիսի զազնուականութիւն, անդիտանաս ուստի ծագեցար, և որպիսի լինչ կրես։ Զայսր յիշատակ արժան էր քեզ հանապազ ունել 'ի մտի յամենայն գործս կենաց քոց։ Սակայն տակայ տաստջիր գուցանձն քո. «Աստուած տեղծ զիս. նա յիս 'ի ներքս է, զնա կրեմ ամենայն ուրեք. զիաբդ աղտեղեցեալ զնա պիղծ խորհրդովք, անարդ և գարշելի գործովք, և վատթար ըղձիւք»։

99. Եթէ տուեալ էր քեզ դեց 'ի պահպանութիւն որք մի, խնամ

տանէիր նմին, և ոչ տայիր թոյլ ա-
պականել զայնպիսի աւանդ պա-
տուական։ Եւ արդ զքեզ ինքն եառուն
նոքա 'ի պահ անձինդ տեղով. «Ոչ
զոք գոտաք հաւատարմագոյն և խան-
դակաթ 'ի խնամս անձինդ, որպէս
զքեզ ինքն. պահեա դու մեզ զգա-
ւակս զայս որպէս և էն ըստ բնու-
թեանն. պահպանեսջիր զդա ողջա-
խոհ, հաւատարիմ, վեհանձն և ա-
բիասիրտ, անվրդով և անշփոթ 'ի
կրից»։ Եւ դու յանհոգս կաս զան-
ձնէդ։ Որպիսի՞ դրժանք. որպիսի՞
եղեռն։

100. Խղճիցես արդեօք դործել
անհամեստս առաջի անդրեաց կամ
պատկերի դից. այլ նոքա տեսա-
նեն զքեզ և լսեն, և ոչ շառագու-
նիս յանդիման նոցին ածել զմտաւ-
խորհուրդս աղտեղիս, և դործել
անպարկեշտս, յորոց դարշին մեր-
ժին և վշտանան խակ։ Ո՞ թշնամիդ
դից։ Ո՞վ վատ, որ զբնութիւնդ մո-
ռանայս։

101. Եթէ յանդրեաց Փիդիա-
ասյ էիր Աթենաս կամ Արամազդ

և գոյր քեզ զգացումն ինչ, պատ-
կառ կայիր՝ չառնել ինչ անարժան
արուեստաւորին և քեզ ինքնին. և
զամենայն ապախտ արարեալ չառ-
նուիր յանձն երևել 'ի ձև անվայե-
լուչ՝ որով գեղեցկութիւնդ ծանա-
կէր։ Իսկ արդ ոչ ինչ ընաւ հոգալով
թէ յոր կերպարանս կայցես առա-
ջի դիցն, թշնամանես զձեռնն որ
հատեաց զքեզ։ Եւ յայսր վերայ
որպիսի՛ խաւիր է ընդ այն և ընդ այս
Ճարտարապետ, ընդ գործ և ընդ
գործ։

102. Եթէ մատնէր ոք զմարմին
քո 'ի կամս ուսմ և դիպէր, խոժո-
ռէիր ապաքէն մեծապէս. իսկ յոր-
ժամ դու ինքնին մատն լինիս հոգ-
ւոյդ՝ ուսմ և պատահէ, որպէս զի
թշնամանագիր եղեալ վեր 'ի վայր
յուզիցէ և խռովիցէ զդա, չամաչիս
չշիկնիս ընդ այդ։

103. Յորժամ առնիցես գործ՝
զոր գիտիցես քեզ պարտս, մի՛
խորշիր առնել և 'ի տես մարդկան,
թէ և այլ ընդ այլոց դատիցէ զքեզ
ռամիկն։ Եթէ չար է գործն, մի՛ եր-

բէք առներ. իսկ եթէ բարի՝ ընդէր զանգիտիցես յայնցանէ՝ որք յանի-բաւի և վայրապար դատափետ առ-նիցեն զքեզ։

104. Տիկին ոմն հռոմայեցի կա-մէր առաքել գումար մեծ արծա-թոյ առ այլ տիկին բարեկամ իւր, Գրատիլլա անուն, զոր Գոմեսիա-նու տարագրեալ էր. և յասել ու-րուն ցնա եթէ Գոմեսիանոս ձը-գեսցէ զձեռն իւր յարծաթդ և գը-բաւեսցէ յարքունիս, ասէ տիկինն. «Ոչ է ինձ փոյթ զայդմանէ, առա-ւել կամիմ թէ նա յափշտակէր, քան թէ ես ոչ առաքէի»։

105. Ո՞վ է այր անպարտելի։— Այն որ կայ անյողդողդ 'ի կայի իւ-րում, և զոր ոչ մի ինչ՝ որ չկցէ ընդ մերով իշխանութեամբ՝ ոչ կարէ դրդուեցուցանել. զայնպիսի այր համարիմ ես ախոյեան։ Տա-բաւ նա զառաջին յաղթութիւնն. ասկայցէ արդեօք և երկրորդին։ Զդէմ կալաւ զարծաթոյ. կացցէ արդեօք և ընդդէմ կնոջ գեղեցկի։ Եկաց իսկ հակառակ յօր հասա-

բակի և 'ի ժողովի. մինչ ժուժայ-
ցէ՞ կալ հակառակ և մնայնակ և 'ի
գիշերի։ Դիմակալեսցէ՞ փառաց,
զբաղարտութեանց, գովեսակց և մա-
հուան. ժուժկալեսցէ՞ ամենայն վըր-
դովմանց և համայն տխրութեանց։
Պարզաբար ասել, լեցի՞ նա յաղթա-
կան և յանուրջն անգամ։ Ահա
զայսպիսի ոք կամիմ ես տեսանել։

106. Հերակլէս մինչ լինէր Հե-
րակլէս առանց առիւծուց և վա-
գերց և վարազուց և յելուզակաց,
և այլոցն ամենայն հրեշից, յորոց
սրբեաց զերկիր. և եթէ ոչ էին
հրեշքս այսոքիկ, նմա նմանք պիտանա-
ցու էին ջլապինդ բազուկք նորա
և կորովն և քաջասրտութիւնն և
անկուն համբերութիւնն, և այլ
ամենայն առաքինութիւնքն։

107. Քաջալերեաց ուրեմն, քա-
ջիկ զմտաւ ած զամենայն զօրու-
թիւնս ոչք տուեալն քեզ, և պա-
տրաստեաց զանձն անվեհեր առ ա-
մենայն հանդէս փորձութեանց. քա-
ջազէն վառեալ կաս, և բաւական
գոս 'ի հանել զարդս նորանորս՝ 'ի
մեծամեծաց անգամ արկածից։

108. Մինչեւ թէ քո յանդիման լեալ առեն դատաւորաց, լեր յանդիման առեն արդարութեան:

109. Հրաժարեա յերդմանց յամենայնի և ամենուրեք, եթէ 'ի քո ձեռս է այս. թէ ոչ, որքան և թողացուսցեն քեզ առ այն դէպքն:

110. «Ո՞չ շողոմիցես առ այս ինչ անուն այր հզօր»: Թո՛ղ թէ նա հզօր որքան և կամեսցի, միթէ հաւրկ ինչ թէ ինձ, կամ յայդ ծընոյ զի շնթիցեմ նմա: Միթէ ո՞չ ունիցիմ ես զոք 'ի հաճել, ապաս հարկանել և հնազանդել: Աստուածոյն ասեմ և որոց կանն նոցին առընթեր:

111. Յորժամ հարկ հասցէ քեզ խօսակից լինել ընդ ումեք, մանաւանդ ընդ գլխաւորի քաղաքացւոյ, դիր 'ի մտի առնել զոր առնէին արդեօք Սոկրատ կամ Զենոն յայդ դէպս: Այսուիկ ոչ շփոթեսցիս ընդ նոսա յարժանն պարտուց քոց, և վարեսցես 'ի ճահ զամենայն որ յանդիման լիցի քեզ:

112. Յորժամ գնայցես շուք մա-

ասուցանել առն հզօրի, հաւանեցո զքեզ թէ չկցէ նա 'ի տան այլ արգելեալ կայցէ։ փակեցի քեզ զուռնն, և կամ ոչ հայիցի նա յերեսս քո։ Իսկ եթէ յեա այսր ամենայնի՝ պարտք քո բուռն առնիցեն քեզ երթալ, համբեր ամենայնի որ դիպեսցի քեզ, և մի երբէք մտաբերեր ասել կամ խորհել թէ առ այս չարժէր աշխատութիւնդ։ քանզի այս բարբառ է ռամկին, և՝ առն՝ յոր մեծապէս ազդիցեն իրք արտաքինք։

113. Ի սովորական կենակցութիւնս զգոյշ լեր քաջ չխօսելոյ անպատեհս և յերկարապոյն զարիւաւիան գործոց քոց և զվանգաց յորոց զերծար։ զի թէ քեզ այնչափ հաճոյական թուիցին բանքդ, բայց ոչ և լսողացն։

114. Քաջ զգոյշ լեր ևս չերևել ծաղրածու հացկատակ։ քան զի վատշուէր բերուին բարուց է այդ, և դիւրագայթ քայլ ոտին, որ յանզգաստից ձգեսցէ զքեզ 'ի յուսի և 'ի գուեհիկ սովորութիւնս, և կորուսցես զյարգ և զվարկ զոր ունէիրդ յաչս այլոց։

115. Վատանդ մեծ է և միջամուխ լինել՝ ի զբոյցս խենեշս. և եթէ դըատցիս զու յայսպիսի կաճառս խօսողաց, մի՛ զանց առներ՝ ըստ պատեհին՝ յանդիմանել զայսպիսեացն խօսող. ապա թէ ոչ գոնեայ լուռ լեր, և ծանո՛ ի շառագնելոյ ճակատուդ և ի խստութենէ կերպարանացդ զհաճութիւն քո ընդ այնպիսի խօսս:

116. Յերթալդ ի տես իշխանաւորի կամ վեհագոյն պետի՝ այլազգունիս, զգողանի հարկանիս և այլ յայլմէ լինիս: — «Զիարդ արդեօք ընկալցի զիս, զիարդ լուիցէ բանից իմոց»: Սարսուկ անարդ. ընկալցինա զքեզ, և լուիցէ քեզ որպէս զիարդ և պատշաճ թուիցի ինքեան. նմա լիցի չար եթէ անարգապէս ընկալցի զայր իմաստուն. ինքնին վշտանայցէ ընդ այն: Մի՛թէ քեզ ինչ անկ ի՞ցէ կրել զատգնապ թերութեանց այլոց: — «Այլ ո՞րպէս զիարդ խօսիցիմ ընդ նմա»: — Խօսեաց որպէս և ախորժես: — «Երկնչիմ թէ խառվեցայց»: — Բարեւ. և ո՞չ դիտիցես

խօսել զգաստութեամբ, խոհեմ և վայելուչ ազատութեամբ։ Վասն էր երկնչեցիս յառնէ միոջէ։ Զենոն ոչ երկնչէր բնաւ յԱնախիմենեայ, այլ Անախիմենոս երկնչէր 'ի Զենոնէ։ Մինթէ խառնէր Սոկրատ մինչ խօսէրն առ բռնաւորն, առ գաստաւորս իւր։ Մինթէ այլայլէր Դիոգենէս 'ի խօսելն ընդ Աղեքսանդրի, ընդ Փիլիպպեայ, ընդ Ծուլահէնս, և ընդ տեառն իւրում յորմէ գնեցաւն։

117. Յիշեա զքաջասրտութիւնն Լատերանու։ Ներոնի առաքեալ առ նա զԵպափրոդիտէս զաղատադրեալն իւր 'ի հարցափորձ գաւակցութեանն յոր գտեալ էր նորա, զայս ասեթ պատասխանեաց նմա. «Եթէ ունիցիմ ինչ ասել, ասացից զայն տեառն քում։ — Ի բանտ արկցիս։ — Եւ համրկ ինչ եցէ զի ելով քարշեցիմ անդր։ — Տաւրագիր արտասահման արասցեն ըզքեզ։ — Եւ զի՞նչ խոչընդակն գուցէ ինձ՝ զի ոչ երթայց անդր խրատամիտ, յուսապատարագ և գոհ ընդ պայման վիճակի իմոյ։ — Ի մահ

մատնիցիս։ — Եւ պարտ է ինձ մեռանել արտանջելով և հեծեծելով։ — Այսա ինձ զգաղտնիսն։ — Ոչ ասացից բնաւ ամենևին, զի ինձ անկ է այդ։ — Արկէք զդա 'ի շղթայս։ — Զի՞նչ ասես, բարեկամ. դո՞ւ զիս 'ի շղթայս արկանել սպառնաս. խաբիս. զարուն իմ միայն կաշկանդեացես 'ի շղթայսն, այլ կամք իմ յիս մնասցեն ազատ, զոր և Արամազդ անդամ ոչ կարէ բառնալ յինէն։ — Այժմ իսկ բարձից 'ի քէն զգլուխ քո։ — Ե՞րբ ասացեալ էր իմ ցքեզ եթէ իմ միայն պարանոցս գտեալ էր շնորհս ոչ կառափելոյ»։ Արդիւնքն հաւատարմացուցին զարիական բանսն։ Առեալ տարան զՎատերան 'ի պատուհաս մահու. և իբրև առաջին հարուած դահճին տկար գտաւ 'ի հատանել զգլուխն, զոյգն ինչ խառնվեցաւ, այլ անդէն քաջալերեալ՝ ձգեաց զպարանոց իւր անյողդողդ արութեամբ։

118. Եթէ էաք բանտարկեալք և 'ի դատ մահու վասն քրիստոնեան

ինչ յանցանաց, միթէ հանդուրժէ՞ք լսել եթէ ոք ասէրն. «Կամիցի՞ք լսել զերգս իմ զոր յօրինեցի»։ Բարեկամդ իմ, տարաժամ եկիր շփոթել զիս. կարևորագոյնք կան ինձ առաջի։ Ո՞չ գիտիցես զի վաղիւն մնայ ինձ 'ի մահ դատապարտիլ։ Սակայն Սոկրատ'ի բանաի էր, և աւուրբ յառաջ քան զդատապարտութիւն յօրինէր նուագս։

119. Կամի՞ս տեսանել այր շատացեալ ամենայնիւ, որ կամիցի հանդիպել իրաց որպէս և հանդիպեցին։ Աւագիկ Ագրիպպինոս։ Եկին աղդաւնեալնմա եթէ ծերակոյտն ժողովեալ է՝ 'ի դատապարտել զքեզ։ Ասաց նա. «Քաջ է, և ես երթամ հանդերձել առ բաղանիս՝ որպէս սովորն եմ»։ Այն ինչ եղեալ'ի բաղանեաց, և ահա ծանուցին եթէ դատապարտեցար։ — Ի մա՞հ եթէ յաքսո՞ր։ — Յաքսորս։ — Եւ ինչ՞ք իմ գրաւեցան յաքսունիս։ — Ո՞չ, թողան քեզ դոքին։ — Զրաւեցուք ուրեմն անյապաղ։ Գնացուք Ճաշել յԱրիկիա. մարթ է և

անտաներ Ճաշել մեզ բարեոք որպէս և 'ի Հռովմս »։

120. Հարցանէր յաւուր միում Փլորոս զԱգրիպպինոս. « Երթայց արդեօք ընդ Ներոնէն 'ի Թաարն, և կաքաւեցիս ընդ նմա »։ — Երթ։ — Ասէ Փլորոս. « Իսկ ընդէր և գու ոչ գաս »։ — Կրկնեաց Ագրիպպինոս. Քանզի չէ հաս եմ ընտրեալ 'ի մտի։

121. Աւաղս այս վեհ խորագոյնս քանգակեալ էր 'ի սրտի Պրիսկոսի Հելուիդեայ, զոր և ազնուաբար կատարեաց։ Յաւուր միում առաքեաց Վեսպասիանոս զեկոյց նմա չգալ յատեան Ծերակուտին։ « Եւ պատասխանի Հելուիդիոս. « Իշխան է նա բառնալ յինէն զպաշտօնս իմ, այլ ես երթայց 'ի Ծերակոյտն՝ ցորչափ եմս առենակալ։ — Եթէ գայցես ես, ասէ ցնա իշխանն, լուռ �թ կացցես։ — Մի հարցաներ զկարծիս իմ, ասէ, և ես լուռ կացցի։ — Այլ 'ի տեսանել իմոյմ զքեզ անդէն՝ բուռն է ինձ չհարցանել զքոյ կարծիս։ — Եւ ինձ,

կրկնեաց Հելուիդիոս, բուռն է չա-
սել զխորհուրդս իմ։ — Իսկ եթէ
ասացես, 'ի մահ վարեմ զքեզ։ —
Եւ ես երբ ասացի քեզ թէ ան-
մահ լցեմ։ Արասցուք իւրաքանչիւր
ոք զոր մարթ է մեզ առնել. դու
մատնեսցես զիս 'ի մահ, և ես ան-
տրտունջ տարայց մահու »։ Զի՞նչ
շահեցաւ այսու Հելուիդիոս միայ-
նակ գոլով։ Եւ ես հարցկոյ զքեզ,
զի՞նչ շահիցի ծիրանին որ կայ միայ-
նակ'ի վերայ պատմուճանին. ոչ՞նէ
զսա, և վայելուչ ցուցանէ, և նա-
խանձուկս արկանէ ունելոյ նման
նմին։

122. « Յաքսորս դատապարտե-
ցին զքեզ »։ — Իցէ՞ ուրեք վայր
անդրագոյն քան զաշխարհ՝ յոր կա-
րասցեն զիս վտարել։ Որ և դնա-
ցից, միթէ՞ ոչ գտանիցեմ երկինս,
արեգակն և լուսին և աստեղս։ Մի-
թէ՞ ոչ տեսից ես անդ երազս, և
հմայս։ Կամ լցէ՞ ինչ արգել յան-
դելանելոյ ընդ իս։

123. Փոխանակ ամենայն սփո-
փանաց յոր վայելէիրդ 'ի հայրե-

նիսն քո և յորոց զրկեցարդ, փո-
խանակեսջիր զայս. զնորհելն՝ թէ
հպատակիս արդ զիցն կամաց, և
կատարես որ ինչ պարան է առն
բարւոյ և զգօնի։ Զի՞նչ մեծ օգուտ
քան զայն կայցէ՝ թէ կարիցես ա-
սել ցանձն քո. Յայսմ պահու ի-
մաստասէրքդ ձառեն զմեծամեծ ի-
րաց 'ի վարժարանս իւրեանց, բա-
ցատրեն նոքա զպարտս առն լաւի,
և ես ահա գործեմ զնոյնս։ Զոր նո-
քա բացայայտեն՝ առաքինութիւնք
իմ են այնոքիկ. ներբողեն զիս յան-
գէտս. քանզի զոր գովեն և ուսու-
ցանեն՝ զայն 'ի լրումն ածեմ ես։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Աղաչութեան։

124. Ասաց ցիս ոմն յիմար.
«Քանզի աղաչ այնոքէ որում ըստ
ցանկութեան յաջողեսցի ամենայն,
կամիմ զի և ըստ իմոց հաճոյից հան-
դիպեսցի բնաւ»։ Բաբէ, բարե-

կամդ, յիմարութիւն և ազատութիւն ոչ երբեք լծակցին։ Ազատութիւն ոչ միայն զի չքնաղ է, այլ և կարի քաջ բանաւոր. և չինք ինչ այնպէս անհեթեթ և անբանական՝ որպէս քան զյախուռն փափաքել, և կամել զի ամենայն ինչ դիպեսցի ըստ մերոց խորհրդոց։ Յորժամ զանուն Դիոնի գրելոց իցեմ՝ հարկ է գրել ոչ ըստ իմոյ ինչ յօժարութեան, այլ որպէս և էին, անիրաւոն պահեալ ցնշանախեց անդամ։ Այսպէս և յամենայն արուեստս և 'ի դիտութիւնս։ Եւ դու կամիցիր զի որ քան զամենայն ինչ վեհագոյն է և մեծարոյ՝ ազատութիւնն ասեմ՝ անկցի ընդ մտահաճոյ և այլանդակ կամօք։ Քաւ քեզ, բարեկամ. ազատութիւն է կամելն զի հանդիպեսցին իրք ոչ ըստ հաճոյիցդ, այլ որպէս և պատահելոյն իցեն։

125. Կարծես երջանիկ լինել՝ եթէ հասցես որում ցանկասն։ Խաբիս։ Ի ընուել փափաքանացդ՝ անդրէն իսկոյն նոյն նեղութիւնք պատեսցեն զքեզ, նոյն դառնութիւնք, նոյն

զղուանք, նոյն երկիւղք և նոյն խղճք։ Երջանկութիւն՝ ոչ է ստանալն և վայելել, այլ ոչն փափաքել. զի այս իսկ է ազատն լինել։

126. Եռուն լինձ գլուք զազատութիւն, և ճանաչեմ զպատուիրանս նոցին։ Ապա ուրեմն չկարէ ոք այսուհետև արկանել զիս 'ի սարկութիւն, զի է լինձ առընթեր ազատարարն կարևոր, և դատաւորքն ալեոտանիք մերձ կան։

127. Իցէ՞ ոք որ կամիցի վարել զկեանն յոմիրս, յանիրաւութիւն, յանգոյ ցնորս, յարհաւիրս, յանձկութիւն, միշտ նախանձաբեկ, յար քինախնդիր, ցանկ տրտնջող, հանապազ ահաբեկ, անդադար յուսատպատիր, և յարտաժամ 'ի զանգիտութեան։ Ապաքէն և ոչ ոք. չկայ ոք ուրեմն եղեռնագործ որ զամենայն զոր և չկամի՝ ոչ առնիցէ. ապա չկայ ապիրատ որ իցէ ազատ։

128. Որ նուաճեալ կայ ընդ ձեռամբ մարդկան, կանխագոյն նուաճեալ էր ընդ իրօք։

129. Որպէս գոյն լինչ զբաղումն

նաւուղղի կարէ կորուստ հասուցանել նաւու, նոյնպէս և գոյն ինչ անիրաւութիւն առ 'ի մէնջ կամ խուն ինչ զառանցանքն տայ մեզ կորուսանել զամենայն յաւաջադիմութիւն մեր յուսման խնամոտութէ։ Արդ զգոյշ կացցուք. զի զոր պարտիմքս պահել՝ ծանրագնի է քան զնաւ ակաղձուն ոսկւով։ Համեստութիւն ասեմ, հաւատարմութիւն, հաստատութիւն, հնազանդութիւն գնցն հրամանաց, արհամարհելն ըզցաւս, զկիրս և զերկիւղ. պարզապար ասել Ճշմարիտն ազատութիւն։

130. Առ խեղաթիւր ինչ ազատութիւն՝ գիմագրաւ լինին մարդիկ 'ի մեծամեծ վտանգս, ծուլամիտ լինին, գարտհոս առնեն զանձինս 'ի բարձրաբերձ աշտարակաց։ Եղեն և քաղաքք որ կամաւ հրով ծախեցան գլխովին։ Եւ գու առ Ճշմարիտն և անքոյթ և անկողոպտելին ազատութիւն՝ ոչ ինչ ունիցես փոյթ, և ոչ սակաւիկ մի աշխատ լինիցես։

131. Եթէ զմարմինս իմ սիրիցեմ, եթէ զառաձանիցիմ զընչիւք, կո-

ընայց, և ստրուկ եղէց. ահա ծա-
նուցի զգերիչս իմ:

132. Մերժեա 'ի քէն 'ի բաց
զնղձս և զերկիւղ, և ոչ կայցէ 'ի վե-
րայ քո բանաւոր:

133. Յիշեա զի ոչ միայն տենչ պա-
տուոյ, փառաց և Ճոխութեանց գե-
րիս և ստրուկս առնեն զմեզ, այլ և
դիւրասիրութիւն, հեշտութիւն և հե-
տաքնին ուղևորութիւնք. միով բանիւ,
ամենայն իրք արտաքինք՝ որ ինչ և
իցեն՝ գերեն զմեզ, յորժամ պա-
տուական համարիմք զնոսին: Ճըշ-
մարիտ իշխող իւրաքանչիւր ումեք
'ի մէնջ նա է՝ որ կարողն է տալ կամ
բառնալ 'ի մէնջ զոր ինչ կամիմքս և
կամ ոչն կամիմք: Ապա ամենայն
մարդ որ կամիցի ազատ լինել՝ մի
խնդրեսցէ և մի խուսափեսցէ յա-
մենայնէ որ ընդ այլոց իշխանու-
թեամբ է, ապա թէ ոչ գերեսցի 'ի
նոցունց:

134. Մի զանգիտեր, և ոչ ոք
կարասցէ ահ արկանել կամ զար-
հուրեցուցանել զքեզ. որպէս ոչ
երկնչի երիվար յերիվարէ, կամ մե-

զու 'ի մեզուէ։ Ո՞չ խմանաս զի խղճք քո և երկիւղդ՝ նոքին խակ էն պահանորդք զոր տեսրք քո կարդեալ էն 'ի սրտիդ դղեկի՝ առ 'ի նկուն առնելոյ զքեզ։ Հալածեա զպահանորդսդ, տիրեա դարձեալ քոում դղեկին, և լեցիս ազատ։

135. Են փոքրունք և էն մեծամեծ սորուկք։ Փոքրունք էն որ անձնամատն լինին վասն չնչենոց իրաց, ընթրեաց ասեմ, բնակարանի և դոյզն ինչ սպասու. խակ մեծամեծքն՝ որք դերի վարին վասն հիւսպատասուութեան, և գաւառաց վարչութեան։ Տեսանես արս որոց առաջի կրեն տապարս և խրճուն. սոքա սորբկապոյնք էն քան զառաջինսն։

136. Առ 'ի դատել զոք թէ լցէ ազատ, մի՛ ընդ մեծապատուութիւնս ինչ նորա հայեցիս. քանզի որքան բարձրագոյն է պատուով, այնքան նուաստ դերութի։ «Այլ, ասացես, տեսանեմ մարդիկ որ զամենայն ըստ հաճոյս իւրեանց գործեն»։ Ճաշ է. այլ հաւատսի ասեմ քեզ զի գործ է այդ սարկի որ զա-

ուրս ինչ վայելեցէ զչնորհս սա-
տուռնական ոճնից, և ծառայի՝ ո-
րոյ տէր հեռացեալ ելցէ։ Համբեր
ոճնիցն անցանելոյ և տեսանն դառ-
նալոյ, և ապա տեսցես զնա։ «Ո՞
ելցէ տէր նորա»։ — Ամենայն որ կա-
րիցէ տալ նմա կամ բառնալ՝ ինամա-
նէ զյանկալին նորա։

137. Զկամիցիս լինել 'ի Թիւս
գերեաց։ Խորտակեա զշղթայսդ,
զերծո զանձնդ, մի նախանձիր և մի
զանգիտեր։ Արիստիդէս, Եպամի-
նոնդաս և Լիւկուրգոս, մին «արդ-
ար», միւսն «ազատարար», և եր-
րորդն «ատուած» կոչեցան. ոչ զի
ընչեղք և տեարք տարիոց բազմաց
էին, այլ զի Թէպէտ և աղքատք՝
յազատութիւն հանին զԵլլադա։

138. Ասէր ինձ ոմն յաւագորե-
ցոյն, որ պանծայ լինել ազատ և
ինքնիշխան. «Զիա՛րդ, ոմ դու խնամ-
տասէրդ գձուձ, ժպրհիս ասել ինձ
գերի, որոյ նախնիքն կացին ա-
զատք, և ես ինքն 'ի ծերակուտէն
եմ, կացեալ եմ հիւպատոս, և
մտերիմ եմ իշխանին։ — Մեծդ

առեւնակալ, ցոյց ինձ եթէ և նախ-
նիքն քո չկացին 'ի նմին տարը-
կութեան յորում դուդ այժմիկ։
Այլ հաստատեա թէ աղնուաբարոյք
էին նոքա. սակայն դու վատ ես,
շահախնդիր, և վերհերոտ։ Նոքա
ժուժկալք էին, իսկ դու կեաս զա-
զիր անառակութեամբ։ — «Զի՞նչ
ճեռասցէ այդ ազատութեան»։ —
Բազմապատիկ իսկ. միթէ ազատու-
թի՞ւն կոչեցեա առնել զամենայն զոր
ոչն կամիս։ — «Բայց ես զամենայն
զոր կամիմն առնեմ. և ոչ ոք կարէ
բռնադատել զիս, բաց 'ի կայսերէ,
տեառնէ իմմէ, որ տէր է և բոլո-
րից»։ — Բդեաճլիս մեծ, ահա կոր-
զեցի 'ի բերանոյ քումմէ զայդ խոս-
տովանութիւն, թէ գոյ քեզ տէր
որ կարիցէ բռնադատել զքեզ։ Ուրէ
նա աշխարհաց իշխեցող. սակայն և
այդու իսկ մնայ քեզ ողորմելի միսի-
թարութիւն լինելոյ տարուկ 'ի տան
մեծի և 'ի միջի բիւրաւոր տարկաց։

139. Հասեր 'ի հիւպատոսականն
պատիւ և կարգեցար գաւառապետ։
— Յումմէ։ — Ի Փելիկիոնէ։ — Ես

կեալ իսկ ոչ կամէի եթէ հարկ էր ինձ կեալ 'ի շնորհս անուան Փէլի-կիոնի, և հանդուրժել գուռզու�թեան նորա և սարկական ժպրհութեան։ Ֆանզի քաջ գիտեմ ես, թէ զի՞նչ ցցէ սարուակ որ համարի զանձն երջանիկ, և կուրացեալ է բախտիւ։ — «Իսկ դու ուրեմն ազատ ամենևին ցցէս», ասասցես ինձ։ Ոչ. այլ ջանամ լինել. տակաւին չև է իմ հասեալ. դեռ չժուժեմ հայել անընդոստ 'ի տեարս իմ. հարեալ եմ տակաւին 'ի մարմին իմ, և թէպէտ հաշմեալ իսկ է անդամոք, ցանկամ պահպանել զայն. ոչ ժըխտեմ ահա զթերութիւնս իմ։ Այլ թէ կամիս ցուցից քեզ ստուգիւ զայր ոք ազատ. և է դա Դիոգինէս։ — «Զի՞արդ եղև նա այնպէս ազատ»։ — Ֆանզի եհատ զամենայն կապանս՝ որովք մարթ էր գերութեան վարակել զնա. անջատեալ էր յամենայնէ, յամենայնէ մեկուսացեալ, և ոչ ինչ ոչ ունէր իւր։ Եթէ խընդրէիր զինչն տայր քեզ. եթէ զոսն, տայր զայն. եթէ զմարմինն՝ տայր և

զայն. բայց կարի յոյժ յարեալ կապեալ էր 'ի գիս, և չէր յետնեալ քան զոք 'ի սպասու և 'ի պատուի, վերհագուն ալեային։ Ահաւասիկ պատճառք աղատութեանն նորա։— «Այլ, ասես դու, այդ օրինակ առն միոյ առանձնոյ է, որոյ չգոյր ինչ յարելոյ 'ի սէր աշխարհի»։— Կա՛ մին ուրեմն զօրինակ առն որ ոչ էր միայնակ։ Սոկրատայ էին կին և որդիք, և չէր նուազ ազատ քան զՊիոդինէս, քանզի հանգոյն նմին զամենայն ինչ արկեալ էր ընդ իշխանութեամբ օրինաց և հնազանդութեան պատշաճելոյ առ օրէնս։

140. Աղատագրեցէր զատրուկ քո. խակ դու ազատարարդ՝ ի՞նչ ինքնին ազատ. միթէ չի՞նչ դու դերի արծաթոյ քում, կնոջդ, դստերդ, բռնաւորի և յետին ծառայի բռնաւորին։

141. Ամենեքին զոգցես վարեմք կեանս հանգոյն գերեաց փախստականաց օրք 'ի տեսարանս. որոց մեծապէս աքանչելի երևին սեթևեթանք խաղուցն. հրաշանան ընդ

դերասանս ողբերգութեանն. այլ միշտ 'ի տագնապի կան, յայս կոյս յայնկոյս հայեն. և եթէ յոր-ջորջեցէ ոք զանուն տերանց իւ-րեանց, անդէն զահի հարեալ և խոյս տան: Սոցին նման եմք և մեք. հիանամք ընդ հրաշալիս բնութեան, և յափշութիւն կրթիմք. այլ հա-նապազ 'ի յոյզս կամք. և եթէ ա-նուանիցեն զտէր մեր, ահա անդէն կորեաք: Եւ ո՞ւր ցէ տէրն: Ոչ մարդ ոք. քանզի մարդ մարդոյ ոչ է կա-րող լինել տէր. այլ մահ և կեանք, հեշտութիւնք և ցաւք, տնանկու-թիւն և մեծութիւն: Եթէ Կեսար ինքնին յանդիման եղցէ ինձ առանց այսոցիկ ընթերակայից, տեսցես զիս անյողդողդ. իսկ եթէ եկեալ նորա թիկնապահքն որոտալով, շանթե-լով և սպառնալով, և ես շտուցեալ երկնչիցիմ, ոչ ապաքէն եղէ ծառայ փախստականն որ ետես զտէր իւր: Այլ թէ ոչ երկեայց 'ի սոցունց, ահա ուրեմն 'ի կատարեալ ազա-տութեան կամ, և չիք իմ այլ տէր բայց յինէն:

142. Բարեոք յոյժ ասաց Դիոգինէս, եթէ կամիս պահել զազատութիւն, յամենայն ժամ պատրաստ լեր 'ի մեռանել անխռով։

143. Նոյն ինքն Դիոգինէս գրէր առ արքայն Պարսից. «Ոչ ես կարող վարել զԱթենացիս 'ի սարկութիւն, որպէս և ոչ նուաճել զձկունս։ Դիւրագոյն ինչ ձկան կեալ յերկարագոյն արտաքոյ ջրոյ քան Աթենացւոյ 'ի գերութեան»։

144. Զի՞նչ է որ ահաւոր գործէ զբռնաւորն։ — Դռնապահքն և թիկնապահքն սուսերակիրք և տիգաւորք։ Այլ եթէ մանուկ ոք մերձեսցի 'ի նոսա՝ երկիւղ և ոչ մի կրէ 'ի նոցանէ։ — Էր վասն։ — Զի անդէտ է վտանգաց։ Իսկ քեզ անկ է ճանաչել զայն և արհամարհել։

145. Ասաց ցիս բռնաւոր ոմն. «Տէր եմ, և ամենայնի կարող»։ — Բաբէ. և զի՞նչ բնաւ կարիցես։ Կարես տալ քեզ հանճար բարի։ Կարես բառնալ յինէն զազատութիւնս իմ։ Զի՞նչ կարիցես դու ուրեմն։ Զի ցես 'ի նաւի ընդ ձեռամբ նաւապե-

տին. և 'ի կառս քում չկցես ընդ կշ-
խանուութեամբ կառավարին։ — «Ա-
մենայն ոք առ հասարակ շողոմեն
զկս»։ — Եւ առնիցեն քեզ զայդ
իբրև մարդոյ։ Յոյց ինձ զմի ոք որ հա-
մարիցի զքեզ այդպիսի, որ կամիցի
նմանել քեզ, որ խնդրիցէ աշակերտ-
ել քեզ՝ որպէս Սոկրատայ։ —
«Այլ կարեմ ընդ կառային հանել
քո»։ — Արդար ասես. քանզի ոչ յի-
շեցի թէ պարտ էր շողոմել քեզ որ-
պէս ճեասաբեր ատառուածոց, և
մատուցանել զոհս՝ որպէս ջերման
տենդի։ Մինթէ ոչ ետ կանգնեալ
և նմին բագին 'ի Հռովմ. իսկ դու ար-
ժանաւոր քան զնա ես, զի և չարա-
գործ քան զնա։ Այլ եթէ թիկնա-
պահք քո և համոյն պերճանք ահ
արկցեն և պակուսցեն զվատթար
սինքքորն, այլ զկս ոչ խռովեցուս-
ցես բնաւ. յանձնէ և ոչ յայլմէ ու-
մեքէ զանգիտեմ ես։ Ի զուր է քեզ
սպառնալդ ինձ. դիտես, զի ազատ
եմ։ — «Դո՞ւ ազատ, և զինարդ»։ —
Նոյն ինքն ատառուածպետականն ա-
զատապրեաց զկս։ Կարծիցես եթէ

թողուցու նա զաւակի իւրում անկանել ընդ բռամբ քով։ Իշխան ես դիակաս այսմիկ, ա՛ռ զդա. բայց չեք քեզ իշխանութիւն՝ի վերայ իմ։

146. Ուսուցանեն իմաստասէրք եթէ ազատ է մարդ։ Ուսուցանեն ուրեմն անարգել զիշխանութիւն կայսերս։ — Ոչ. ոչ ոք յիմաստասէրաց ուսուցանէ հպատակաց վտարանչել՝ի տեարց իւրեանց, և ոչ կատարել յիշխանութենէ նորա զանկըն նմին։ Ահա մարմին իմ, ահա ինչք իմ, ահա հաւքաւ իմ, ահա ազգատոհմն իմ. թողեալ յինէն քեզ զայսոսիկ. և եթէ լուիցես թէ ուսուցանեմ զոք պահել զայդոսիկ՝ թէ կամիս և թէ ոչ՝ սպան զիս, զի ապստամբեցայ։ Ոչ այդպիսի ինչ ուսուցանեմ ես մարդկան. այլ պահել զապատուութիւն կարծեաց իւրեանց, զոր ասուածն շնորհեաց նոցա։

147. Մարմնոյ գերութիւն՝ բախտին արդասիք են, իսկ հոգւոյ գերութիւն՝ նեղդործութիւն ախտից։ Եթէ ոք ազատ ելցէ մարմնով, և հո-

դեռնէն կապեալ և կաշկանդեալ, գե-
ր է նա. իսկ որ ազատն է հոգեւոր,
թէպէտ և շղթայակապ պարանեալ
ի՛նչ՝ 'ի կառարեալ ազատութեան
կայ։ Մահ լուծանէ զգերութիւն
մարմնական. այլ զհոգւոյ գերու-
թիւն՝ առաքինութիւնն միայն ջնջէ։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս ուսուցչոյ և երդնէր։

148. Առաջին գիտելիք այս էն,
թէ գոյ Աստուած, և վարէ զամե-
նայն ինամակալութեամբ իւրով. և
թէ ոչ միայն գործք մեր՝ այլ և խոր-
հուրդք մեր և շարժմունք ոչ ծած-
կին 'ինմանէ։ Յետ այնորիկ արժան
է քննել թէ զինչ բնութիւն ի՛նչ նո-
րա։ Եւ իբրև 'ի վերայ հասցէ ոք
բնութեան նորին՝ հարկաւորապէս
որ կամիցին հաճոյանալ նմա և հնա-
զանդել՝ գուն գործեսցէ նմանող
լինել նմին. և եղիցի ազատ, հաւա-
տարիմ, բարերար, գթած և վեհ-

անձն։ Այսպա ուրեմն ամենայն խորհուրդք քո և բանք և գործք, լեցին գործք և բանք և խորհուրդք առն՝ որ կրթեսցի 'ի նմանութիւն Աստուծոյ։

149. Ի գիշերի գոլով'ի սենեկիդ, և դուռնդ սմրափակ, և լոյսն անցուցեալ, զգոյշ լեր չասել թէ միայնակ եմ։ Քանզի չես դու միայն։

150. Որպիսի՞ ինչ լցէ բնութիւն աստուածութեանն։ — Իմացակցութիւն, գիտութիւն, կարգ և բան։ Այսու կարես ճանաչել թէ որպիսի ինչ լցէ բնութիւն քումդ Ճշմարիտ լաւութեան, որ 'ի նմա եղեալ գտանի։

151. Գիտեա զի զլուխ և հիմն կրօնից է ունել կարծիս ողջախոհս և ուղիղս զգից, զի են և սիրեն ըղխնամս իւրեանց'ի վերայ ամենեցուն, կառավարեն զաշխարհս զայս իմաստութեամբ և արդարութեամբ։ Եթէ կեաս դու յաշխարհի առ 'ի հնազանդել նոցին, 'ի համարել բարի որ ինչ և դիպեսցի, և հաւանել ամենմատադիր և յօժար կամօք որ-

պէս ընդ գործս ամենաբարւոյ և ամենիմաստ նախախնամութեան։ Զայսօրինակ ոչ տրտնջիցես բնաւ ղգից և ոչ բողոք հարցես թէ անխնամ թողուցուն զքեզ։ Այլ անհնար է քեզ ունել տյասպիսի միտս՝ եթէ ոչ հրաժարիցես յամենայնէ՝ որ չէ ընդ մերով իշխանութեամբ, և հաւատայցես եթէ բարիք քո և չարիք կախին զքէն. քանզի եթէ առնուցուս ինչ իբրև բարի կամ չար յօտարոտի իրացս, ապա հարկ անհրաժեշտ լիցի քեզ 'ի վերսկել քում 'ի ցանկալեացդ և կամ յըմբռնիլդ յորմէ խիթայիրն՝ բողոքել և անարգել զայնոսիկ որք պատճառք եղեն տղիսիցդ։ Քանզի ամենայն կենդանի 'ի բնէ ունի զգարշելն և խոյս տալ յիրաց որ չար և ինաստակար թուիցին նմա կամ որ պատճառք նոցին լիցին, և սիրել և ընդունել զհետ ամենայնի որ թուիցին օգտակար և բարի, և որ զայն պատճառիցէ։ Անհնար է ուրեմն զի որ վերաւորիցի յիմէքէ՝ հաճեսցի ընդ այն որ եդ զվերան. յորմէ զհետ

դայ թէ ոչ ոք ուրախ լինի և հաճի ընդ չարիս իւր։ Վասն այսորիկ որդի նախատէ և սոգոտանէ զհայրն՝ եթէ չառնիցէ նա զինքն հաղորդ կարծեցեալոյն բարեաց։ Այսուրիկ թշնամիք ոխերիմ եղեն Եռէոկլէս և Պոլինիկէս. քանզի համարէին զգահն իբրև բարի գերագոյն. այսուրիկ երկրագործ, նաւուղիղ և վաճառական անիծանեն զդիս. յայս սակս և ոչք կորուսանեն զկանայս և զմանկունս իւրեանց՝ քրթմնջեն և գանգատին. քանզի ուր օգտակարութիւն է՝ անդ է և բարեպաշտութիւն։ Վասն այսորիկ ամենայն մարդ որոյ փոյթ ևցէ ուղղել ըստ սահմանեալ կարգաց՝ զհաճոյս իւր և զանհաճոյս, ջանայ սածել և աճեցուցանել զեռանդն կրօնից։

152. Արժան է ամենեցուն՝ի զոհս և՝ի ճոնիս և՝ի քաւութիւնս երթալ զհետ հայրենի սովորութեց, և առնել զայնոսիկ մաքուր մտօք, զուարթութեամբ և ժրութեամբ և մի անարգաբար և կծծութեամբ, և կամ շռայլութեամբ և պերճանօք առաւել քան զկար իւր։

153. Ո՛վ մարդ, մի լինիր ապաշնորհ երախտեաց զոր 'ի գնցն ընկալար, և մի մոռանար զմեծամեծ բարիս նոցա։ Շնորհս կալջիր հանապազ վասն աչացդ և ականջաց զոր եառեն քեզ. նա մանաւանդ վասն կենացդ, և ամենայն նպաստից զոր մատուցին քեզ 'ի գործման գործին, որպէս զգինի և զիւղ և զամենայն բերս երկրի։ Այլ ընդ նմին յիշեսջիր զի և պատուականապոյն քան զայդոսիկ եառեն քեզ. ըզկարողութիւնդ ասեմ որ վարի այդոքիւք, որ փորձէ զամենայն և ամենայնի գին հատանէ։

154. Ժպիրհ ոմն էհարց զԴիոգինէս. «Դո՞ւ իցես Դիոգինէսն՝ որ ասէ թէ ոչ գան գինք»։ Ես լինքն եմ Դիոգինէս, պատասխանեաց, և այնպէս հաւատամ թէ գուցեն գինք, որպէս զի և ատենն զքեզ։

155. Իբրև ոպանաւ Գալբա, ասաց ոմն ցՌուփոս. «Ահա արդ նախանամութին վարէ զաշխարհս»։ Նա պատասխանի Ռուփոս. «Ահ թշուառական, և կարծէիր ու-

ռեմն եթէ Գալբա ոչ կարող էր արգելուլ զդիս 'ի վարելոյ զաշխարհ»։ Այն որ երկրայական առնէր քեզ զնախախնամութիւն՝ նոյն ինքն և առնէր զայն մատնոյց։

156. Յորժամ մերձենայցես առ իշխանս և առ աւագս, յիշեա զի 'ի վերս անդր կայ մեծագոյն ևս իշխան՝ որ տեսանէ զքեզ և լսէ քեզ, և որում պարտիս մանաւանդ հաճոյ լինել։

157. Կամիս հաճոյ լինել դմոցս։— Յիշեա ուրեմն, զի չիք այնպէս առտելի նոցա որպէս անմաքրութիւն և անիրաւութիւն։

158. Եթէ իշխանին որդեգրեալ էր զքեզ, անտանելի դառողութիւն վիրանայիր առ մարդիկ. և մոռանաս զաստուածութիւնն, որում այնքան պարտականդ ես։

159. Գաջ գիտէր Սոլոմն եթէ ոչ հնազանդեացի Լայոս պատգամաց իւրոց. սակայն ոչ թաքոյց 'ի նմանէ զաղէտսն որ հանդերձեալ կային նմա. բարերարութիւն դմոցս չթողու անզգոյշս զմարդիկ։ Մըշ-

տահոս է աղբիւրս այս Ճշմարտութեան, բայց մարդիկ կան մնան անհաւանք, անհնազանդք և ապըստամբք։

160. Պաշտպանութիւն Իշխանի և կամ առն աւագի շատ լինին մեզ առ աներկեան կացուցանել զկենցաղավարութիւն մեր՝ զերծ յամենայն վտանգաց։ Իսկ զգիսն ունելով մեզ պաշտպանս, և խնամողս և հարս, ո՞չ բաւիցեմք փարատել ըզվիշտ, զհոգ և զերկիւղ մեր։

161. Զի՞նչ առնեն մարդիկք։ — Զարհուրեալ սարսռացեալ կան յոտոց երկնչին, կամ հեծեն և մնչեն ընդ վիշտս իւրեանց։ Եւ զի՞նչ այսի գոցա ծագիցէ։ — Քրթմնջիւն և ամպարշաւութիւն։

162. Ամենայն պատահար աշխարհի գովութիւն է նախախնամութեան։ Յոյց լինէ զոք հանճարեղ և երախտագէտ, և գիտացէ զայս։

163. Եթէ աստուածութեան արարեալ էր զերանգս գունոց և ոչ հաստեալ աչս կարողս 'ի տեսանել

և յորոշել զնոսին, թէ իմիք լինէին պիտանացուք. և եթէ հաստատեալ էր ընդ երանգաց և աչս, բայց ըստ լոյս ոչ, առ ինչ լինէին կարևոր երանգքն և տեսանելիքն: Իսկ արդ ոմն է որ զերեսին ևս ած 'ի գոյ 'ի պէտս իրերաց. ո՞ է հեղինակ հրաշալի միաբանութեանս: Աստուածութիւն ինքն է. գոյ ուրեմն նա խախնամութիւն:

164. Մարդոյ 'ի կենցաղումս անկ է 'ի զնին կալ էութեան իւրում և արարածոց աստուածութեան, թարգման նորին և գրուատիչ: Եւ զու, եղկելիդ, անտի սկսանիս և անդ տեսարես, ուրանօր անասունքն սկսանին և գագարին. տեսանես անզգայութեամբ: Սեարտեաց ուրեմն ուր աստուածութիւնն 'ի կատար հասոյց զքեզ. 'ի լրումն ած նա զքեզ շնորհելով հոգի խմացական և բաւական 'ի ճանաչել զնա: Վարեսջիր արդ զովին, և մի եղաներ արտաքս 'ի գերահրաշ տեսարանէ աստի՝ ընդ աղօտ ինչ և եթէ միայն նշմարելով յայն. այլ տես քաջ, ծանիր, գովեա և օրհնեա:

165. Հատանեաս երկայն Ճանապարհս յերթալ յՈլիմպիա 'ի տես հանդիսի խաղուցն, և ևս առաւել 'ի տեսանել զչքնաղ անդրին Փիդիասայ, և մեծ զրկանս քեզ գրես զմեռանելն մինչև տեսեալ զնոսին. իսկ գործուածոց ևս վեհագունից քան զՓիդիասայն, գործոց՝ զորս չէ ինչ հարկ երթալ խնդրել 'ի հեռաստան, և ոչ այնքան վաստակել և տառապիլ, որ զի ամենուրեք երևին, չկամիցիս բնաւ կալ գոցին ակնկառոյց: Ե՞րբ յիշեցես թէ ով ես դու, և վասն ի՞ր ծնեալ: Եւ մեռանիցիս անիսոյթ արարեալ զգերսահրաշ տեսարանաւ տիեզերացս, զոր ասատուածութիւնն տարածեաց առաջի աչաց քոց՝ առ 'ի կարող լինելոյ քեզ դովաւ Ճանաչել զնա:

166. Զէնք տուան քեզ յԱստուծոյ առ 'ի դիմակաց լինել դժնդակագունից իսկ գիպաց. տուան քեզ մեծանձնութիւն, զօրութիւն, համբերութիւն և անյողդողդութիւն: Վարեսջիր արդ դոքօք. իսկ եթէ քրթմնջես տակաւին, խոստովան

լէր զի թողէր լքէր զսպառազինու-
թիւնն՝ որով ամրապնդեալն էր ըզ-
քեզ։

167. «Գոյ արդեօք նախանձա-
մուութիւն, ասաց ումն Եպիկուրեան.
ծորէ յաբնդացս անդադար հիւթ
տալոկացուցիչ»։ Արդարև դերի.
և վասն էր տուան քեզ ձեռք. ոչ
ապաքէն զի սրբես զանդուն քո։
«Այլ ոչ լաւագոյն էր, ասէ, անապա
լինել խսպառ»։ — Եւ ոչ լաւ ևս
էր սրբել քեզ զանդուն, քան դա-
տախազ կալ նախանձամուութեան։

168. Ասուած 'ի վկայութիւն
կոչէ, և հարցանէ. «Միթէ չեկցէ
ատոյգ եթէ չեք բարի կամ չար բայց
'ի կամն ևեթ։ Ո՞ւմ ումեք ինքատա-
պարտ եցեմ։ Միթէ ոչ եռու իւրա-
քանչիւր ումեք կարողութիւն առ-
նելոյ զամենայն որ ինչ յօգուտ իւր
եցէ»։ Զի՞նչ պատասխանի տայցես
առ այս։ — Յանուանելի տառա-
պանս կամ. չեք ումեք փոյթ զինէն.
չեք ոք ինձ ձեռնտու. ամենայն ոք
քամահէ զիս, ամենայն զրպարտէ,
խեշերանք մարդկան եղէ։ — Ա՛յս-

պէս շնորհս ունիս զպատուոյն որով մեծարեացն զքեզ՝ կոչելով 'ի վկայութիւն, զի տացես փառս վասն այսպիսեաց մեծամեծ ճշմարտութեանց։ Վկայ խնդրեր նա բարութեան իւրում, ճշմարտութեանն և արդարութեան. և զու կաս նմին դատաւոր։

169. Ի դատս սուսերամարտից կայսեր են որք զօր ամենայն անցուսաբար դանդատին զի ոչ կոչին 'ի մարտնչել հանապազ. ուխտս զընեն զկոյ ազատել 'ի պարապորդութենէ, և իբրև մեծ ինն յոյժ շնորհս խնդրեն ինչանել յասպարէզն մրցանաց։ Իսկ առ մեզ, չկք ոք որ խնդրիցէ պատեհ հանդիսանալոյ 'ի սէր աստուածոյն։

170. Ցորչափ 'ի կենցաղումս եմ, իմ պարտք այս են, շնորհս ունել յամենայնի զոկոյ, յամենայնի գովել զնոսա և հրապարակաւ և առանձինն, և մինչև ցյետին շունչն անդադար օրհնել զնոսա։

171. Կարիցէ՞ ոք արգելուլ ըզքեզ 'ի վկայելոյ ճշմարտութեան

ծանուցելոյ, կամ բուռն առնել քեզ 'ի հաւանութիւն սատութեան։ Տեսանես ուրեմն քաջիկ զի դոն 'ի քեզ կամք անձնիշխանք, զոր և ոչ ինչ ոչ կարէ կորզել 'ի քէն։ Եթէ կողոպտելի էր ազատութիւնդ՝ ապա չունէր զքէն ասատուածութիւնն փոյթ՝ զոր անկ է ունել հօր բարւոյ։

172. Այնքան ապաշնորհք եմք զի և ընդ սքանչելիսն զոր նախախնամութիւն արար 'ի շահ օգտի մերոյ՝ ոչ միայն շնորհս ոչ ունիմք, այլ և ամբաստան լինիմք զնմանէ և քանքարեմք խակ։ Սակայն, մի դիք, եթէ լեալ էր և դոյզն ինչ գոլով 'ի սիրտս մեր և կիրս երախտեաց, մի և եթէ գործ բնութեան և փոքրագոյնն խակ շատ էր մեզ 'ի զգացուցանել զտեսչութենն և զկնանամն նորին 'ի վերայ մեր։

173. Եթէ գոյր 'ի մեզ զգացումն՝ զամենայն կեանս մեր ոչ այլ ինչ առնէաք հրապարակաւ և առանձինն, բայց միայն գոհանալ զնախախնամութենէ վասն ամենայն բա-

ընացն զորս առաք և յորս վայելեմքն 'ի կեանս մեր։ Այո՛. և 'ի ըրբեն, 'ի վատառակեն, յուտեն և 'ի ձեմել, 'ի յառնեն և 'ի ննջել, և յամենայն գործս՝ գոչեսք. «Ո՛վ, որպէս զի մեծ է նախախնամութիւն»։ Եւ համայն ինչ գոչէր և հնչէր զայս աստուածական բարբաւ. «Ո՛վ, որպէս զի մեծ է նախախնամութիւն»։ Այլ դու ապաշնորհ ես և զաչացու։ Ինձ ուրեմն արժան է ասել զայդ փոխանակ քո. և թէպէտ ծեր եցեմ և կաղ և ալքատ և հիւանդ, ասեմ անդադար. «Ո՛վ, որպէս զի մեծ է նախախնամութիւն»։

174. Եթէ սոխակ էի կամ կապրտպ, զգործ կարապի և սոխակի գործէի։ Մարդ եմ և բանականութեան վիճակեալ. զի՞նչ առնել է ինձ արդ։ — Գովեալ զաստուածութիւնն։ Զայս արարիչ զամենայն կեանս իմ, և 'ի սոյն յորդորեցիչ զամենայն մարդ լինել ինձ 'ի կցորդ։

175. Զինուորք որք գրին 'ի վաշտս Կեսարու՝ երդնուն երդումն ըստ

ասվորութեան օրինի։ Եւ որ ինչ էրդումն այն։ — Քան զամենայն լաւ համարել զկեանս ինքնակալին. յամենայնի հնազանդ լինել նմա, և ապաշխարել զանձինս 'ի մահ վասն կենաց նորա։ Իսկ դու որ 'ի ծննդենէ հաղորդեալ ես ընդ աստուածութեան, և այնքան բարեօք զորս ընկալար 'ի նմանէ, և 'ի դասս զինուորաց նորին ծնեալ, ոչ առնիցես զայդ էրդումն. և կամ արարեալ՝ չկայցես հաւատարիմ։ Եւ սակայն որպիսի՞ խոնարհ ընդ երկոսին էրդմունս. զօրականն էրդնու նախապատիւ առնել զփրկութիւն կայսեր քան զամենայն ինչ, և դու էրդնուս գերազոյն համարել զփրկութիւն անձին քո։ — «Հաւանեցուսցէ զիս, ասաց ոմն ց Եպիկտետ, եթէ ամենայն գործք իմ մերկասպարանոց կան առաջի աստուածութեան, և ոչ մի ինչ յայնցանէ ոչ վրիպիցի 'ի նմանէ»։ Եւ պատասխանի նմա Եպիկտետ. «Եւ ոչ հաւանիցիս եթէ ամենայն ինչ յաշխարհի ունին զոգ իմն ընդ երեսաց։

— «Այո»։ — Զկցեմ դու հաւանեալ զի երկրաւորքս ամենայն 'ի յերկնայնոցն կառավարիցին։ — «Այո»։ — Արդարև իսկ տեսանեմ զի ամենայն որ ինչ է 'ի տիեզերս՝ ըստ կարգեալ ժամուց հանդիպին, և յեղանակք ըստ սահմանեալ ժամանակաց փոփոխին։ Ըստ մերձենալոյ կամ հեռանալոյ արեգական, և ըստ աճել և պակասել լուսնին, ողջոյն իսկ կերպարանք բնութեան փոփոխին։ Արդ եթէ ամենայն ըստ տարայինքս, և նոքին իսկ մարմինք մեր այնպէս ինն շաղկապեալ են և միացեալ ընդ բոլորին, զիարդ իշխես ընդ միտ բնաւ ածել, եթէ հոգիս մեր, չնաշխարհիկն և գերագոյն քան զտիեզերս ողջոյն, կայցէ միայն տարանջատ և անլծորդ ընդ տատուածութեան՝ որ ստեղծն զնա։ — «Այլ զիարդ հնար լցէ նոցա տեսանել միանգամայն 'ի միում պահու այնքան զանազան և այնքան հեռաւոր իրս»։ — Եղկելի՛ զաչացուդ։ ոչքան զանազանեալ գործս չառնէ միանգամայն և հոգի՛ քո՝ որ

այնքան անձուկ սահմանափակ է։ Ընդդիմիկ զասուածայինն և ըզմարդկայինս, խորհի, արոհէ, դատի, հաւանի և մերժէ։ Քանի՛ զանազան պատկերս, քանի՛ հակառակս իսկ իրերաց խորհուրդս՝ ոչ քերի 'ի ներքս յինքեան։ Արեգակն լուսաւորէ 'ի միում պահու զմեծագոյն մասն աշխարհիս, մասն ինչ ևեթ է որ ընդ սառեալ երկրիս ծածկեալ՝ թաքչի 'ի նշուլից նորա։ Եւ այն որ արար զարեգակնս՝ որ թէպէտ և ընդարձակ յոյժ ևս՝ այլ կէտ մի ևեթ է առ լայնածաւալ տիեզերաւս, միթէ՞ ոչ լուսաւորեսցէ նա զերկիրս համօրէն»։— «Այլ հոգիս իմ՝ մի ըստ միոջէ առնէ զգործս իւր, և մի առ մի նկատէ զարարածս»։ — Բա՛ւէ. և ո՞ասաց քեզ եթէ միտքդ լայնաձիգ ևս հանդոյն ասուածութեան։ Այլ, դու աղկաղկ որդն երկրի, միա գիր ոչքան իրս զանազանեալս միանգամայն ամենամիտիէ ակնդայդքանփոքրիկ։ Որ ինչ ընդ ոլորտիւք տիեզերաց է՝ համանդամայն երևի տեսանելեաց.

և կարէ ինչ թաքչել յաչաց նորա՝ որ կազմեացն զաչս։ Զոր քեզէն դատեա։

176. Զեռուն ինձ դէք ինչս բաղումս. ոչ կամեցան յղփանալ ինձ և փափկասուն վարել կեանս։ Եւ ընդէր կալայց տրտունջ։ Ո՞չ նոքին օրինակաւ վարեցան և ընդ Հերակլէս որ աստուածորդի էր, և որպիսի՛ որդի։

177. Հերակլէայ ոչ-ցաւեայց թողուլ զմանկունս իւր որբս. քանզի գիտէր եթէ չէք որբ յաշխարհի. և թէ ամենայն մարդոյ ամենայն ուրէք դոյ հայր որ խնամս տանի և ոչ երբէք լքանէ։

178. Յորժամ մատչիմք հարցանել զհաւատամայս, զարհուրիմք և սրտառուչ մաղթեմք զդիս։ «Ողորմեցարուք ինձ, ասեմք, ով դէք, տուք ինձ յաչողել յայս ինչ և յայն գործս»։ — Սարսուկ վատարանց, զի՞նչ այլ ինչ քան զլաւագոյնն՝ կամիցիս քեզ։ Եւ զի՞նչ լաւագոյն քեզ քան առնել զհաճոյսն դնց։ Արդ ընդէր նկրտիս յանկու-

ցանել զազատ կամն և զդատաւորդ՝ ոչքան գոյ քեզ հնար զայդ առնելոյ։

179. Ընդէր լցէ երթալ հարցանել զբղձապատուումն վասն իրաց՝ յորս քաջայայտ են պարտք մեր։ Եթէ լցէ հարկ գնելոյ զանձն իմ՝ 'ի վանդ վասն բարեկամի իմոյ, կամ մեռանել վասն նորա, զի և ես պիտոյ է ինձ հարցուկ։ Մինթէ ոչ ունիցիմ՝ 'ի ներքս 'ի յիս պատգամախօս ստուգագոյն և անխաբ, որ ուսոյց ինձ զբնութիւն բարւոյ և չարի, և եցոյց ինձ զամենայն նշանակսն յընտրութիւն նոցին։

180. Առ երկիւղն լոկ մտաբերէ մարդ դիմել առ կիւս. զանգիտէ 'ի պատահարաց. և վասն այսորիկ զիւրայօժար է 'ի պաշտել զնոսին, կացուցանել ընտրոյս և իրաւարարս ամենայն գործոց իւրոց, զամենայն ինչս իւր հաւատայ նոցին, և եթէ ինչ բարեգուշակ լցէ նմա, շնորհս ունի զնոցանէ՝ որպէս թէ նոքին իսկ էին բարեացն տուիչք։ Որպիսի՛ կուրութիւն։ Եթէ իմաս-

տունք էաք, հարցանէաք նոցա ըզ-
պատգամն՝ որպէս յուզևորուԹէ
հարցանելոք զուզին՝ առանց ինչ հո-
գալոյ ԹԷ ընդ աչ և ԹԷ ընդ ահեակ
հարկ կայէ երԹալ։ Զի զի՞նչ կայէ
հարցանել պատգամն, բայց եԹԷ
զգիս իսկ հարցանել առ 'ի գիտելոյ
զկամն նոցին և առնել։ Պարտ և
արժան էր ուրեմն վարել մեզ պատ-
գամօք որպէս աչօքս մերովք. զորս
ոչ աղերսեմք զի ցուցցեն մեզ զայս
կամ զայն, այլ տեսանեմք՝ զոր և ցու-
ցանեն. Զնոյն արասցուք և առ հար-
ցուկան. մի՛ շոլոմեսցուք զնոսա, և մի՛
բնաւ աղաչեսցուք, այլ զոր ինչ և
հրամայեսցեն՝ արասցուք։

181. Յորժամ երԹաս առ հար-
ցուկ՝ յիշեա զի անգիտանաս զլինել-
լոցն և երԹաս ուսանել զայն. այլ
յիշեա ընդ նմին զի եԹԷ խմաստա-
սէր կայս՝ երԹաս հարցանել զպատ-
գամն, քաջ գիտելով զհանգամանս
պատահարացն. զի եԹԷ կացեն յայն-
ցանէ որ չենն ընդ մերով իշխանու-
ԹեամբՔ, չէ մարԹ լինել 'ի քեզ նո-
ցին ոչ 'ի բարի և ոչ 'ի չար։ Այլդ

յորժամ կայցես առ ըղձապատու-
մըն, մի՛ և մի՛ ինչ բերիցես սիրով
կամ առելութեամբ, ապա թէ ոչ
ցանկ զգողանի հարցիս. այլ գիր
'ի մոի և հաւանեաց՝ զի որ ինչ և
հանդիպելոցն է անխախիր է և ոչ
բուռն ինչ .քեզ. այլ զիարդ և ինչ է,
.քեզ անկ է 'ի բարուք պէտս վարել
զայն, զի ոչ ոք կարող է զայդ խա-
փանել 'ի .քէն: Երթ ուրեմն աներ-
կեան՝ որպէս մատչելով առ դիս՝ որ
արժանի համարեացին տալ .քեզ
խորհուրդ. և յորժամ ընկալցիս 'ի
նոցանէ խրատ, յիշեա թէ որպիսի՛
էին խորհրդատուքն առ որս գիմե-
ցեր դ, և եթէ անսասանեացես՝ որպի-
սեաց լինիցիս ոանհարու: Այլ երթ
առ իլձս որպէս Սոկրատն կամէր
թէ երթիցէ մարդ. այսինքն է եր-
թալ միայն վասն իրաց որոց մարթ է
լինել հատու, բայց 'ի կատարել նո-
ցին, որոց անհնար էր նախատես
լինել ոչ հանճարով մտաց և ոչ այ-
լով ինչ հնարիւք արուեստի: Եւ
արդ յորժամ գէպքն պահանջիցեն
'ի .քէն 'ի մեծամեծ վտանգս անձնա-

տուր լինել վասն բարեկամի. քուամ կամ վասն հայրենեաց, մի երթար առ խղճ պատգամ հարցանել, եթէ կցէ արժան առնել զայդ։ քանզի եթէ ծանուցցէ. քեզ հմայողն չարաբարուշակս զընդերս զոհկցն, յայտ է թէ նշանակիցէ. քեզ կամ զմահ, կամ զվէրս և կամ զաքսոր։ խակ ուրկինն բան թեքագրէ. քեզ՝ թէ յայդր ամենայնի վերայ պարտք են. քեզ օգնել բարեկամին և նուիրել զանձն վասն հայրենեաց։ Վասն այսորիկ եկ անսա դու. վեհագունի և պատգամախօսի. քան զոր հարցանէիրդ։ ահա պիւթեանն Ապոլոն, որ արտաքսեաց մերժեաց յիւրոց մեհենից զայրն՝ որոյ ոչ էր փուութացեալ յօգնութիւն բարեկամին անկիւղոյ 'ի ձեռս սպանչաց։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս իմաստասիրութեան և իմաստասիրայ։

182. Որպէս պանիր կակուղ ոչ յարի՛ ի կարթ, և ոչ այր թուլամորթ յիմաստասիրութիւն։

183. Հոգի աւազան ինն է ջրալից, և կարծիք՝ նշոյլք լուսաւորիչք աւազանին։ Ի յուզել ջրոյն՝ թուի ինն թէ և լոյսն ընդ նմին աղաւաղիցի, այլ ոչ այդպէս է։ Այսպէս և՛ ի մարդոյս վրդովել՝ առաքինութիւնքն ոչ վեր՛ ի վայր լինին և շփոթին. այլ ոգիք մարդոյն են՛ ի յուզման. ՝ի հանդարտել ոգւոյն, և ահա ամենայնն անդորրանայ։

184. Սկիզբն իմաստասիրութէ է Հանաչել զսկարութիւն մեր և զոգիտութիւն՝ ի կարևորսն և յանհրաժեշտ պարտս մեր։

185. «Զինչ է իմաստասէր»։ —

Այր՝ որում եթէ անասցես՝ աղաւ առնիցէ զքեզ ստուգութեամբ քան թէ պրեսողքն։

186. Եթէ ագռաւ գուշակիցէ ինչ քեզ կուչելումն, հաւատաս զի Աստուած ոմն է որ խօսի ընդ քեզ, և ոչ ագռաւն։ — Եւ յորժամ ի մատաստէր ոք ազդ առնիցէ քեզ, հաւատա ըստ նմին օրինակի եթէ Աստուած է որ ազդէ քեզ, և ոչ ի մատաստէր։

187. Եթէ քաջ նկատիցես ըզբարձր բարձր տեսութիւնս իմաստասիրի և զլոյս մտաց նորին, գըտցես զնա կարի խորատես, որպէս զի և Արդոս ինքնին ամենայն աչօքն իւրովք զաչացու երևիցի առ նմին։

188. Վարժարան իմաստասիրի բժշկանոց ինն ի ցէ, ուր ոչ 'ի հեշտանալ երթայ մարդ՝ այլ զգալ ցաւ բուժիչ։ Ուրուն թիկունք թիւրեալ են, այլում պալար կայ 'ի մարմնի, այլ ոք խղխայթեալ, և միւս վիրաւորեալ 'ի գլուխն։ Մի թէ ապաքինեսցի՞ն դոքա հեշտանալումն։

189. Յամենայն գործս՝ մինչև

ձեռն արկեալ՝ քննեա և տես յիմէ յառաջ դայցէ և զինչ զհետ բերցէ, և ապա լինջիր ձեռնամուխ։ Եթէ ոչ վարիցիս այսու կանոնիւ՝ իսկզբանն, յամենայն գործս քո զդայցես հեշտութիւնս, զի չև ևս է քո խորագոյց լեալ հեռևանացն. այլ յետոյ ուրեմն յերևան գալ ամօթոյ կորապլուխ եղիցիս։

190. Զամենայն զգործս քո և զձեռնարկութիւնս սկսիր այսպիսի աղօթիւք. «Աստուծոյդ եցէք ինձ, մեծդ Սրամազդ, և դու հպօր Ճակատագիր, առ ամենայն որ՝ի ձէնջ սահմանեալ է վասն իմ. երթայց ընդհետ ձեր մտադիւր և անմեղկելի սրտիւ։ Զի եթէ կամեցայց հակառակ կալ հրամանաց ձերոց, ոչ միայն եղէց ապիրատ և ամպարիշտ, այլ և դարձեալ հարկ՝ի վերայ կայ ընթանալ զհետ ձեր յակամայս»։

191. Այր բարի և Ճշմարիտ խնամատուն՝ յիշէ հանապազ թէ ով որ է ինքն, ուստի՞ եկն, և յուսմէ՞ ստեղծաւ. կայ և պահէ զիւր տեղի, և խնդրէ միայն հնազանդել դիցն,

ասելով. «Կամիցիք զի կամ մնամ տակաւին յայսմ կայի. կամ աւա-սիկ։ Կամիք զի երթայց. երանեմ ահա։ Զի վասն ձեր եւ եթ կամ ես ասատ-նօր, և վասն ձեր եւ եթ երանեմ ասասի. առաջի աչաց իմոց ունելով միշտ զհրամանս ձեր և զարդելս»։

192. Զինչ առնեն ուղևորք ըզ-դոյշք, յորժամ լսիցեն եթէ զՃա-նապարհս ընդ որս անցանելոցն են՝ գողք և աւազակք ունին։ Դադա-րեն 'ի յառաջ վարելոյ միայնակ զգնացան, և ապատեալ մնան խառ-նիլ յամբոխ գեղապանի, գանձապե-ան կամ փոխանակի բգեշխի ուրուք. և այսպէսի զգուշութեամբ անվը-տանգ կատարեն զուղևորութիւնն իւ-րեանց։ Զնոյն օրինակ առնէ և զգօնն յայսմ աշխարհի, որ աւազակուտ է և լի բռնաւորութեամբ, ապիտիւք և տառապանօք։ Զիարդ անցանիցէ միայնակ անկորուստ։ Սակայն ոմն ապատեալ մնայցէ, կամ յո՞ յարեսցի. յիշխանաւորաց, 'ի հիւպատոս եթէ 'ի պրեսոր։ — Այլ սոքին իսկ են թըշ-նամիքն՝ յորոց առաւելապէս անկ

է զանգիտել։ Ուրեմն մնայ նա ընկերի՝որ անկասկած եցէ և հաւատարիմ, և որում չկայցէ վատանգ խորհաւանելոյ. և ընկերս այս դիք ինքնին են. յորս յարեալ՝ երթայ անցանէ անվատանգ ընդ ամենայն խոչ և խուրթս կենցաղոյս։

193. Որպէս 'ի .քայլելդ զգոյշ լինիս չկոխել 'ի սեպս, կամ դեղոլ և գայթել զոտս, զնոյն օրինակ ըզգոյշ լեր չգնել վերս ապնուագուն մասին անձինդ, և այնմ որ առաջնորդէն .քեզ։ Եթէ այսմ կանոնի միտ դիցուք յամենայն գործս կենաց մերոց՝ ամենայն արարք մեր անարկեան եղիցին։

194. Փնտրեմ զբանս և զգործս մարդկան, ոչ առեպերել կամ ծաղր առնել, այլ յիս ինքն փոխարկելով զայնոսիկ, ասեմ «Արդեօք գործիցեմ և ես զայս թերութիւն. երբ գտարեցայց յայսցանէ. երբ ուղղեցեալ զանձն իմ։ Ահա սակաւ աւուրք են զի և ես հանդոյն նոցին գործէի. այլ արդ ոչ նոյնպէս մեղանչեմ. գոհութիւն դնց»։

195. Տրանջել զայլոց վան աղեսից անձին՝ գործ է առն տգիտիսկ տրանջել զանձնէ՝ նորավարժից է գործ. իսկ ոչ զանձնէ և ոչ զայլոց գանգատիլ՝ վաղու իսկ հրահանգելոյ է գործ։

196. Կամիս իմաստասէր լինել. պատրաստեաց զանձն քո 'ի նշաւակի կալ. համարեա թէ ռամիկն շէեսցէ քեզ և ասասցէ. Ահա 'ի մի՞ ում գիշերի եհաս մեզ իմաստասէրս այս. և ուստի՞ էնդմա յօնքդ պռըստեալք։ Այլ դու զգոյշ լեր յակնարկելոյ բարձրայօնակս. կալ զառածս որ ընարելագոյնք և չքնաղագոյնք թուլեցին քեզ. և գիտասջիր, զի եթէ անդրդուելի կացցես 'ի նոսին, որք զառաջինն ծաղր առնէին զքեզ՝ նոքին իսկ յետոյ յապուշ կրթեսցին 'ի քեզ. իսկ եթէ խոժոռեսցիս ընդ անարգանսն՝ կրկին ևս ծաղր և ծանակ կայցես։

197. Եթէ հայեսցիս երբեք արտաքս առ 'ի հաճոյանալ ուսեալ, գիտեա զի դու անկեալ կործանեցար յասաիճանէդ։ Շատ լեցի քեզ լի-

նել յամենայնի և յամենայն տեղիս իմաստասէր. և եթէ կամիցիս երե-
ւել այնպէս, յորժամ լինիցիս՝ շա-
տասջիր երևել յաչս քո և եթէ, և
այդ բաւ է:

198. Մի բնաւ երբեք ասիցես լինել իմաստասէր, և մի ճոռոմա-
բան լինիր գեղեցիկս առակօք առա-
ջի ոգիսաց. այլ արա զամենայն զոր առածքն աւանդեն: Օրինակ
ինն. 'ի ինջոյս բազմեալ, մի թէ որ-
պէս պարտ է ուտել՝ զայն ասէր, այլ կերինջիր որպէս պարտն է ու-
տել. և յիշեա զի այսպէս Սոկրատ յամենայնի և ամենայն ուրեք 'ի
բաց կարեաց զամենայն տնափառ
պերճանս և նազանս. երթային առ
նա երիտասարդք խնդրել զի յանձ-
նեսցէ զինքեանս իմաստասիրաց, և
նա տանէր, ոչ ինչ դժուարեալ ընդ
նուաստանալն իւր:

199. Յիշեա զբանն Եփրատեսի զոր ասէր. թէ ընդ այս մեծապէս
ուրախ եմ զի թաքուցի զանձն իմ
յայլոց չերևիլ իմաստասէր. և ոչ
միայն հաւանեալ էր չառնել ինչ 'ի

ցոյցս մարդկան, այլ զամենայն վասն աստուածոց և վասն իւր. այլ և մինթարէր ընդ այս, զի որպէս միայնակ մարանէր, միայնակ և զանձն դնէր 'ի վտանգ, և ոչ կայր խարդաւանակ ոչ մերձաւորին և ոչ իմաստասէրութեան՝ թերութեամբք ինչ՝ յորս մարթ էր նմա գթել. և զի թաքուն ինն հաճութիւն էր նորա իմաստասէր ճանաչել 'ի գործոցն քան 'ի հանդերձիցն:

200. Խստակրօնութիւն մեր և կրթանք մարմնականք՝ մի լիցին առաւելազանց կամ դժուարահաւատք, և մի 'ի ցոյցս ինչ և 'ի անապատ պերճանս. ապա թէ ոչ՝ հացկատակք իցեմք և ոչ իմաստասէրք:

201. Եթէ սովոր իցես կեալ չորսաբեկ, և ճնշել զմարմին, ընդ այդ մի լինիցիս անձնագով. և եթէ ջրիկ ևեթ ըմպիցես, մի վարվարեր ասել թէ ջուր ևեթ ըմպեմ: Եթէ կամիս մարզիլ 'ի ժուժկալութիւն և 'ի համբերութիւն՝ վասն անձինդ և մի վասն այլոց, մի ընդդրկեր երբեք զանդրիս, այլ 'ի չարաստանջ ապ-

տուք ծարաւոյդ՝ արկ ջուր 'ի բերան, և ժայթքեա անդրէն, և մի ասեր զայդ ումեք։

202. Յորժամ 'ի գործ ինչ երթիցես առնել, մինչև ձեռն արկեալ՝ յեղյեղեա սակաւիկ մի 'ի մանի թէ զինչ է զոր առնելոցդ ես. եթէ 'ի լուանալ 'ի բաղանիս երթաս, զմտաւ ած զոր սովոր է լինել 'ի բաղանիսն. արկանել ջուր զմիմեամբք մղել զերեսս, ունչս առնել, և գոլանալ. յառպահովագոյնսերթիցես անդր առնել, եթէ յառաջնմէ ասիցես ցանձնդ. երթամ լուանալ 'ի բաղանիսն. այլ կամիմ պահել զաղաւութիւնս իմ և զանձնիշխանութիւն, զճշմարիտ պարգևս բնութեան իմոյ։ Նոյնպէս և յամենայն դէպս արասջիր. որպէս զի եթէ արդեալ ինչ լինիցի քեզ լուանալոյ, ունիցիս 'ի ձեռին զդարման ճնաւուն, այսինքն է ասել. ոչ լուանալ եթէ կամիցես, այլ և պահել զաղաւութիւն իմ և զանձնիշխանութիւն. և կորուսանիցի զայդոսիկ՝ եթէ դժկամակ լինիցի։

203. Զէ և չէ ինչ հարկ երթալ յաճախ՝ի թատերս և՝ ի խաղս հրապարակացն. և եթէ երթիցես ըստ դիպաց՝ մի և միոյ կողման լինիցիս կուսակից. անձին քոյմ պահեա զնրաքանչիւրն և զիարեկցութիւն. այսինքն է, որ ինչ և դիպեսցի՝ զահ լեր, և հաճեաց ընդ յաղթանակ յաղթողին. և զայս օրինակ ոչ բնաւ գժկամակ լինիցիս կամ խռովեալ։ Զգոյշ լեր և՝ ի ծաւիահարութեանց, ՝ի քրքիջ բառնալոյ, և յանհեթեթ շարժուածոց. և յորժամ՝ ի բաց դառնաս՝ մի երկայնաբան լինիր զրոց տեսերն. զի ոչ եթէ յուղղութիւն ինչ վարուցդ օգնեսցեն զոքա կամ արասցեն զքեզ զգաստագոյն։ Բանզի յերկարատև զբօսանքն այն վնասցեն՝ եթէ ընդ տեսարանն եւ եթ զարմացեալ, հիացեալ կայիր։

204. Մի գնասցես յարտասանութիւնս կամ՝ ի լուրընթերցուածոյ գրուածոց ինչ ոմանց, և մի կացցես անգամօր ցոփաբար. իսկ եթէ գոցես անդ, կաց ծանրութեամբ և զգաստութեամբ, խրև յօժար և անձանձրոյթ։

205. Սոյդ նշանակէ յառաջադիմութեան մարդոյ յուսումն իմաստութեան՝ այսպէսիկ. ոչ զոք անդամանել, և ոչ զոք դովել, չարտարանել զուսմէքէ, չամբաստանել զոք. չխօսել զանձնէ որպէս թէ ինչ ինչ և կամ գիտիցէ ինչ. եթէ կամաց հաճոյից իւրոց արդեալք ինչ կամ խոչընդակք եղանիցեն՝ անձին միայնոյ լինել մեղադիր։ Եթէ ոք դովիցէ զնա, գաղտ ծիծաղիցի զդովչէն. և եթէ ոք սադրանիցէ՝ մի կացցէ անձին ջատագով. այլ որպէս նորաբոյժ ոք յախտէ՝ որ փորձէ զանձն և հոգայ և կասկածի խանդարեալ և վեր 'ի վայր առնել 'ի սկիզբան առաջնութեանն մինչև եցէ կաղդուրեալ բոլորովին։ Հատանէ յինքեանէ զամենայն փափաքանս, և զամենայն հակառակութիւն իւր շրջէ ընդդէմ այնպիսեաց իրաց՝ ոչք հակառակ եցեն բնութեան այնմ որ զմէնջն կախի. չբերի յինչ բուռն խլրտմամբ, այլ մեղմով և ցածութեամբ. և եթէ ոք պարզամիտ և ոչ էր համարիցի զնա, ոչ վնասանայ։

Միով բանիւ հանապազ զգուշա-
նայ անձին, որպէս թէ առն՝ որ
ցանկ որոգայթս լարիցէ ինքեան և
չար քան զամենայն թշնամի իցէ։

206. Եթէ կանուխ ոք երթայ 'ի
բաղանիս, մի ասեր բնաւ թէ չար
գործէ այդպէս վաղվաղել 'ի լոգա-
նալ, այլ թէ քաջ վաղագոյն երթայ
'ի բաղանիս։ Եւ թէ ոք զգինեաւք դե-
գերի յոյժ, մի ասեր թէ չար առնէ
ըմպելովն, այլ թէ յոյժ ըմպէ։
Զիարդ մինչև իցէ քո 'ի վերայ հա-
սեալ պատճառաց գործոցն՝ գի-
տիցես թէ չար առնիցէ։ Այսպէս
յամենայն նուագս եթէ ըստ այսմ
օրինակի դատիցես՝ այլազգ ինն դի-
պեսցի յերևելն աչաց քոց. զայլ
ինչ տեսցես և այլ ինչ կարծիցես։

207. Եթէ դիպեսցի քեզ տեսա-
նել ինդիրս յուզեալ զդեղեցիկ ինչ
ինդրոյ առաջի ոգիտաց, դու լուռ
լեր. զի վատանդ մեծ է քեզ մատու-
ցանել զոր չև ևս է քաջ որոշեալ։
Եւ եթէ նախատեսցէ ոք զքեզ իբրև
զոգէտ և ոչ 'ի խոր խոցիցիս ընդ-
անարգանան, ծանիր զի սկսար լինել

խոնարհաբար՝ի վայրկենէ այսի։ Զոր-
օրինակ և գառինք ոչ եթէ երթան
յուցանելաւ հովիւս թէ որչափ ինչ
կերանն, այլ յեա մարսելոյ զճա-
ւրակն՝ գան բերեն զասր և զկաթն.
այնպէս և դու մի՛ ճոռոմեր առաջի
ոգեւոց առածս չքնաղս, այլ եթէ
բարեաւք որոճացեր զայնոսիկ՝ ցոյց
՝ի գործոց քոց։

208. Եթէ գուցէ արուեստ բար-
եաւք խօսելոյ, գոյ արուեստ և բար-
եաւք լսելոյ։

209. Վասն էր ոգեաք հզօրա-
գոյնք են քան զքեզ՝ի վէճս բանից
մինչև ափիբերան առնել զքեզ։— Քանզի նոքա հաստատագոյն հա-
ւատս ունին ընդ մոլար սկզբունս
խրատանց, քան դու ընդ ճշմարտու-
թիւն սկզբանց քոց. ոչ՝ի սրտէ
բղխեն այնպիսի բանք, այլ՝ի շըր-
թունս ծնանին, վասն այսորիկ և
անզօրք են և մեռելատիպք.՝ի ծաղր
և՝ի ծանակ հասարակաց կարդեն
զվիճաբան առաքինութիւնդ՝ որով
բարեբեր զքեզ՝ի խօսելդ, և հալին
նոքաւ զմոմ յարևու։ ՝Ի բաց կաց

ուրեմն յարևէ՝ մինչ տակաւին մոմեղէնք են կարծեքդ։

210. Քնարահար ընդ առնուլն 'ի ձեռս զքնար, սեսան է զի չէ աղէ-յարմար և յարմարէ զլարն փուլթով։ Սա 'ի կենցաղավարել անքոյթ ընդ մարդկան՝ արժան է իմաստնոյ զնոյն օրինակ վարել ընդ մարդկան որով քնարահար ընդ աղեաց քնարին. քննել թէ ոյք իցեն թուլագաշնակք, և յարմարել և ածել 'ի ներդաշնակութիւն որպէս և առնէրն Սոկրատ։

211. Պատճառ կորստեան մերոյ այն է, զի այն ինչ առեալ ծայրիւք շրթանց զճաշակ իմաստասիրութեան՝ իմաստասէրք կամիմք երևել և այլոց նախ լինել օգտաւէտք. կամիմք նորոգել զաշխարհս։ Վաշ բարեկամդ իմ. նախ նորոգեա զքեզ և ապա ցոյց մարդկան զայր իմաստասիրութեամբ յարդարեալ։ Սեղանակից լինելով նոցին, և ձեմելով ընդ նոսին, կրթեա զնոսա օրինակաւ քով. սեղն տուր նոցին յամենայնի. զաստենեսին նախատամ-

ծալ արա քան զքեզ. համբեր նոցին յամենայնի։ Սոքօք լեցիս նոցա օգտակար։

212. Եթէ ցուցցես անզգամին եթէ զոր ոչն կամի զայն առնէ, և չառնէ զոր կամին, ուղղեսցես զնա. իսկ եթէ զայդ ոչ ցուցանես նմա, մի՛ տրտնջեր զնմանէ, այլ զքէն և եթ կալ տրտունջ։

213. Եթէ կամիցիմք լինել ճշմարիտ խմաստասէրք, արժան է մեզ այնպէս յարգարել զկամն՝ զի կազմ և յարմար գացին առ ամենայն հանդիպեալսն. որպէս զի եղիցուք միշտ շատացեալք եթէ գիտեսցի ինչ և եթէ ոչ։ Այսու զայս մեծ օգուտս շահիմք, զի որոցցանկամքն՝ անվնասք ստանամք, և յորոց երկնչիմքս՝ զերծանիմք։ Եւ այսպէս անվնաս և անխռով քաղաքավարեսցուք ընդ մերձաւորս մեր, անսագիւտ պահելով զամենայն զբնական և զստացական կցորդութիւնս մեր. այն է լնուլի կատարեսցուք զպարտս հօր, որդւոյ, եղբօր, քաղաքացւոյ, ամուսնոյ, դրացւոյ, ընկերակցի, ուսուցչի և հպատակի։

214. Զիք ուսումն կամ՝ արուեստս որ ոչ քամահիցէ զաղիտութիւն և զաղէտս։ Մինթէ իմաստասիրութիւն միայն արդոյ համարիցի զայն, և դղրդեսցի յանարգանաց նոցին և 'ի մոլար դատմանէ։

215. Ընդէր իցէ 'ի վէգ դալ ընդ այնոսիկ որք ոչ խելամտեն և բացայայտագոյն Հնմարտութեանց։ Զեն մարդիկ այլ քարինք։

216. Բժիշկ եկեալ 'ի տես հիւանդի՝ ասէ. ձերմն ունի զքեզ. ժուժկալեա այս օր յամենայն կերակրոյ, և ջուր ևեթ արբջիր։ Հիւանդն անսայ, շնորհս ունի և տայ զվարձան։ Իմաստասէրն ասէ ցարդէան։ Իղձք քո անկարգք են, երկիւղ քո սնոտի և ծառայական, և կարծիքդ թիւրք։ Տդէան գնայ ընդ այն խոժոռեալ, և ասէ. ոհ, զի չարաչար վարեցաւ ընդ իս։ Ուսա՞ի իցէ այս խտիր 'ի միջի։— Բանզի հիւանդն զգայ յանձին զախտն, իսկ տդէան ոչ բնաւ։

217. Եթէ կամիս զարգանալ յուսումն իմաստութեան, մի ծանր

համարիր պակասամիտ և ոչէտ երևել յարտաքին յիրս։

218. Մի խնդրեր երևել խմաստուն յաչս այլոց. և եթէ այր հոյակապ համարիցես յոմանց, դու մի հաւատար անձին։ Գիտելով քաջ, զի չէ հեշտին պահել քեզ զկամս ըստ բնութեան և ըստ արտաքին իրաց. այլ հարկ անհրաժեշտ 'ի վերայ կայ, զի թէ յարիցես 'ի մին՝ լքցես զմիւսն։

219. Այս պայման և բարք են ոգիին. ոչ յանձնէն ակն ունել զբարին իւր կամ զչար, այլ միշտ յօտարաց։ Իսկ պայմանք և բարք խմաստասիրին են, զամենայն զբարի և զչար իւր՝ ակն ունել յինքենէ։

220. Ուստի է դառնութիւնդ այդ և բարձրայօնութիւն խմաստասիրիդ փոքրիկան։ Համբէր սակաւ մի, բարեկամ. ընդ հուպ պերճաբոյն ևս եղէց. սակաւին չեմ խորարմատ 'ի սկզբունս զոր ուսայ և ընդ որս հաւանեցայ. երկիւղ է ինձ դեռ ևս ընդ սիարութիւնս իմ։ Պա-

սեռ սակաւիկ մի եւ զօրացոյց, եւ տեսցես յիս տարօրինակ ինն գոռոզութիւն։ Անդրին տակաւին չէ եւ է աւարտեալ. եւ դեռ դեռ եւ ոչ է 'ի յանդհանեալ գործեռադործն։ Թող աւարտեսցի եւ ապա տեսցես զայն։ Այլ մի կարծիցես, թէ այս գոռոզութիւն յամբարտաւանութենէ լոյէ. այլ գոռոզութիւն վստահութեան եւ աներկեւանութեան 'ի ճշմարտութիւն անդր։ Գոռոզութիւն եւ պռատեալ յօնքն զոր տեսանես 'ի դէմս Արամազդայ՝ լոյէ՞ եւ այդ հպարտութիւն ըստ քումդ կարծեաց։ Ոչ. այլ անյողդողդութիւն է, անշարժութիւն եւ հաստատութիւն. այսպիսի արժան էր լինել աստուածոյ՝ որ ասէն ցքեզ. «Որ ինչ միանգամ ակնարկելով յօնիցս հաստատեցի՝ անսալեալ է, անդարձ եւ անվրէպ»։ Գուն գործեցից նմանող լինելոյ մեծիս այսմ օրինակի։ Տեսցես զիս հաստատիմ, պարկեշտասէր եւ արիասիրտ. անտեղեակաչի յուզմանց եւ վրդովմանց՝ յորոց ծագին ահա-

ուրքն կոչեցեալ արկածք։ — Այլ տեսցիս զքեզ և անմահ, և անծերանալի և անախտ։ — Ոչ. այլ տեսցես զի գիտեմ մեռանիլ, և գիտեմ ծերանալ և հիւանդանալ. տեսցես զնեարդս իմաստասիրի՝ նեարդս կալի քաջ զդայուն։ — Ո՞րպիսի նեարդս։ — Իգձա՝ ոչ բնաւ 'ի դերև եղեալս՝ երկիւղս քաջայարմարս, որ զառաջս ունին զամենայն չարեաց. շարժուածս օրինաւորս և պատշաճս, խորհուրդս խոհեմաբար երկնեալս, և հաւանութիւնս անապատաւս։

221. Զէ ինչ դիւրին ընուլ զպարտս ըստ բուսոյ բարուց։ Մարդկենդանի է մահկանացու և բանական, և բանիւ որոշի յանասնոց։ Այրդ քանիցս և օտարանայ 'ի բանէն, և առանց բանի գործէ, մարդն անհետ լինի և անասունն 'ի վերայ երևի։

222. Ցմանք եմք այնոցիկ որ մեծամեծ համբարս կուտեալ ունիցին և կացցեն վախտք և ծիւրեալք. ոչ վարելով գարմանօքն։ Ու-

նիմք առածս չքնաղս և պատուի-
բանս գեղեցիկս, այլ զայս 'ի խօսել
վարեմք և ոչ 'ի գործել. գործք մեր
յամօթ առնեն զբանս մեր: Զեմք
տակաւին մարդիկ, և կամիմք ան-
ցանել 'ի կարգս իմաստասիրաց. կա-
րի է մեզ բեռնդ այդ: Զորօրինակ
թէ ոք ոչ ունելով զօրութիւն բառ-
նալոյ բեռինս երկուց լաւերց՝ բուռն
հարցէ բառնալ զվէմն Իսայայ:

223. Առաջին և կարևորագոյն
մասն իմաստասիրութեան՝ ճառէ
զգործնական պատուիրանաց. օրի-
նակ լիցի, Ոչ է պարտ սուտ. երկրորդն,
փաստիւք ցուցանէ զնրատան-
որպէս. ընդէր չիցէ պարտ սուտ.
իսկ երրորդն ընծայէ զհաւատս
փաստիցս. որգոն. ընդէր այսոքիկ
իցեն փաստք, և զինչ սոցին ճշմար-
տութիւն և ստուգութիւն. և գար-
ձեալ զինչ իցեն ցոյց և հեռեանք,
հակառակութիւն և ճշմարտու-
թիւն և ստութիւն: Երրորդս այս
մասն կարևոր է 'ի սակս երկրոր-
դին, երկրորդն վասն առաջնոյն, և
առաջինն կարևորագոյն քան զամե-

նայն, յորում արժան է կալ և մնալ: Իսկ մեք վերը 'ի վայր առնեմք զկարգն. զկայ առնումք զբնխովին յերբորդումն մասին. ամենայն վաստակք մեր և ամենայն ուսումն յերբորդն կրթին, այն է 'ի հաւատին. և թողաք զքաջք զառաջինն, որ է կրթութիւնն և գործնականն: Վասն այսորիկ և ասեմք իսկ. թէպէտ և միշտ 'ի պատրաստի կամք ցուցանելոյ թէ չէ օրէն ասել:

224. Գրեմք առաձս դեղեցիկս. այլ ոչ՞ մեր քաջ'ի միտ առեալ զայնոսիկ, կամ ներակրթեալ 'ի նոսին: Եւ բան զոր ասէին զԱկեդեմոնացւոց, եթէ «Առիւծք են առանին և կապիկք յԵփեսոս», ո՞չ ապաքէն 'ի դէպ եղանիցէ բազմաց 'ի մէնջ խմաստասիրացս: Առիւծք եմք 'ի լաբրանս մեր, և կապիկք 'ի հրապարակս:

225. Զի՞ է զի ասոյիկեան կերպարանիս: Ըստ գործոց քոց կալ քեզ անուն, և մի՛ պճնիր անուամբ որ չէ քեզ անկ, և զոր անպատիւ առնես: Զբազումն տեսանեմ

ատոյիկեան առաջս բարբառելով, այլ ատոյիկեան և ոչ զոք։ Յոյց լինէ ատոյիկեան մի, շատ է լինէ և մի ոք։ Ատոյիկեան ասեմ, որ 'ի հիւանդութեան երջանիկ է, երջանիկ 'ի վաստանդս, 'ի մեռանելն՝ երջանիկ, և անդարձեալ և զբրպարտեալ՝ գտանի երջանիկ։ Եթէ ոչ գտցես զայդպիսի ոք ցուցանել լինէ ատոյիկեան կատարեալ և՝ 'ի չափ հասեալ, ցոյց լինէ գոնեա սկսնակ զոք։ Մի՛ խանդարլինէ ծերունւոյս զմեծ զայս հանդէս, յոր խոստովան լինիմ թէ չև ևս է իմ վայելեալ։ ցոյց լինէ այր մի որ կամիցի հաւանել յամենայնի կամաց աստուածոյն, որ ոչ բնաւ քանքարտիցի ոչ զգից և ոչ զմարդկանէ, որոյ ոչ ելցէ բնաւ 'ի դերև ելեալ յիղձս փափաքանացն, որ ոչ խոժոռեալ ընդ ինչ, որ չունիցի ոչ մախանս, ոչ ցասումն և ոչ նախանձաբեկութիւն։ որ 'ի մահկանացու մարմնի ատ ծածուկ ինն հաղորդութիւն ունիցի ընդ դիս, և ըղձանայցէ մերկանալ զմարդն առ 'ի ըզդենուլ զաստուածն։

226. Չէ պարտ 'ի կենցաղումս արագ արագ տագնապիլ։ Առաքեմք զոք քննել իրազեկ լինել անցիցն անցելոց. այլ ոչ բարբոք ընտրեմք զլրտես մեր. քանզի առաքեմք ըղվատ ոք՝ որոյ ընդ առնուլն շուկ դուզնաքեայ, և ահիւ ըմբռնեալ ընդ իւր իսկ ատուերն, վերադառնայ առ մեզ ամենևին զարհուրեալ։ «Մահ, աքսոր, զրպարտութիւն և աղքատութիւն՝ հասեալ գան»։ — Բարեկամ, խօսեաց վասն քո։ Յիմարք եմք մեք՝ զի զայդպիսի ընտրեցաք այր լրաբեր։ Դիոգենէս որ նախ քան զքեզ գնաց 'ի լրտեսել, այլազգապոյնս էտ մեզ տեղեկութիւն. նա ասէր մեզ, եթէ մահ ոչ է չար՝ եթէ չիցէ անարգական. և թէ զըրպարտութիւն շնչիւն միայն է խելայեղից անձանց։ Իսկ զի՞նչ ասաց զվատաակոց, զցաւոց և զաղքատութենէ։ Ասաց, բա. «Կրթութիւն է ընտրելագոյն քան զեղրածիրանին պատմուճան»։ Միով բանիւ, ասաց նա. «Ոչ տեսի բնաւ թշնամիս. յանդորրու կայ ամենայն. ապէ հա-

յեաց և տես զիս. միթէ ինչեմ դա-
նաբեկ, կամ վիրաւոր, կամ փախըս-
տեայ» : Ահա այսպիսիս արժան է
առաքել լրտեսս :

227. Մի ոմն յաշակերտաց իմոց
որ սակաւ ինչ հակամէտն էր 'ի
շնականն իմաստասիրութիւն, ե-
հարց ինձ յաւուր միում, թէ զի-
ա՞րդ արժան էր լինել իմաստասիրի
ազանդոյս այսորիկ, և զինչ առնել
առ 'ի յաջողելոյ 'ի նմին : — Բարե-
կամդ իմ, եառ նմա պատասխանի.
զայս ևեթ ունիմ ասել քեզ, զի ա-
մենայն ոք որ բուռն հարցէ զայս-
պիսի մեծամեծ իրաց՝ յոր չինչ կո-
չեցեալ 'ի դից՝ յիմար է, հանդոյն
առն որ մտանիցէ 'ի տուն մի մեծ և
կամիցի տէր լինել նմին, և կամ հան-
դոյն Թերսիդեայ կերպարանիցի
զԱգամեմնոն : — «Այլ ես գիտացից
բարուոք արկանել զանձամբ գըր-
գլեակս, և ամպան համակ կարկա-
տուն. գեանախշաի եղէց, և կրեցից
մախաղ և յուսպ, և թշնամանեցից
զամենայն ոք» : — Ո՛ բարեկամ, ե-
թէ այլ ուս գաստիս զիմաստասիրու-

թիւնս զայս՝ չարաչար գատիս։ Իմաստասէր կիւնիկեան համակ զծրգարեալ է համեստութեամբ, և ցանկ հրապարակատես լինի, քանզի չառնէ ինչ բնաւ անվայելս։ Առաքեալ է 'ի գլոց յուղղել զմարդիկ, և ուսուցանել նոցա օրինակաւ իւրով, եթէ մերկ և անինչ և ծածկոյթ զերկին միայն ունելով և խրշտեակ զգեստին, հնար է լինել երջանիկ. այր՝ որզախտաւորն թէպէտ և'ի մեծամեծաց ոք կոյէ՝ համարի ընդ գերիս. այր՝ որ չարատանջ և գանալեց լեալ, սիրէ և օրհնէ զայնոսիկ որ գանեն զնա և լլկեն. այր՝ որ զամենայն մարդիկ իբր զիւր մանկուն համարի, որ պահակեր լինի նոցին, որ խրատէ զնոսին խնամով և գորովանօք, իբրև զհայր, իբրև եղբայր, և իբրև պաշտօնեայ նոցին իսկ գլոց. միով բանիւ, այր՝ որում թէպէտ և գձձատեսակ՝ ալքայք և իշխանազունք ոչ անպատկառ գան 'ի տես։ Այսպէս և Ալէքսանդր ակնածէր 'ի Դիոգինեայ։

228. Եթէ ոք պարծիցի քաջ

խնամուտ լինել և մեկնել զգրուա-
ծքս Քրիւսիպպոսեայ, ասա գու-
ցանձն քո. Արդ եթէ Քրիւսիպպոսի
էր գրեալ խրթնաբանս՝ զգոյր առնս
այսմիկ տեղի պարծանաց։ Իսկ ես
զինչ կամիմ, եթէ ոչ ճանաչել զբը-
նութիւն՝ և հեռաւոր լինել նմին.
խնդրեմ ուրեմն, թէ ո՞ ոք քաջ մեկ-
նեաց զայն. և ասեն ինձ զՔրիւսիպ-
պոս. առնում զայն, և ոչ խմանամ
զբանսն. խնդրեմ զոք զի բացայայ-
տիցէ։ Ցայս վայր չիք ինչ կարևոր
որ կամ պատուական. իսկ յորժամ
գտանիցեմ թարգման քաջ, այնու-
հետև կայ մնայ ինձ վարել պատուի-
բանութիւն զոր մեկնեացն ինձ, և յար-
գիւն ածել. և ահա այս ևեթ է արդ-
ժանի մեծարանաց։ Քանզի եթէ
շատանայցեմ մեկնելով չափ զի-
մաստասէրն զայն, և սխրանայ-
ցեմ ընդ նա, զինչ լինիմ, բայց եթէ
քերական ոք՝ փոխանակ լինելոյ ի-
մաստասէր. այսու միայն զանազա-
նեալ, զի փոխանակ Հոմերի զՔրիւ-
սիպպոս մեկնեմ։ Արդ, յասել ու-
րուք ցիս, Մեկնեաց ինձ զՔրիւ-

սիպալոս, մեծապէս զամօթի հարկանիմ և կորանամ, եթէ ոչ ունիցիմ գործս հանգիտակս պատուիրանաց նորին։

229. Ընդէր է զի մարդիկ ոչ դատին զիմաստասիրութիւն, որպէս դատին զայլս յարուեստից։ Ամենայն արուեստագէտ եթէ ոչ գործիցէ զիւր գործն, նմա և եթէ գրեն զվնասն. ասեն եթէ անարուեստ է այրն, և ոչ ինչ չարախօսեն զարուեստէն։ Իսկ եթէ իմաստասէր ոք գթիցէ, չասեն զնա վատշուէր կամ անիմաստասէր, այլ ասեն. տեսէք որպիսիք ոմանք են իմաստասէրքդ. իմաստասիրութիւն առ ոչ ինչ է պիտանացու։ Ուստի՞ լցեն այս թշնամանք։ — Անոի՝ զի չիք ինչ արուեստ զոր ոչ գիտիցեն մարդիկ և ոչ բարուոք մշակիցեն քան զիմաստասիրութիւն. և կամ մանաւանդ անոի, զի կիրքն ոչ կուրացուցանեն զմարդիկ յարուեստս զոր վարեն և որ ինքեանց օգտաւէտք են, այլ կուրացուցանեն յայնմ՝ որ նեղէն զնոսա, դատափետէ և խայթէ։

230. Են ոմանք այնպէս զաչաց-
ցուքք, զի և զՀելիեստոս անգամ ոչ
համարէին քաջ դարբին, եթէ չէր
'ի նմա դդակն։ Զկնէ արդ ախմա-
բութեան՝ գանգատել ընդ անծա-
նօթանալն յայնպիսի խօթամիտ դա-
տաւորէ, որ զմարդիկ 'ի նշանակաց
ձևոյն ևեթ ընտրէ։ Վասն այսորիկ
և Սոկրատ անծանօթ էր յոլովից 'ի
մարդկանէ. երթային աղաչէին զնա
տանել զինքեանս առ խմաստասէր
ոք. և նա ինքնին առեալ տանէր։ Մի-
թէ տրտնջեսցէ երբեք զի ոչ համա-
րէին զինքն իսկ խմաստասէր։ Ոչ. ոչ
ունէր նա նշանակս, և հաճոյ էր
նմա լինել խմաստասէր առանց այն-
պիսի երևելոյ։ Եւ ո՞ր ուրեք երե-
ւեցաւ ոք խմաստասէր երբև զնա։
Էր և դու նոյնպէս. խմաստասիրու-
թիւնդ յայտնի լեցի 'ի գործոց քոց
ևեթ։

231. Համարիցի՞ ոք երաժիշտ՝
գնելով գիրս ինչ երաժշտութեան,
կամ ջութակ և կնտնոց։ — Կամ
լինիցի՞ ոք պայտար ունելով գլխարկ
և գոգնոց։ Իսկ դու խմաստա-

սէր կարծիցես զքեզ՝ ունելով մուրուս երկայնս, մախաղ և ցուպ և վերարկու։ Բարեկամ, զգեստդ՝ պատշաճ է արուեստին. այլ զանուն՝ արուեստն ընծայէ և ոչ զգեստն։

232. Կարծիցես թէ կոչիցեմ զքեզ վաստակասէր յորժամ զգիշերս ողջոյն պարապիցիս յուսու�, յաշխատել և յընթեռնուլ։ — Արդարև ոչ։ Կամիմ գիտել թէ յինչ պարապիցիս և ճգնիցիս։ Ոչ կոչեմ վաստակասէր զայն որ հսկիցէ զգիշերն ամենայն 'ի գտանել զհոմանին իւր, այլ կոչեմ զնա տարփածու։ Եթէ հսկեսցես վասն փառաց քոց, կոչեմ զքեզ փառասէր։ Եթէ առ 'ի շահել զարծաթ, անուանեմ շահասէր և ագահ։ Իսկ եթէ ոչնիցիս 'ի կրթել և յուղղել զբան քո, և վարժել զքեզ 'ի հնազանդութիւն բնութեան և 'ի լսուն պարտուցդ, յայնժամ միայն կոչեցից զքեզ վաստակասէր. զի այդ միայն վաստակ արժանաւոր է մարդկան։

233. 'Ի բարկութիւն մեծ բըր-

դեալ՝ի վերայ ծառայից քոց, զամենայն առնն վեր՝ի վայր առնես, խառվեսևգայթակղեցուցանես զմերձաւորս քո, և ապա կերպարանեալ նբրև խմաստուն՝ երթաս լսել ի մասասիրի որ Ճառիցէ զպարտուց մարդկայնոց և զառաքինութեանց։ Բարեկամ,՝ի զուր են քեզ այդ ամենայն գեղեցիկ պատուէրք, քանզի ոչ դաս յունկնդրութիւն կարևոր յօժարութեամբ, ապա դարձցիս անդրէն որպէս և եկիրդ։

234. «Յօրինեմ չքնաղ տրամախօսութիւնս, մատեանս ընտիրս շարադրեմ»։ Բարեկամ իմ, ցոյց ինձ մանաւանդ եթէ յաղթես կըրկից քոց, և ուղղես զնդձս քո, և՝ի կարծիս քո զՃշմարտութիւն խնդրես։ Հաւատարմացո ինձ թէ ոչ զանգիտես՝ի բանտէ և յաքսորանաց, ՝ի ցաւոց և յաղքատութենէ, և՝ի մահուանէ գլխովին։ Ապա թէ ոչ, թէպէտ և մատեանս գեղեցիկս յօրինեսցես, գիտասջիր զի տակաւին ոգէտ ոմն ես։

235. Որպիսի՞ կեանս վարիցես։

Յետ բարուք ննջելոյ՝ յառնես յանկողնոյ երբ և հաճիս, յօրանջես, քոշքոտիս, այսր անդր յեղյեղիս, և լուանաս զերեսդ։ Յետ այսորիկ կամ առնուս 'ի ձեռին վասթար ինչ մատեան առ 'ի ժամալուծառ լինել, և կամ շարագրես բանս ինչինս 'ի զարմացումն ոգիտաց։ Ապա ելեալ քո արտաքս, գնաս յայցելութիւնս, ճեմիս և զբօսնուս։ Դառնաս 'ի տուն, 'ի բաղանիս մտանես, ընթրես և ընկողմանիս։ Ոչ հանիս 'ի վերը զծածուկս խուսարին, զոր և գիւրին ինչ գուշակել։ Այսպիսի ունելով բարս էպիկուրեայս և ցոիս, բարբառիս հանդոյն Զենոնի և Սոկրատայ։ Ո՛վ բարեկամ, կամ զբարոգ փոխես և կամ զլեզուդ։ Խսաիւ պատուհասն՝ որ ինքնակամ զանուն Հռոմայ քաղաքացւոյ կրիցէ։ իսկ ոչք յափշտակեսն զվսեմական անուն ինմասասիրի՝ մնայցէն անպատուհասք։ Անհնար է այդմ լինել։ քանզի հակառակ է դիցն անկեղծի օրինաց, որոց պատիժս կշռեալ է համեմատ եղերանցն։

236. Որպէս օրէնք բժշկականին հրամայեն փոխոխել զօդ՝ որոց յերկարատև հիւանդութիւնք իցեն, նոյնպէս և խմաստասիրութիւնն հրամայէ այնոցիկ յորս գուցեն հնացեալ սովորութիւնք, զի երկիրն հայրենի տաճէ զնոսին:

237. Սովորութիւնք՝ հակառակ սովորութեամբք յաղթահարին: Սովորեալ իցես 'ի հեշտութիւնս, ընկճեա զայն ցաւօք: Կեաս պղերդութեամբ. ընդդրկեա զվաստակ. դիւրացասնութեան ես. համբեր թշնամանաց. գինեմոլ ես. ջուր եղեթ արբջիր: Այսպէս վարեալ ընդ ամենայն ախտալից սովորութիւնս, տեսցես ոչ վայրապար աշխատ եղեալ: Բայց տես, մի դիմագրաւ լինել 'ի վտանգ դլորման, մինչև քաջ վստահացեալ յանձն քո. զի մարտն դեռ ևս կատաղեալ է. այն որ քեզ յաղթեացն, կարող է միւսանգամ յաղթել:

238. Կենակցութիւնք չեն զերծ 'ի վտանգէ: Եթէ յաճախեսցես օթևանել առ ախտամոլն, մինչև

քաջ պնդակազմն եղեալ՝ առաւել գոյ երկիւղ թէ նա զքեզ ապականեսցէ, քան յոյս թէ զու զնորա թերութիւնս ուղղեսցես։ Եւ զի այսքան խէթ է 'ի կենակցութենէ ազիտաց, արժան է բազում զգուշութեամբ վարել ընդ նոսա և մեծ խոհականութեամբ։

239. Բարեկամ իմ, կրթեա զանձն քո յերկարագոյնս ընդդէմ փորձութեանց և ըղձից. քննեա զամենայն շարժուածս քո, և տես մի զուցէ լցեն զոքա ախտացելոյ ախորժակք կամ կնոջ դաշնկոսի։ Զանա՛ մեալ 'ի ծածուկ ընդ երկայն ժամանակս։ Իմաստասիրեա վասն քո միայն։ Այսգունակ և պատուղք բուսանին. սերմն ընդ երկար ժամանակս թաղեալ և ծածկեալ մնայ յերկրի, և առ սակաւ սակաւ աճեալ առաքանայ. այլ եթէ բերցէ զհասակն՝ մինչև ծղօտին յոտ եկեալ, թերակատար լինի, և նման տնկոց պարտիզին Ադոնիսեայ։ Տենչք անապատաւ պերճանայ տարաժամ կանխեցին երևեցուցանել զքեզ. ցուր-

տրն կամ Ջերմն հարին զքեզ։ Կենդանի թուիս, քանզի զլուս քո դեռ ես սակաւիկ ինչ ծաղկազարձ է, այլ մեռեալ ես, քանզի արմատքդ գօսացեալ են։

240. «Քանի՞ ողորմելի եմ ես, զի չունիմ ես ժամանակ ուսանելոյ և ընթեռնլոյ»։ — Բարեկամ, ընդէր ուսանիցիս. մի՞ արդեօք վասն անոսի ինչ հեռաշօռութեան։ Եթէ այդպէս լցէ՝ արդարև կարի եղկելի ես դու։ Այլ արժան է ուսանլինել 'ի պատրաստութիւն բարի վարուց։ Սկսիր այսօր իսկ կեալ բարեաւք։ Ամենայն ուրեք մարթ է քեզ կատարել զպարտս. և առաւել մարդն դէպք քան զգիրս։

241. Ջերմն ունի զքեզ, և դու որտանչես և ասես, չկարեմ ուսանել։ Բաբէ, և վասն էր ուսանիս։ Ո՞չ ապաքէն զի լինիցիս համբերող, անյողդողդ և անխռով. լեր այդպիսի և 'ի Ջերմանդ, և քաջ գիտուն լցես։ Եւ Ջերմն մասն ինչ է կենաց, որպէս ձեմեն և ուղևորել. և օգտակար իսկ է, վասն զի փորձէ

զիմաստուն, և ցուցանէ և նմա զհանդէս յառաջագիմութեան։

242. Ջերմն ունի զքեզ. այլ եթէ որպէս պարտն ելցէ ունելցիս զայն, ունիս զամենայն զլաւն զոր մարթ ելցէ գտանել 'ի ջերման։ Եւ զինչ ելցէ ջերմն ունել որպէս արժանն է. այս իսկ է չգանգատել ոչ զդից և ոչ ըզմարդկանէ, չտագնապիլ բնաւ ընդ պատահարս, քանզի ամենայն ինչ բարւոք ընթացցի. քաջութեամբ ակն ունել մահու, մի յանչափս խնդալ եթէ ասիցէ բժշկին թէ բարւոք կաս, և մի խռովել եթէ ասիցէ թէ չարաւ կաս։ Քանզի զինչ է չարագոյն կալ. բայց եթէ հուպ ևս լինել 'ի վերջին սահման՝ յորում մեկնեսցի հոգին 'ի մարմնոյ։ Եւ չարի ինչ կոչիցես զանչատուութիւն այդ։ Իսկ եթէ դա այսօր ոչ հասցէ, միթէ ոչ 'ի վաղիւն ժամանեսցէ։ Միթէ կորիցէ աշխարհ եթէ դու մեռցիս։ Հանդարտեաց ուրեմն 'ի ջերմանդ որպէս և յառաջութեան։

243. Այլ ազգ է պապակումն ջերմնոսի և այլ պատուք առողջ

մարդոյ։ Սա թէ ըմբռէ՝ վաղվաղակի հանդէպ, և շինչանի պատուքն. իսկ նա առ վայրկեան մի հեշտացեալ, զգայ անդէն զզուանս. ջուրն յեղաշրջի 'ի մազաս, ժայթքէ արտասուքս, աղիքն տոչորին, և առաւել ևս զայրանոյ պապակումն։ Զնոյն է տեսանել և առ այնոսիկ որ անյապուշեամբ ինչս մթերիցեն, որ ապահելով ունիցին պաշտամունս, և անյապուշեամբ ունիցին կին ջրքնաղ։ Ահա պապակումն ջերմնոտի։ Անսի ծնանին նախանձաբերկուութիւնք, երկիւղք, աղճատանք բանից, խորհուրդք սիրդք, և գործք պագշոտք։ Բարեկամդ իմ, քանի՞ իմաստուն և պարկեշտասէր էիր երբեմն։ Ո՞ւր են արդ պարկեշտութիւնն այն և իմաստութիւն։ Փոխանակ ընթեռնլոյ զմատեանս Քրիւսիպպոսի և Զենոնի, ընթեռնուս զքաղաքնելի գրեանս զԱրիստոտիդեայ ասեմ և զԵւեմիսեայ։ Փոխանակ սքանչանալոյ ընդ Սոկրատ և ընդ Դիոգինէս և հետևողս նոցին լինելոյ, հրաշանաս և 'ի նմանուս

թիւն կրթիս կանացաւեր մարդկան։ Գեղեցիկ կամիս երևել, յարդարես կազմես զանձնդ. 'ի մեղոյր և 'ի ծաքիր իսկ շպարէիր առ չքնաղ երևելոյ՝ եթէ գոյր հնար. ունիս հանդերձս փափուկս, և թանթաւիս անոյշ իւղովք և օծանելեօք։ Զգաստացիր, գիր մարտ ընդ անձին քում գարձիր յառաջին համեստութիւնդ, 'ի պատիւդ և յաղաստութիւն. միով բանիւ, լեր վերբստին այր։ Ցիշեմ զժամանակն՝ յորում եթէ ասէր ոք ցքեզ, թէ «Ահա Եպիկտետեայ տան շնալ, կամ կրել յանձին այսպիսի հանդերձս, և ստիպեն երևել արտաքոյ օծեալ անուշահոտ իւղով», արագարագ փութայիր լնձ յօգնութիւն. և կարծեմ եթէ և սպանանէիր իսկ զհրապուրողն։ Իսկ ասատանօր չեն պէտք սպանութեան. զգաստանալ ևեթ արժան է քեզ. խօսել ընդ անձին քում։ Զիցես դու Ճարտարապետն քան զայլս առ 'ի համոզիլեր լինել անձին քում։ Սկսիր արդ դաստապարտ առնել զոր արարերդ։

Այլ միայն փուլթա ձեպեաց մինչև ջուրցն հոսանաց ձգեալ վարիցեն զքեզ։

244. Մի ինչ խոչ լինիցին քեզ՝ի փոխելոյ զվարսդ՝ այսն և սրհամարհանք բարեկամաց քոց։ Մինթէ նախամեծար առնիցես կալ մնալ յախտս և լինել հաճոյ նոցին, քան առաքինանալ՝ թէ և անհաճոյ նոցին լինելով։

245. Մի վհատիր, այլ նմանեաց հրահանգատուացն, որք թէ տեսցեն զոք՝ի պարմանեաց գթել՝ի գեռին, հրամայեն՝ի վերայ կանգնել և անդրէն ոգորել։ Զնոյն ասա և դուցանձն քո։ Զինչ համբոյր քան զհոգի մարդոյս. միայն կամեաց, և ամենայն ինչ վճարի։ Այլ եթէ թուլասցիս, կորեար, և ոչ ևս բուժեսցիս։ Կորուստ քո և փրկութիւն՝ի քէն է։

246. Ոչ յաղթութիւնք ոլիմպիական մրցանաց, և ոչ յաղթանակք պատերազմաց՝ առնեն զմարդ երջանիկ։ Այլ որ յաղթանակէ՝ի վերայ անձին իւրոյ՝ նա եթէ է երջան-

նիկ։ Պատերազմ են փորձութիւնք և առիթք։ Ի պարտութիւն մատնեցար մի անգամ, երկիցս և բազում անգամ։ մուտ՝ ի պայքար վերստին։ Եթէ ուր ուրեմն յաղթեսցես՝ լիցիս երջանիկ յամենայն կեանս քո, որպէս այն որ յաղթեաց հանապազ։"

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս կանանց և հեղուսիանց։

247. Ապիրատութիւն և վատութիւն է ասել՝ թէ չիք խտիր ընդ դեղեցկութիւն և ընդ տգեղութիւն։ Եւ զիարդ. միթէ Թերսիդէս լեցի հաճոյ աչաց որպէս Ադիլլէս. և կին տգեղ՝ յանկուցիչ որպէս զՀելենէ։ Անտգորոյն և ամարդի բարուց է զայդ ասել. և բարբառ է այնոցիկ որք անծանօթք են բնութեանց իւրաց, և խիթան զի ընդ իմանալն

զնատիր նոցին՝ և քարշեալ ձգեցին 'ի պարտութիւն մատնեալք։ Ոչ եթէ ժխտելով զդէղեցկութիւն՝ հնար կայէ խոյս տալ 'ի նմանէ, այլ մարթէ և Ճանաչել և Ճողոպրել։

248. Մինչև ամուսնացեալ՝ գուն գործեա չառնուլ զՀաշակ տրուփանաց, կամ մի առնուցուս Հաշակ որ ոչ կցէ ըստ օրինաց. այլ մի լինիր անոպայ առ այնոսիկ որ փորձինն նովաւ, և մի խատիւ յանդիմանիցես, և մի յամենայն ժամ պարծիցիս ընդ ժուժկալութիւն քոյին։

249. Յորժամ ջեռմուռնք մոացդ ածցեն քեզ խորհուրդս տուփանս, մի լինիր անձնամատն. այլ ասա վաղվաղակի առ խորհուրդսդ. «Կաց առ վայր մի ցուցակութիւն մոաց, մինչև տեսից թէ զինչ գուցկես, և զինչ զոր յանդիման ինձ առնես, թող զի քննեմ։ Մի թողուր նմա յառաջ ևս անցանել, և ցուցանել քեզ պատկերս առաւել հրապուրիչս. զի եթէ թողցես այդմ՝ ահա կորեար, և ընդ քարշ վարեալ գնայցես։ Փոխանակ քաւմնելի

պատկերացն՝ սակայն զնա երևե-
ցուցանել քեզ պատկերս շնորհա-
ւորս, չքնաղագոյնս և ազնուագոյնս.
այսոքիւք խուսափիցես անտի։

250. Առ ամենայն փորձութիւն
սուտ դու ցանձն քո. ահա մեծ պա-
տերազմն առաջի կայ, և գործ սա-
տուածական. զի թագաւորու-
թեան, ազատութեան, երջանկու-
թեան և անմեղութեան են բանք.
յիշեա զատուածն. զնոսին կո-
չեսջիր քեզ'ի թիկունս, նոքա մար-
տիցեն ընդ քո։ Ապաքէն յօգնու-
թիւն կոչես զԿատար և զՊոլի-
տևկիս 'ի վտանգի մրրկաց. մեծ կա-
է մրրիկ փորձութեանդ։

251. Ի փորձութիւն անկեալ՝
եթէ թողցես առ վաղիւն զպատե-
րազմն, եկեսցէ օրն վաղուի, և դու
ոչ մարտնչիցիս բնաւ։ Այսպէս օր-
յօրէ յերկարաձգեալ, ոչ միայն 'ի
պարտութիւն մատնեսցիս, այլ ան-
կցիս և յանդգոյութիւն և ոչ ի-
մասցիս զի մեզանչես. և ստուգա-
պէս զփորձ առցես զՀշմարտու-
թեան ասողին Հեսիոդեայ.

«Որ ոք առնէ օր՝ի յօր,
Անկցի չարեաց միշտ՝ի խոր»։

252. Զինչ գործէ որ զհետ պնդի-
ցի կնոջ ընկերի իւրոյ։ Ոանհար առ-
նէ զհամեստութիւն և զհաւատար-
մութիւն. բռնաբարէ զդրացիս, ըզ-
բարեկամութիւն, զընկերութիւն,
և զսրբութիւն օրինաց. ոչ ևս է նա
ոչ բարեկամ, ոչ դրացի, և ոչ քա-
ղաքացի։ Նա և սարսուկ անգամ լի-
նել չէ պիտանացու. այլ անօթ ինն
է անպիտան՝ արտաքս ընկենլի։

253. «Հասարակաց են կանայք,
այս օրէնք են բնութեան», ասէր
ց՝Դիոգինէս լիակ ոմն՝ի շնութեան
ըմբռնեալ։ Սա որ էր պատաս-
խանի Դիոգինէս. Կերակուրք է-
գեալք՝ի սեղան՝ նախ հասարակաց
են. այլ իբրև բաշխին իւրաքանչիւ-
րոց բաժինքն, այնուհետև լիովք և
անպատկառ համարիցին՝ եթէ առ-
նուցուս զմասն մերձաւորիդ յըս-
կաւառակէ նորին։ Հասարակաց է
և թատր ամենայն քաղաքացեաց,
այլ յորժամ անցնիւր զնատարանն
ունիցի, անմարթ է քեզ և անվայել

շարժել 'ի տեղւոյն զմերձաւորդ և նստել 'ի տեղի նորին։ Սակայն և կանայք հասարակաց են. այլ 'ի բաշխել զնոսին օրէնսդրի և կարդել միոյ միոյ այր, զնարդ կարիցեն աննենդ մտօք արհամարհեալ զքոյդ՝ առնուլ զընկերիդ։ Եթէ զայդ տունեն՝ չեն դու մարդ, այլ կապիկ կամ գայլ դիշախանձ։

254. Կանայք՝ ցորչափ մանկամարդք լցեն՝ սիրուհիք կոչին յարանց իւրեանց. և նոցա տեսեալ զի հաճոյ երևելով արանց իւրեանց մեծարեալք լինին 'ի նոցանէ, այնուհետև ոչ այլ ինչ խորհին բայց միայն պաճուճիլ զի հաճոյանիք դացին. զամենայն վստահութիւն և զյոյս 'ի զարդս իւրեանց դնելով։ Զկնք ինչ ուրեմն օգտաւէտ և կարևորագոյն քան թէ ազդ առնել նոցա, եթէ այնքան պատուոյ և մեծարանաց արժանիք լցեն՝ որչափ ունիցին իմաստութիւն, պարկեշտութիւն, և համեստութիւն։

255. Եթէ ցնորք մտացդ փափկութիւնս ինչ յանդիման արաս-

ցեն քեզ, ժուժկալեաց որպէս առ այլ իրս, առ ահի ընդ վայրաքարշ լինելոյ 'ի նոցանէ։ Թող մնասցէ քեզ հեշտութիւնն այն, և յամեսցէ առ վայր մի. և դու արկ 'ի կշիռ զկըրկին ժամանակն, զվայելմանն և զապաշաւանաց որ զհետ գայցեն, և զկշռամբանաց զոր անձամբ անձին գիցես. և զսոցին հակառակ՝ զգոհութիւն զոր ունիցիս և զգովեստ զոր անձինդ տայցես՝ եթէ հակառակն կաս հեշտութեան։ Եւ եթէ տակաւին Թուիցի քեզ ժամանակ վայելելոյ զհեշտալին՝ տես քաջ՝ մի գուցէ զինաթափ եղեալ անկանիցիս 'ի հրապոյրս 'ի խայծից անտի և սադրանաց. կարգեա՛ ընդդէմ նոցին զմեծագոյն և սահմանս վկայութեան գիտակցութեանդ եթէ յաղթող գտար։

256. Եթէ զդէմ կալոյց կնոջ գեղեցկի որ կամիցի հրապուրել զիս, ասեմ ցանձն իմ. Ահա բարեաք է քեզ այս, Եպիկտետ, և առաւելագնորհ՝ քան զհերքելդ զնրբագոյն ձեռնարկս խմաստակաց։ Եթէ հա-

կառակ կայից թելագրութեանց նորա և մերժելից զիտալաքշանան, ունիմ պարծանս առաւելագոյնս քան եթէ յաղթեալ էր իմ և լուծեալ զբազմակնճիռն հաւաքաբանութիւնս: Այլ զիարդ հնար ինչ զգէմ ունել այսքան բուռն հրապուրանաց: — Միայն փափագելով լինել հաճոյական անձին քում, և գեղեցիկ երևել յաչս դից. միայն ջանալով անսխեղծ պահել զմարմին և զհոգի:

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս խնամոց մարմնոյ:

257. Նշանակ յայտնի թանձր մասց է յերկարագոյնս խնամ առնել մարմնոյ. այսինքն է, մարդկիլ ընդ երկար, զգինեաք անկանել յերկարաձիգս, ուտել յաճախ, և պարարակել ընդ ժամն ձիգս յայլ ա-

մենայն պէտս մարմնականս։ Զայդ ամենայն չէ պարտ ունել առ կարեւոր ինչ, այլ իբրև յաւելուած ինն կենաց, և իբրև 'ի հարևանցի պարտուել 'ի նոսին. այլ զամենայն ջան և զփոյթ արժան է հասատաւել 'ի խնամս մուտց։

258. Բարեկամդ իմ, այր եցես եթէ կին մարդ։ Եթէ այր ես, զարդարեա զայրն, և մի ցուցաներ մեզ հրէշ ինչ կամ ճիւաղ։ Զի՞նչ կամիր Սոկրատ ասելով ցԱլկիբիադ, թէ Էր գեղեցկագոյն։ Տայր նմա խրատ զանց առնել զմարմնական գեղեցկութեամբ, առ 'ի վաստակել 'ի վայելչութիւն հոգւոյն։ — «Ապա ուրեմն պարտ եցէ ինձ լինել աղտեղի և զազիր»։ — Քաւ լեցի. այլ արժան է մաքրութեանդ և ողորկութեան՝ լինել այրական և անկ մարդոյ։

259. Անբծութիւն վայել է հոգւոյ, մաքրութիւն մարմնոյ։ Բնութիւնն ինքնին ուսուցանէ քեզ զմաքրութիւն. զի որպէս անհնար է թէ յետ ուսանելոյդ չմնայցէ ինչ աղտ

յատամունս, բնութիւն եմ քեզ զՔուր առ 'ի լուանալոյ զբերանդ, զի լինիցիս մարդ և մի խոզ։ Նա ինքն յարդարեաց քեզ բաղանիս և լուղս և կտաւիս, քերիչս և արջասապ, որովք մորթ մարմնոյդ մաքրեսցի 'ի քրտանց և յաղտեղութենէ։ Եթէ ոչ վարիցիս այսոքիւք՝ չիցես մարդ։ Մի թէ ո՞չ ունիցիս խնամ ձիոյդ զոր տաս քերել քերչաւ, և շանդ զոր տաս սանդրել, շփել և սրբել։ Արդ մի վատթարագոյն ունիցիս զմարմինդ քան զերիվար, և լուա զայն և մաքրեա։ Մի զզուեցուցաներ զոք. մի ոք փախիցէ 'ի քէն. քանզի ո՞ ոչ դարշեսցի մերժեսցի յաղտեղոյ և 'ի չարահոտէ։ Ո՞չ լաւ ևս ի՞նչ քեզ թողուլ զքաղաք և երթալ յանապատ, քան դալ մտանել զաղբաբար 'ի տաճարս, ուր չէ վայել անդամ թքանել և սրբել զունդունս։

260. Եթէ փիլիսոփայ ոք աղտեղի, անդարման և քատմնելի հանդոյն եղեռնաւորի 'ի բանտէ զերծելոյ՝ վարդապետիցէ ինձ առածս զե-

ղեցիկս՝ զինքդ յանկուսցէ զիս յինքն։ Ո՞րպէս սիրելի առնիցէ զիմաստասիրութիւն՝ որ յայդմ պայմանի եթող զնա։ Զկարեմ իսկ յանձն առնուլ լսել նմա, և չիք ինչ որ տացէ ինձ յարել՝ 'ի նա։ Արդ խնամ կալցուք մաքրութեան և վայելչութեան։ Զնոյն ասեմ և վասն աշակերտաց. սիրելի է ինձ պատանի պարապեալ յիմաստասիրութիւն՝ որ գայցէ առ իս մաքրեալ և յարդարեալ վայելչապէս, քան եթէ գայր աղտեղեալ և խղալից և խառուսցեալ վարսիւք. քանզի այնու Հանաչեմ եթէ ունի ինչ դաղտիարս զգեղեցկին և զհետ երթայ վայելչականին և պարկեշտի։ Որ խնամ տանի գեղեցկութեան՝ զոր Հանաչէ, գոյ յուսալ թէ խնամ կալցի և այնմ որ ծանուսցի նմա. Նեղքնոյն այնմ գեղեցկութեան ասեմ, որ տայ վարել բանիւ, և առ որով մարմնական գեղեցկութիւն ապեղութիւն եղեալ է։ Իսկ այնմ որ գայցէ գարշելի և զաղբատեսակ, Հարսլիւ և աղտիւ ծածկեալ, ան-

հարթ և խառուցեալ վարսիւք, և ժողովք երիթացեալ մինչև ցգոտին, զի՞նչ կարիցեմ ասել նմա առ 'ի խնդրամուտ առնել գեղեցկութեան՝ զորոյ չունի ինչ ամենևին զնմանատ։ Խոզ է նա որ նախամեծար առնէ զկոյանոցն քան զյատակագոյնն աղբերացս։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս ասա ուրինչ համարելոյ զԼինչնամանս։

261. Մերձաւորս ունիմ անօրէն, և հայր անապրոյն։ Անզգամք են վասն ինքեանց, բարեբաւք վասն իմ։ քանզի հրահանգեն և փորձեն զհեզութիւն իմ, զարդարախոհութիւն և զհամբերութիւն։ Ահա քարոզակն Հերմեայ։ այլ ոչ շրջեաց յոսկի զոր ինչ և շոշափեցից ես։ և չէ ինչ այդ մեծ։ այլ՝ 'ի բարի շրջեաց զամենայն զոր չարիս համա-

ին մարդիկ, զհիւանդութիւնս ա
սեմ, զաղքատութիւն, զանարգանս
և զնոյն իսկ զմահ։

262. Ամենայն ինչ ունի երկուս
կողմանս, մին կարի դիւրատար
միւսն դժուարին յոյժ։ Եթէ եղ-
բայր քո անիրաւիցէ քեզ, մի՛ ու-
նիցիս 'ի թերկ անիրաւութեանն
զոր գործէ. զի ոչ ըմբռնել մարթ է
քեզ այսի և ոչ կրել. այլ կա՛լ զայն
'ի միւսմէ թերէ, յայնմանէ՝ որ
յանդիման քեզ առնէ զեղբայր,
զայր որ սնաւ ընդ քեզ, և կալեալ
'ի բարեաւք կուսէ՝ լիցի քեզ տա-
նելի։

263. Թշնամանեա զքար. զի՞նչ
օգտիցիս անտի. նա կայ մնայ ան-
զգայ. լեր նմանող նմին, և չլուսե-
լոյն արա զթշնամանան զոր գիցեն
քեզ։

264. Գիտեա զի ոչ այն ոք որ
թշնամանէն զքեզ, և ոչ որ հարկա-
նէն՝ լակեն զքեզ, այլ կարծիքն զոր
ունիս զնոցանէ՝ որպէս թէ նոքա
նեղիցեն զքեզ։ Արդ յորժամ
տրամեցուսցէ ոք զքեզ և գրգռիցէ

'ի ցասումն, զիտեա զի ոչ նա ինչ չարժէ զքեզ՝ այլ քո կարծիք։ Գուն գործեա արդեւլուլ զՔեռումն մտացդ զի մի բռնասցի 'ի վերայ քո. զի եթէ շահեսցիս ժամանակ և յամեցուսցես՝ ապա դիւրագոյն լիցի քեզ ինչեալ անձին քում։

265. Որպէս մարդիչ մրցութեանց հրահանգէ զիս 'ի Հաղպատելն զպարանոց իմ, զուս և զբազուկս իմ, և հրամայելով կրթանս տարժանելիս, «Բարձ ասէ զբեռնդ զայդ երկոքումբ ձեռօքդ, և քաջ բարձրացո՛»։ և որքան ծանր լցէ բեռնն՝ այնքան ևս ջիլքն իմ՝ ամրապնդին. այնպէս է ինձ և մարդ որ նեղիցէ զիս և թշնամանադիր լիցի. հրահանգէ զիս 'ի համբերութիւն, 'ի քաղցրութիւն, 'ի դիմութիւն, որք օգտակարագոյն ևս են քան զմարմնոյ կրթանս։

266. Եթէ ոք առնէ քեզ չար կամ խօսի չարիս զքէն, յիշեա զի նա համարի զանձն ասիպեալ յայն. ապա ուրեմն ոչ է նմա հնար երթալ զհետ դատմանց քոց, այլ

ղնուրոյն. այնպէս զի եթէ չարաչար գաթիցի զոք, անձին միայն վէրս դնէ, որպէս և ինքն իսկ է որ խաբին. զորօրինակ եթէ ոք թիւր համարիցի զհաւաքաբանութիւն ինչ արդար և բանաւոր, ոչ եթէ հաւաքաբանութիւնն ինչ ինքեան՝ այլ այն որ խաբին չարաչարն գատելով. եթէ այսու կանոնիւ վարիցիս՝ համբերութեամբ տարցիս ամենայն չարախօսաց զքէն. զի յամենայն դէպս ասի միշտ, եթէ «Նա այնպէս կարծէ»:

267. «Մի թէ չիցէ ինձ արժան վրէժ պահանջել և հատուցանել չար փոխանակ չարի»: Բաւական է, բարեկամ. չիք ուստեք քեզ չար հասեալ, զի բարի և չար 'ի կամս քո է: Եւ դարձեալ, եթէ ոք ինքեան հասեաց անձին՝ զրկանս քեզ առնելով, ընդէր և դու քեզ ինքնին ինքեան հատուցանիցես՝ հատուցանելով նմին չար:

268. Եթէ ոք առունկնձառ լինիցի քեզ, թէ այն ոք չար խօսեցաւ զքէն, մի լինիր ժամալաձառ

առ 'ի հեղքել զբանս նորին, այլ ասա պարզաբար. Որ ասացն զինէն զչարիսդ՝ անգիտանայր արդեօք և զայլ մոլութիւնս իմ, ապա թէ ոչ՝ չգատանայր զայն միայն խոսելով։

269. Իմաստուն կարծէ հանապազ լսել յանդգամաց չարիս առաջելքան զոր ասեն։ Եթէ ոք եհար զիս բանիւ, շնորհ ունիմ՝ նմա զի ոչ եհար գանիւ. եթէ գանեաց զիս՝ շնորհ ունիմ զի ոչ վիրաւորեաց. վիրաւորեաց. շնորհ ունիմ զի ոչ և ապան։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս բարեկամութեան և ընկերութեան։

270. Իմաստուն եթէ գիտէ զբարեկամութիւն։ Զիարդ որ ոչն կարէ ընտրել ընդ բարի և ընդ չար՝ կարիցէ սիրել։

271. Ամենայն որ սիրէ զինչս,

զՀեշտութիւն և կամ զանոտի փառս, ոչ կարէ սիրել զմարդիկ։

272. Սա 'ի սիրել՝ արժան է զընել 'ի միում կայի զօգտակարութիւն, զսրբութիւն, զպարկեշտութիւն, զՀայրենիս, զծնողս, զբարեկամս և զարդարութիւն իսկ։ Ընդ որոհել սոցուն 'ի միմեանց՝ բաւանի և բարեկամութիւն. քանզի ուր և ուրեք ես և իմն լսի՝ հարկ է անդանօր երևել անաանականին։ Իսկ եթէ դոցին ես և իմն յաղնուաբարոյութե և յարդարութե, եմ ես բարեկամ բարի, հայր բարի, որդի բարի, և բարի ամուսին. ապա եթէ ես և իմն լցեն սատ, իսկ աղնուականութիւնն և արդարութիւնն՝ անդ, այնուհետև հարկ լցէ բարեաւ մնայք ասել և բարեկամութեան և ամենայն սրբազան և անհրաժեշտ պարտուց։

273. Կամիս դիտել թէ արքդ երկոքին լցեն բարեկամք, մի հարցաներ թէ լցեն եղբարք և ննդակիցք, կամ ընդ նովին վարժասեռաւ և դասակարակաւ կրթեալք.

այլ հարց վնասա թէ յինչ կցէ հաստատեալ նոցա զմտերմութիւնն։ Եթէ կցեն յայնպիսի ինչ իրս որ ոչ կախին զմէնջ, մի ասիցես թէ կցեն բարեկամք. զի չեն խակ, որպէս և չեն հաւատարիմք, անյողդողք և ազատք. այլ եթէ հաստատեալ ի-ցեն զմտերմութիւնն յիրս որ ընդ մերով իշխանութեամբ են և յա-ռաջ խորհուրդս, մի ևս խնդրեր ե-թէ կցեն հայր և որդի, կամ թէ եղբարք, կամ ծանօթք են միմեանց՝ ի վաղուց հետէ, այլ սա համարձակ թէ բարեկամք են դոքա. զի ոչ ապաքէն անդ կցէ բարեկամութիւն՝ ուր համեստութիւն, հաւատար-մութիւն և հաղորդակցութիւն ա-մենայն դեղեցիկ և պատշաճ իրաց։

274. Մինք մոլեկանք ոչ երբեք հանդչին. հանապազ յողդողդ և անընարող տարուբերին ըստ հաճոյս կարծեացն. այնպիսի մոաց տէր ան-ընդունակ է բարեկամութեան։

275. Ամիլիարեւս կեցեալ էր ժամանակս բազում ընդ կնոջ իւ-րում Երիմիլեայ. և էին նոցին որ-

զնք բաղումք. և ոչ ուրեք էր տեսանել այնպիսի զբօնացեալ ընտանիս։ Ընծայ բերրաւ քայլամանեակ մի. և ահա ոչ ևս երևէր կինն, և ոչ մայրն։

276. Տեսանես զնաղ շնիկացդ, որպէս քծնին, խաղապատին, և փայփային. չերևիցի՞ն քեզ բարեկամք հաշտք։ Արկ ոսկրիկ մի 'ի միջն նոցա, և ապա տեսցես։ Այսպիսի է և մտերմութիւն եղբարց և հարց և որդւոց։ Եթէ յարիցէ վէճ վասն կալուածոյ իրիք կամ ագարակի կամ վասն աղջկան միոյ, ոչ ևս է տեսանել ոչ զհայրն, ոչ զեղբայրն և ոչ զորդի։

277. Զնք ինչ յաշխարհի յոր ամենայն կենդանի այնպէս յարեալ ևցէ որպէս յիւր սեփհական օգուտ։ Ամենայն որ զրկէ զնա յօգտակարէ անտի, թէպէտ և հայրն ևցէ, թէպէտ եղբայրն և որդի և բարեկամ, ամենայն անտանելի է նմին. քանզի սիրէ զօգուտն միայն, որ զտեղի ունի նմա զհօր և զեղբօր և զորդւոյ և զբարեկամի, ծնողաց, հայրենեաց և Աստուծոյ իսկ զլսովին։

278. Եպիկուրոս ասէ, չէ պարտ մնուցանել մանկունս, զի չկամ քան զայդ ինչ հակառակ Ճշմարիտ բարեաց, զոր գնէ նա 'ի հեշտութեան: Եղկելի Եպիկուր, կամիցիս ուրեմն լինել մեզ դժնեայս քան զվայրագասուն կենդանիս, որք ոչ լքանեն զկորիւնս իւրեանց: Սէր ծնողաց առ որդիս այնպէս բնածին ինն է, զի վստահ եմ՝ թէ եթէ և 'ի պատգամաց ուստեք գիտացեալ էր հօր քոյ և մօր, եթէ յաւուր միում այսպիսի անհանձար խորհուրդս երկնելոց լցես, տակաւին ոչ հրաժարէին 'ի մնուցանելոյ զքեզ:

279. Թողուս լքանես զմանուկդ յորժամ ծանրանայցէ խօթութեամբ. քանզի՝ սիրեմ ասես զնա, և ոչ ունիմ ժոյժ տեսանել: Եթէ այս արդիւնք լցեն բարեկամութեան՝ հարկ ուրեմն է զի ամենեքին որք սիրեն զնա՝ թողցեն, և մայրն և դայեակն և եղբարք և քորք և դասախարակ, և մնասցէ 'ի ձեռս ոչն սիրողաց: Որպիսի՛ կուրութիւն, որպիսի՛ անիրաւութիւն և որպիսի՛

խժդժութիւն։ Պարզաբար ասելով, կամիցիս և դու 'ի խօթութեան քում այսպիսիս ունել բարեկամս գորովագութս։

280. Ի վերհագոյն ասաիճանի ամբարձեալ կաս, և ահաւասիկ դու հալածիչ և բռնաւոր մերձաւորի քում։ Միթէ ո՞չ ես յիշեցեալ թէ ո՞ դու, և որո՞ց հրամանատու։— Ծնողաց քոց և եղբարց։ Այլ գնեցի զպաշտօնն իմ, ունիմ արտուանութիւնս, ունիմ իրաւունս։ Է՛ թըշուառական. ամենայն խորհուրդք քո յածին զերկրաւ և զոգմաւ. և հայիս ևեթ 'ի զաղփաղփուն օրէնս մարդկան, որ մեռելոց են օրէնք, և ոչ յառեալ պշնուս յօրէնս աստուածայինս։

281. Ամենայն պարտք գոգցես միշտ չափին ըստ զանազան առընչութեանց։ Հա՞յր ևցէ քո. պատուիրեալ է քեզ տածել զնա, յամենայնի հնազանդել նմին, և տանել արհամարհանաց նորին և դժնեայ բարուց։ Այլ հայրն է անզգամ։ Բա՞ լէ, և զինարդ. միթէ բնութիւն զո-

դեալ կցէ զքեզ հարկաւ ընդ հօր բարւոյ։ Ոչ. այլ ընդ հօր միւսմ։ Եղբայր քո անկրաւի քեզ։ Պահեա առնա զեղբայրական կարգն, և մի հայիր ընդ այն զոր գործէ, այլ յոր ինչ պարտիսդ առնել, և 'ի պայմանն՝ յոր գոցի գուցէ տաղտուութիւն քո, եթէ ընդ թելադրութեամբ կամաց ընուութեանդ գործիցես. զի ոչ ոք կարիցէ անարգել զքեզ կամ թշնամանել, եթէ գուցէ ոչ կամիցիս. և ոչ անարգեսցիս՝ բայց յորժամ կարծիցիս թշնամանեալ։ Զայսօրինակ լիցիս միշտ գոհ ընդ մերձաւոր քո, ընդ քաղաքակից և ընդ զօրավար, եթէ սովորիցիս ունել հանապազ յանդիման աչացդ զկցորդութիւնս զայսոսիկ։

282. Լաւ է ներել քան վրէժ խնդրել. քանզի մին արդասիք է համբոյր և մարդասէր բարուց, միւսն վայրագ և գազանական բնութեան։

283. Գթաս ընդ կոյրս և ընդ կաղս. և ընդէ՞ր ոչ գթաս ընդ անզգամս։ Ակամայ են անզգամք, որպէս և այլքն կաղք կամ կոյրք։

284. Կանգնեցին մարդիկ մեհեանս և բաղինս Տրիպալոմեայ՝ որ եգիտ գարման սենեկան մարդկան պաշարս, ոչ այնքան վայրենիս և խուշտրայինս որպիսեաք ցայն ժամանակ վարէին։ Իսկ ո՞ի մէնջ օրհնիցէ՞ի սրտի իւրում զգտակս ճշմարտութեան, և զնորին յայտնաբանողս, և ոչք փարատեցին զնաւաբ տգիտութեան և մոլորութեան յոգւոց մերոց։

285. Արեգակն ոչ մնայ խնդրողաց՝ առնել հաղորդս լուսոյ իւրոյ և ջերմութեան։ Այսպէս և դու արա զամենայն բարի զոր կարիցես, և մի սպասեր թէ այլք ժառեցին։

286. Ցիշեա զքան հռոմերականն Եւմեայ զայն որ առ Ոգիսեա, զոր ոչն ճանաչէր, և շնորհս ունէր նմին վասն բարեաց հիւրընկալութեանցն։

« Օտարականդ, չէ՞ ինձ արժան նեղել զիս զիս և անպատուել
թէ և քան զքեզ անփառունակ կցէ տեսլեամբ և գրձուած.

Զի պանդուխտք և կարօտեալք 'ի
ղից անտի առաքին (1) »:

Զնոյն բանս ասա եղբօր քում, հօր
քում, և ընկերի քում. Ոչ է ինձ
օրէն վարել չարաչար ընդ քեզ, թէ-
պէտ և լեալ էր քո վատթարագոյն
քան զոր էսգ. քանզի գտա դու
յաստուածոց կուսէ:

(1) Հռոմ. Ոգիս. ԺԴ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս ՐԻՐ կուրծքաց:

287. Զկնք անտանելի առն բա-
նական քան զանբանականն:

288. Են ծանօթութիւնք ինչ
յորս համախոհ են ամենայն մար-
դիկ առ հասարակ: Իսկ ուստի ի-
ցեն կապք և աղմուկք և պատե-
րազմունք: — Ի յարելոյ յառան-
ձնակ դէպս զհասարակաց ըմբռնիկ
ծանօթութիւնս: Զի քան զամե-
նայն ինչ դեր 'ի վերոյ է արդարու-
թիւն և արքունութիւն, ընդ այս ոչ ոք
երկբայի. այլ եթէ այս ինչ կամ
այն արդար կցէ և սուրբ, ահա
սակս այսորիկ մինչև ցմահ մաքա-
ւին մարդիկ: Փարատեսցուք զարդ-
դիտութիւնս զայս, և ուսցուք քաջ
վարել ծանօթութեամբքս յիւրա-
քանչիւր դէպս. յայնմհետէ գա-
դարեսցին 'ի սպառ վէճք և մարտք,

Աքիլլէս և Ագամեմնոն կէցցէն համաշունչք։

289. Ոչ գործքն ինչ խառնէն զմարդիկ, այլ որ զգործոցն են կարծիք։ Օրինակ ինն. մահ ոչ է չար. զի եթէ այնպիսի ինչ էր՝ հարկ էր և նոյնպէս երևել յաչս Սոկրատայ. այլ զմահ չար համարել՝ այս իսկ է չարն։ Եւ արդ յորժամ վշտանայցեմք ինչ, կամ աղմկիցիմք և տրտմիցիմք, մի զոք ամբաստանեսցուք, այլ զմեզ ինքնին, այսինքն է զկարծիս մեր։

290. Ճանաչեմ զոք որ ողբալով ընդ թշուառութիւն անձին իւրոյ, ելին անկաւ առ ոտս Եպափրոդիտեայ, և ասէր զանձն թշուառագոյն քան զամենայն մարդ, և 'ի յատակս աղիոց հասեալ, չուներով ապրուստ կենաց, զի մնայր նմա ոտան բիւր արծաթոյ։ Զի՞նչ կարծիցես պատասխանել Եպափրոդիտեայ. համարիցի՞ս թէ ծանր ինչ արար զյիմարդ։ Ոչ բնաւ. այլ պատասխանի էտ ծանրութեամբ. «Ա՛յ թշուառական, ընդէր չիսօսիս

զու մանաւանդ զաղխոյց քոց. և ոչպէս ժոյժ ունիցիս զմին առանց մեռանելոյ »:

291. Վասն ամենայն իրաց որ քեզ յանդիման լիցին, զդասատացիր յանձին քոում, և քննեա և տես 'ի քեզ, թէ որպիսի՞ ունիցիս առաքինութիւնս առ 'ի բարեբոք վարելոյ յայն դէպս: Եթէ տեսցես պատանի կամ աղջիկ դեղաղէշ, գտցես վասն այդր զառաքինութիւն պարկեշտութեան. նեղութիւն կամ վաստակք տաժանականք հանդիպիցին, գտցես զքաջասրտութիւն. եթէ զրպարտութիւնք և քամահանք, գտցես զհեզութիւն և զհամբերութիւն: Եթէ զայս օրինակ տոկոցիս հանդիսացուցանել յամենայն դէպս զառաքինութիւն բնաւորս առ 'ի մարմնէել ընդ նոսին, ոչ պարտիցիս երբեք 'ի ցնորից մտաց քոց:

292. Լուեալ լիցես յիմաստասէրաց ասել՝ եթէ պարտ է լինել անյողդողդ և հաստատուն 'ի խորհուրդս. և զու վասն այսր յամառեալ պնդիս 'ի պատիր և կանխա-

կալ կարծիսդ, 'ի վերնպակս քո և 'ի յիմարութիւնս։ Այլ գիտասջիր բարեկամդ իմ, եթէ նախ քան զամենայն արժան է առաջադրութիւնս բարիս ունել, այսինքն է ընարել խոհեմութեամբ, ճշմարտութեամբ և իրաւամբք։ Ասեմ քեզ թէ հարկ է մարդոյ ունել ջնջս, այլ ջնջս առողջ մարմնոյ, կորովի և հուժկու ըմբշամարտի. և դու ցուցանես ինձ ջնջս ուռուցեալս զմոլեգնոտի. չեն դոքա ջնջք, այլ տկարութիւն ջղաց։

293. Ջիանրդ չառնիցեմք թիւր դատաստան. զի 'ի մանկութենէ ուսուցանեն մեզ զայդ։ Մանկաբարձ մեր որ քայլեցուցանէ զմեզ, եթէ հարկանիցեմք զքարի զոտս մեր և ճչիցեմք, փոխանակ խրատելոյ զմեզ՝ դանէ զքարն։ Բաբէ, և զի՞նչ չար արար քարն։ Մինթէ նմա ինչ ոնկ էր դուշակել զդայթելն մեր և տեղափոխս լինել։ Յարբուն հասեալ՝ եթէ 'ի բաղանեաց դարձեալ անպատրաստ գոցուք զընթրիս մեր, անդէն բրդիմք 'ի ցասումն և

որոտամբ. և մանկավարժն՝ փոխանակ սանձելոյ զթափ կրկնմերոց, սկսանի ինքնին թշնամանել նաև հարկանել իսկ զնոհարարն։ Բարեկամ, մինթէ դասախարանկ խոհարարի կացուցին զքեզ թէ մանկածու։ Ի չափու կամ ուրեմն զկիրս աշակերտիդ և ցածո՛ զանհամբերութիւն նորա։ Իսկ յորժամ՝ ի չափ հասեալ արանց և՝ ի պաշտամունս մխիմք, զոր ամենայն առաջի աչաց մերոց ունիմք զնոյն օրինակս. և վասն այսորիկ կեսամք և մեռանիմք իբրև տղայս։ Զի՞նչ ինչ է տղայն լինել։ — Որպէս յերաժշտութեան և՝ ի գպրութեան տղայ կոչի անդէան կամ վատառուն՝ նոյնպէս և տղայ կոչի՝ ի կենցաղումս որ ոչն գիտէ կեալ և ոչ ունի ուղղախոհ կարծիս։

294. Եթէ բանն՝ որ ուղղիչ է ամենայնի՝ զարտուղեցի, ո՞ ածցէ զնա յուղղութիւն։

295. Ցիմարքք անուղղայք են. և ըստ առածին՝ մարթ է խորտակել զյիմարն՝ այլ փոխել ոչ։

296. Ոչ է պարտ երկնչել ոչ 'ի տնանկութենէ և ոչ յաքսորանաց, ոչ 'ի բանտէ և ոչ 'ի մահուանէ, այլ երկնչել յերկիւղ ունելոյ։

297. Յորժամ՝ 'ի նաւ ելեալ չուիցեմ, և ոչ այլ ինչ տեսանիցեմ բայց միայն զերկինս և զծով, տարածութիւն լայնածաւալ ջուրց՝ որ շուրջ պաշարեալ ահաբեկ առնիցէ զիս, որպէս թէ կայցէ ինձ նաւաբեկ լինել և զամենայն զջուրն կլանել, և ոչ ածեմ զմտաւ եթէ երեք չափք ջրոց բաւական են հեղձուցանել զիս։ Նոյնպէս և 'ի սատանութեան երկրի՝ կարծեմ թէ ահա քաղաքն ողջոյն յիմ գլուխ տապալի, և ոչ յիշեմ զի և կղմինտր մի բաւէ 'ի ջախջախել զգլուխ իմ։ Ո՛հ, թըշուառաւ գերիդ կարծեաց։

298. Ե՞րբ ելցէ զի տեսցէ զԱթէնս և զդղեակն։ — Բարեկամդ իմ, ելցէ՞ ինչ գեղեցկագոյն 'ի տեսանել քան զերկինս, քան զարեգակն, քան զլուսին և զաստեղս, քան զերկիրս զայս և զծով։ Եթէ այդքան ծանր է քեզ չտեսանելդ զԱթէնս, իսկ

զինչ առնիցես եթէ թագչէր արե-
գակն յաչաց քոց։

299. Ամենեքին զարհուրիմք 'ի մահուանէ մարմնոյ. ո՞ է որ երկիցէ 'ի մահուանէ հոգւոյն։

300. Բարեկամդ իմ, մինչև ցերբ չկամիցիս հատանել 'ի ստենէ, և մնանիլ հաստատուն կերակրոք։ Կամիցիս տակաւին ՀՀեալ և անձկալ պականց ստնտուիդ, և փոփոգել առատութեանցն և երգոց՝ որովք նիրհեցուցանէրն զքեզ։

301. Կանոն և չափ գործոց մերոց՝ կարծիք մեր են։ Ուստի յառաջ էին Աստէն Եւրիպիդեայ. 'ի կարծեաց։ Մեդէանոնրա և Հիպպոլիտ. — 'ի կարծեաց։ Իսկ Իդիպոմն Սոփոկլեայ. — 'ի կարծեաց։

302. Բարեռք թուեցաւ Պարիսեայ հափաքել զՀելենէ, և Հելենեայ երթալ զհետ Պարիսեայ։ Եթէ բարեռք թուէր և Մենելաւեայ հրաժարել 'ի դրժող կնոջէն, զինչ արդեօք պատահէր։ — Ոչ ունել մեզ զԻլիականն և զՈդիսական. զայլն ամենայն առ ոչինչ գրեմ։

303. Մինթէ ազէաք մեծք եղեն Պարիսեայ՝ մուտն Յունաց 'ի Տրոյա, և զամենայն 'ի հուր և 'ի սուր դատել, սպանումն ոչ ինչ ազգատոհմին Պրիամու, և կանանցն գերեվարութիւն. — խաբիս բարեկամ: Յայնժամ ըմբռնեցաւ Պարիս յաղէտս մեծամեծս, յորժամ կորոյս զհամբաւութիւն, զհաւատարմութիւն, զպարկեշտութիւն, և զրժեաց հիւրընկալուին: Այսպէս և Անքիլեայ ոչ սպանումն ինչ Պատրոկլեայ եղև ինչս մեծ, այլ 'ի ցաւումն զրդռել և ողբալ զԲրիսէիս, և մուռանալն զի չէր եկեալ 'ի պատերազմն յայն 'ի գլուտ հոմանեաց, այլ 'ի դարձուցանել զկին մի առ այր իւր:

304. Զկցէ՞ քո երբեք տեսեալ զաշխարհահանդէս վաճառուց, ուր գնան մարդիկ յամենայն մերձակայ գաւառաց. կէսք 'ի գնել և այլք 'ի վաճառել: Սակաւք են որ գնան առ հետաքննութեան, 'ի տես ծանաւաճառին, և 'ի գիտել թէ առ ինչ և յումի՞ կարգեցաւ: Այսպէս է

և կենցաղս. ամենեքին գան 'ի վաճառել կամ 'ի գնել։ Յոյժ սակաւք են որք կայցեն 'ի զնին և 'ի զարմանս ընդ էքնաղ տեսարանն, 'ի ճանաչել զորպէսն և զվասն էրն, զկարգիչն և զկարգավարութիւնն. քանզի հարկ է թէ սահմանեալ ինչ յոսմեքէ և ուղղեալ։ Անհնար է քաղաքի կամ տան կանգնել առանց արուեստաւորի, և կալ 'ի կայի առանց տեսչի. իսկ այսպիսի ընդարձակ և գերահրաշ մեքենայ զինչրդ կայր և տեսէր ըստ լոկոյ գիտաց։ Անմարթ է այդմ լինել. է ոք ուրեմն արարող սմին և վարիչ։ Եւ ո՞ ինչ է նա, կամ ո՞րպէս և զինչրդ վարիցէ զդա։ Եւ մեք նորին ձեռակերտք որպիսի՞ ինչ ինչ ինքեմք. և յէր սակս հաստատեալք։ Սակաւք են յոյժ որ մտախոհ լինին ընդ այս, և յետ սքանչանալոյ ընդ արարածն և օրհնելոյ զՀարատարարն՝ դարձցին յետս գոհութեամբ։ Եւ եթէ ինչն ևս ոմանք որ զայդ առնիցեն, ծաղր և ծանակ կան այլոց, որպէս 'ի ուշնալաճառս խաղ առնեն վաճառականք զպարզ

հեռաքնինան և պանդոյրս կոչէն։ Ապաքէն և եղանց և խոզից եթէ կայր լեզու խօսելոյ՝ ծաղր առնէին զամենեսին որ յայլ ինչ քան թէ 'ի ճարակ մոաբերէին։

305. Յանցանել քո ընդ քաղաքս այս, մինչ վաճառ լինի նաւու միոյ, ասեն. « Երթիցուք առ վայր մի տեսանել զԵպիկուրոս և լսել զոր ասէն »։ Գաս և տեսանես իսկ զիս, և համարիս վճարեալ զամենայն։ Իսկ արդ զի՞նչ ելցէ խօսակիցն լինել ընդ ումեք։ — Ո՞չ ապաքէն հարցանելն զկարծիս նորա և բացատրել զիւրն։ Թիւր ինչ կարծիս ունիմ, խլեա յինէն 'ի բաց։ Ի թիւր և 'ի կանխակալ կարծիս կաս, թոյլ տուր բժշկեցից։ Այս է ահա խօսակիցն լինել ընդ իմաստասիրի։ Իսկ դու ոչ այսպէս, այլ գաս յայցելութիւն, ոչ ըստ վաստակոցդ շահեալ՝ դառնաս գնաս ասելով. « Եպիկուրոս չէ ինչ մեծ. զինարդ անհեթեթս խօսի. զհայրենի բարբառն անգամ զիւր քաջ ոչ գիտէ »։ — Եւ յա՞յս սակս եկեալ էր քո։ Ահա այդպիսիք են

մարդիկ. խնդրեն զՀռոմայեանս, և զոր ամենայն ժողովին առ իրեարս հանգոյնք անդրեաց անծանօթք մի-մեանց, անփորձք իրերաց, և առանց փոխելոյ 'ի լաւագոյնն: « Զբօսանք և հեռաձգութիւնք եւեթ են ամենայն փոյթք և կենակցութիւնք մեր »:

306. Իմաստունն կորընտեսմբ կենաց շահի զկեանս իւր:

307. « Եթէ Սոկրատայ աղատեալ էր, ասես, լինէր տակաւին պիտանացու մարդկան »: Բաբէ, ի բարեկամ. Սոկրատայ բանք և գործք 'ի մերժելն անդ զփրկանան և յանձն առնուլ զմահ վասն արդարութեան՝ օգտակարագոյնք էս են մեզ քան ամենայն բանք և գործք զոր թէ արարեալ էր 'ի զերծանելն:

308. Զպատուէրս ինչ իմաստասիրութեան կլեալ՝ երթաս գնաս ուսուցանել զնոսին: Զի՞նչ իցէ այդ եթէ ոչ փոխել զանմարան, որպէս ատամոքս հիւանդ վերաբերէ զընկալեալ կերակուրն: Մարսեայց,

բարեկամ, և ապա ուսուցեալ յորժամ վուիսիսմամբ մատցդ՝ ցուցցես ինձ զանուանդն զոր ընկալար։ «Բայց այս ոչ եբաց վարժարան, կամիմ և ես բանալ»։ Գերիդ վատանուն. մինթէ ըստ քմաց և կամ ըստ դիպաց կարգեացի վարժեար։ Արժան է ունել հատակ կատարեալ, բարս անատգիւաս, և 'ի դեց խակ կոչիլ յայդ. ապա թէ ոչ՝ խաբեբայ ոմն եցես և ամպարիշտ։ Բանաս դեղարան, և ունիս սպեղանիս, այլ չգիտես դու օծանել, և անգիտանաս խակ զպէտս նոցին։

309. «Ոչ է բնական ընկերութիւն մարդկան, դեց չէ ինչ վոյթ զմարդկանէ, և հեշտութիւն միայն է բարի մարդոյ»։ Զայս ուսուցանէ մեզ Եպիկուրոս։ Բաբէ, թշուառականդ. և մինթէ պէտք էին այդքան տքնութեան դիշերաց առ 'ի գրելոյ մեզ զգեղեցիկ գրեանդ։ Ո՞չ լաւ ևս էր քեզ կալ ջերմիկ յանկողնի, և կեալ ելբրև զորդն, քանզի զայս ևեթ արժանի քեզ վարկար։ Ատուածպաշտութիւն և սրբու-

թիւն ըստ քեզ՝ գիւտք եւեթ են ա-
ղանց ժպրհաց և խմաստակաց. ար-
գարութիւն տկարութիւն ինչ է, և
համեստութիւն՝ յիմարութիւն. չեք
այսուհետև հայր կամ որդի, կամ
եղբայր, և քաղաքացի։ Ո՛վ ընթու-
թիւն, ամլխաբէութիւն։ Ովքեսաէս
'ի գժնեաց կատաղեացն ոչ տղմկեցաւ-
մոլեգին քան զքեզ։

310. Զորօրինակ անհնար է մար-
դոյ հաւանել այնմ որ թիւր երևի
ինքեան, կամ մերժել զճշմարիտն,
այսպէս և չէ հնար թէ խոտիցէ
զբարին։ Եպիկուրեան որ ասէ,
«գողութիւն ոչ է չար, այլ ընթը-
նին 'ի գողութիւն», գողանայցէ ան-
երկբայապէս եթէ կարիցէ գողա-
նալ անտեսաբար։

311. Երթեալ 'ի տեսլարան խա-
ղուց՝ նախ զկողմն ունիս ուրուք, և
կամիս զի այն ոք գուսան կամ այն
ոք ընթիշ պատկիցին։ Այլք այլում
բաղձան տանել զյաղթութիւնն։
Դժկամակիս ընդ այսպիսի հակա-
ռակութիւն. քանզի պրեսոր ես,
պահանջես զի ամենեքինտեղն ապ-

ցեն քեզ։ Իսկ արդ էիցե՞ն և այլոց առանձինն կարծիք. չունիցի՞ն և առանձին կամս. և միթէ ո՞չ ունիցին իրաւունս գժգոհելոյ ընդ հակառակել քո այնմ որ արդար համարեալ ի՞նչ յաչս նոցին։ Եթէ կամիս կալ յանդգնիլս, և ոչ ուստեք կրել հակառակութիւն, մի ցանկար պարտակաւորել բայց այնմ որում էլցէ պատին։ Եւ եթէ կամիցիս ինքն իշխանաբար պատկել զոր արժան դատիս, հանդէս արա՝ ի տան յառանձնական, և անդ քոյով իշխանութեամբդ հուշակեսջիր, եթէ «Այսոքն յաղթեաց՝ ի խաղսնեմէական, պիւթեան, խաթմիական և ոլիմպիական մրցմանց։»։ Այլ հրապարակաւ մի ժպրհիր յոր ոչն է քեզ անկ, և մի բռնադատեր զվիճակին։

312. Թշուառութեան մարդկան պատճառք այն են, զի յանձահս զգուշանան կամ վատահին. նմանեալք եղջերուաց՝ որք՝ ի խուսափելն՝ ի հաւուց խոյացելոց՝ ի վերայ իւրեանց և՝ ի խնդրել տեղի թաքըստեան, անկանին՝ ի ծուղակս և ըմբռնին։

313. Ասես թէ վատահութիւն և զգուշաւորութիւն ոչ պատշաճին ընդ իրեար։ Մոլորիս, զի քաջ հնար է միաբանել զդոսին։ Բայց միայն զի զգուշացիս յայնոսիկ որ կախին զքէն, և վատահացիս յայնս՝ որ չեն ընդ ձեռամբդ։ Այսպէս լիցիս և վատահ և զգուշաւոր. քանզի խոհեմաբար հեռացեալ 'ի սոյդ չարեաց, աներկիւղս զդէմ կալցիս մեռոսի չարեացն զոր քեզ սպառնան։

314. Ամենայն մարդ որ գերազանցէ իւիք քան զայլս, և կամ կարծի գերազանցել, եթէ չիցէ քաջուսումն՝ անհնար է նմա չուռնուլ հպարտութեամբ և զեղծանել։

315. Փելիկիոն յիմար ումն էր և ոչ ոք արժան համարէր խօսել ընդ նմա։ Իշխանն էտ նմա զանտեսութիւն առանձին գործոց իւրոց. և ահա Փելիկիոն եղև այր պիտանի և հանճարեղ. ամենայն ոք ասէ. «Փելիկիոն այսօր հանդոյն հրեշտակի բարբառեցաւ»։ Բաբէ, բարեկամդ,

սպասեցուք առ վայր մի. թող բարձցէ 'ի նմանէ իշխանն զտեսչութիւնն զոր յանձնեաց, և ահա խակոյն եղեցի յիմար:

316. Դարձեալ միւս ևս օրինակ հանդուցեալ դմին որ տացէ քեզ զՀրդրիա պատկեր դրանկի շնթոցի: Եպափրոդիտեայ անձնապահպանին Ներոնի՝ էր տարուկ մի, կոշկակար յարուեսակ, այլ այնպէս յիմար և անարուեստ, զի իբրև անպէտ ոք վաճառեցաւ: Մի ոմն 'ի սպասաւորաց Ներոնի գնեաց զնա, և ըստ բախտի յաջողեաց տարկին լինել կոշկակար իշխանին, և ապա ուրեմն մտերիմ իսկ նմին: Եւ ահա 'ի վաղիւ անդր Եպափրոդիտէս ինքն նախ յառաջեաց չոքաւ շողոմել զնա: Ոչ ևս ուրեք տեսանեմք զԵպափրոդիտէս. քանզի բովանդակ աւուրս փակեալ կայ սահմանել իրս կարևորս ընդ առն՝ զոր իբրև անպիտան յանպիտանեաց վաճառեալ էր:

317. Ոչ դատապարտեմ զՀարատարխաստութիւն, և զհանճար ըն-

տիր գրելոյ և ընտիր խօսելոյ. այլ դատապարտեմ զգերիվերոյ ամենայնի դասելն զդոսին. են են արդարև կարևորագոյնք և օգտակարագոյնք քան զայդոսիկ:

318. Մեծարանք մատուցեալք Ինատապարա արանց նման են բազնի Տենգի կանգնելոյ 'ի միջավայր Հռոմայ. որում պաշտօն ընծայեն՝ քանզի երկնչին:

319. Եհարց զիս ոմն եթէ մայէ՞ 'ի նուիրական դասս քրմացն Օգոստեայ 'ի Նիկոպոլիս: Բաբէ, բարեկամդ իմ, ասեմ, զի՞նչ օգուտ քեզ լցէ այսի. այլ ծախք աւելորդք: « Բայց անուն իմ մնայցէ յաստեւ, զի գրոշմեսցի յարձանագրութիւնս » : — Գրոշմեա զայն 'ի վնմի, և յերկարագոյն ևս մնասցէ: Եւ դարձեալ ո՞ Հանաչեցէ զքեզ արտաքոյ պարսպացն Նիկոպոլեայ: « Այլ կապեցիս պսակ ոսկի 'ի գլուխս իմ» : — Եթէ զայդ համարիցիս քեզ պերճանս, ահա պսակ փոխանակ պսակի պսակեաջիր վարդենեաւ. որ և թեթևագոյն է և վայելչագոյն:

320. Երկար և դժուարադնաց է ասեն ճանապարհ խմաստասիրութեան: Խաբիս, բարեկամ, չէ՞ ինչ այնքան երկայն. զի զի՞նչ ուսուցանէ քեզ խմաստասիրութիւն: Զհետ երթալ գնց, ուղղել զնչձս քո, և բարեռք վարել զկարծիսդ: Ասա՝ ինձ զինչ են գնք, իլձք, և կարծիք. եթէ յերկար նցէ այդ, միթէ համառօտագոյն նցեն ճառք փիլիսոփայից քոց զհետշտութեանց: Զի՞նչ ասէ քեզ Եպիկուրոս. «Բարիք մարդոյ հաստատեալ կան՝ ի մարմնի անդ իւրում»: Արդ ասա՝ ինձ զինչ են հոգին և մարմինն, և զինչ էութիւն մեր, և տեսցես զի ոչ ինչ պակաս յերկարէ և այդ:

321. Բարեկամ, ընդէ՞ր ձեմիս այդպէս ուղղաբերձ, իբրու թէ ձոզ ինչ կլեալ: — «Կամի՛ ամենայն անցորդաց հրաշալի հանդիսանալ, և ասել յաջմէ և յահեկէ, եթէ Ահաւադիկ մեծ ոմն խմաստասէր»: — Եւ ո՞յք են զորոց կամիս ձգել յինքդ զզարմանս. ո՞չ նոքին խակ են զորս յիմարս կոչես: Կամի՞ս ուրեմն յի-

մարաց սքանչելի լինել: Ա՛յ յիմարդ յիմարաց:

322. «Բաղձամ բաղմիլ 'ի տեսլարանի 'ի գահս Ծերակուտին»: Վա՜յ, 'ի զուր 'ի նեղ արկցես զքեզ և ճնշեացիս: — «Զի առանց այնր չկարեմ քաջ տեսանել զնոսան»: — Եւ մի՞ բնաւ տեսցես. զի՞ կայ քո և խաղուց. իսկ եթէ բաղմել 'ի գահս անդր ցանկաս, համբեր առ վայր մի՝ մինչև եկցեն նստեալքն, և յաւարտել հանդիսին, երթ բաղմեա ուր փափագեան և ուրախ լեր:

323. Մարդիկ գիւրայօժար են 'ի չքմեղս լինել յանցանաց իւրեանց, որպէս և ինձ իսկ դէպ եղև այս: Յաւուր միում 'ի յանդիմանել զիս Ռուփոսի վասն իրաց ինչ, «Իսկ արդ, ասացի, միթէ զԿապիտոլիոն հրկէզ արարի»: Սարսուռ վատ, կրկնեաց նա, յանցուած զոր յանցեար յայնմ պահու՝ հաւասար է հրկիզութեան Կապիտոլեայ:

324. Երկու են զորս արժան է արմատաքի խլել 'ի մարդկանէ, յանձնապատանութիւն և կասկած:

328. Այր ոմն մեծապատիւ՝ որ արդ համբարտակեա է, դարձեալ 'ի տարագրութենէ և դէմ եդեալ 'ի Հռովմ՝ եկն տեսանել զիս։ Քատ. մնելի իմն նկարեաց ինձ զպատկեր արքունեաց, ինդէր և ասէր զը. զուեալ ընդ այն, վասն որոյ և բնաւ ամենևին չկամէր յանձն առնուլ պաշտօն ինչ, այլ զսակաւօրեայ մնացուածս կենացն անցուցանել յանդորրութեան, հեռի յաղմկաց և 'ի բաղմակնձիւն գործոց։ Ինդէի և ես թէ ոչ արասցէ որպէս ասէրն, այլ այն ինչ եդեալ զոան 'ի Հռովմ, ոչ ևս յիշեսցէ զգեղեցիկ առաջադրութիւն, և եթէ յաջողեցի նմա մուտ գտանել առ իշխանն, ջանայցէ օգտել 'ի տեսութենէն։ Իսկ նա կրկնէր և ասէր 'ի մէջնէն յինէն. «Եպիկ. տետ, եթէ լսիցես զկոխել իմ ըզ. սեսն արքունեաց, գոդ տասցիր զիս վաստշուէր քան զնամ մարդ»։ Զինչ եղև ապա. մինչ սակաւ ինչ 'ի բացեայ կայր 'ի Հռովմէ՝ ընկալաւ գիր 'ի կայսերէն։ Սուտացաւ ան. դէն զկոստամուն. փութացաւ ՀԵ.

պէտց յարքունեաց վարագոյն քան զկարծիս. և ահա գուշակութիւնք էր 'ի գլուխս ելին։ «Եւ զի՞նչ կամիցիր, ասաց ինձ այլ ոմն, զի զմնացուածս կենաց իւրոց անցուցանիցես 'ի դատարկապորտութեան և 'ի պղերգութեան»։ Բաբէ, բարեկամ, և համարիցիս թէ խմաստասէր, և այր ոչ այր որ կամիցի ինամ տանել անձին՝ պղերգագոյն եցէ քան զդրանիկն շնթող։ Են արդարև պատրատմունք կարևորագոյնք և ծանրագոյնք։

326. Եթէ համարեալ ասիցես, Երանութիւն է կալն 'ի Հռովմ կամ յԱթէնս, ապաքէն կորեար. քանզի կամ վատաբաղդիկ լիցիս՝ ոչ ևս կարելով յետս դառնալ, և կամ էթէ դարձցիս անդրէն, առ ինդութեանդ այլ յայլմէ լիցիս, որ չար ևս եցէ քեզ։ Թող անդր 'ի բաց ուրեմն զբարձրաձայն կարդալդ։ «Ո՛հ թէ ո՞րպէս գեղեցիկ է քաղաքն Հռովմայ. ո՞րպէս չքնաղ քաղաքն Աթենացւոց»։ Գեղեցիկք եցեն դոքա, այլ երջանկութիւն գեղեցկագոյն

եւ է։ Անյնքան կնճիռն է 'ի Հռովմ, եւ հարկ հասցէ շողոմել բազմաց։ Մինթէ չկցէ՞ քեզ արժան ուրախանալ ընդ թողուլդ 'ի գիւտ երջանկութեան՝ զայնքան կնճիռն եւ ըզհոգս։

327. Զկնք ինչ որ նոյն հեռայն հասցէ 'ի մեծութիւն. եւ ոչ խակ հատ մի խաղողոյ, եւ ոչ թուղ մի։ Եթէ ասիցես ինձ, « Կամիմ այժմէն թուղ մի։ », ասեմ քեզ. Բարեկամ, ժամանակի պէտք են. մնասջիք, զի բուսցի, աճեսցէ եւ ապա հասուցանասցի։ Եւ գոյ կամիս զի հանձարք 'ի քթթել ական բերցեն պտուղս քաջահասուկս։ Իցէ՞ այս իրաւացի։

328. Եթէ կամիս յառաջանալ յուսումն իմաստութեան, թող անդր 'ի բաց զպատճառաբանութիւնքդ։ « Եթէ անփոյթ արարիցս զանտեսութեամբ՝ անկայց 'ի ընդանկութիւն եւ ոչ ունիցիմ ապրուստ. եթէ թողից անպատիժ ըզծառայ իմ՝ լիցի ապիրատ »։ Լաւ եւ է սովամահ լինել յետ վանելոյ զանձկութիւնս եւ զերկիւղ, քան

կեալ 'ի լինութեան՝ հոգով և առ-
ասպանոք. լաւ նոյն ծառայի քո
անդգամել՝ քան քեզ աղաղակել
զանձն: Սկիզբն արա 'ի մանուանց ի-
րաց. հեղին զլուղ քո, գոլացան
զգինիդ. ասա՛ վասն գոցին. Այս
գին է խաղաղութեան, այս գին ա-
զատութեան. ոչընչիւ ոչ ինչ ոք ոչ
շահի: Յորժամ կոչեցես զծառայ
քո, յինչեա զի մարթ է նմա չլսել,
և 'ի լսելն իսկ ոչ կարել կատարել
զհրամայեալդ: Այլ, ասես, ծա-
ռայ իմ հպարտացեալ համբերու-
թեամբս իմով՝ լինիցի անուղղայ:
Այո՛, բայց քեզ լաւ լիցի. քանզի
նովաւ ուսցիս արհամարհել զտագ-
նապ և զանժուժութիւն:

329. Կարեմք ուսանել զնոր-
հուրդս բնութեան յիրաց անսի՝
յորս չկք հակառակութիւն 'ի միջի
մերում. օրինակ իմն. յորժամ սպա-
սաւոր մերձաւորիդ բեկանիցէ բա-
ժակ մի կամ այլ ինչ, մի՛ զանց առ-
ներ ասել ցնա 'ի մխիթարութիւն,
եթէ յաշխարհս պատահեն այդպիսի
դէպք: Գիտասջիր, զի և 'ի բեկա-

նել բաժակի քոյ այնպէս պարտ է քեզ կալ յանդորրու՝ որպէս 'ի բեկման անօթոյ գրացուոյն։ Փոխեա զայս առած, արկ 'ի կիր 'ի կարևորագոյն գէպս։ Ի մեռանել որդւոյ կամ կնոջ ուրուք, ամենայն ոք ասէ թէ ընդաբոյս է այդ մարդկութեան։ Այլ 'ի մեռանել անդ որդւոյ կամ կնոջ իւրոյ՝ անդէն և անդ հնչեն ձայնք ողբոց, աղաղակի և հեծութեանց։ «Եղուկ եմ ես. վճարեաւ է վասն իմ»։ Պարտ էր յայնժամ 'ի յուշ ածել զպայման կենացն յոր դատանէր 'ի լսելն զնմանաելիչս գէպս ընկերին։

330. Ըղձակերտ լինիս ընդունել պատակ յոլովմոլիական խաղան. հաճոյ է և ինձ գլխովին, քանզի մեծ են փառք պատակի. այլ քաջ քննեա և տես զինչ յառաջ և զինչ յետ այնր հանդիպին, և ապա թէ հետամուտ լիցիս։ Հարկ է անվրէպ պատակառ կալ կանոնաց ինչ. չուտել յանչափս. հրաժարել յախորժելեացն, հրահանգել զանձն, թէպէտ և 'ի պայմանեալ ժամու մարդկոյն ցուրտ

ելցի կամ տօթ՝ ոչ ըմպելբնաւ ջուր ցուրտ, կամ գինի, բայց սակաւ և չափով. և պարզաբար ասել հարկ է անձնատուր լինել 'ի հրահանգապետան, որպէս 'ի բժիշկ ոք. և յետ այնորիկ երթալ 'ի մրցանս. յորում թերևս հասցէ քեզ վերս ընդունել, ոանբեկ լինել, 'ի հող և 'ի փոշի թաւալել և երբեմն ձալկ խարազանի ընդունել և 'ի վերայ այսր ամի դուցէ նկուն ևս լինել: Յետ քաջիկ քննելոյ զայս ամենայն, երթ՝ եթէ կամիս լինել ըմբշամարտ: Եթէ ոչ դիցես միտ այսոցիկ՝ ճամարտակիցես միայն և ընդվայրաբանիցես որպէս զտղայս, որք մերթ մրցողս կերպարանին և մերթ սուսերամարտս. մերձ ընդ մերձ փող հարկանեն, և մերձ ընդ մերձ ողբերգութիւնս 'ի հանդէս ածեն: Զնոյնս արասցես և դու, մերթ ըմբիշ մերթ սուսերամարտ, և մերթ հռետոր. և հուսկ ուրեմն խմաստասէր. իսկ ճշմարտութեամբ և ոչ ինչ. այլ հանդոյն կապկի զոր ինչ և տեսցես՝ 'ի նմանութիւն կրթիցես, և ամենայն ինչ

հաճոյական թուեցի. քեզ մի ըստ միոջէ. քանզի ոչ քննեցեր զոր կամիցիս առնել, այլ ժպրհութեամբ մեծացար և յանդգոյշս վարեալ միայն յոգահութենէ և 'ի վայրապար փափագանաց։ Այսպուհակ բազմաց տեսեալ զիմաստասէր ոք, կամ լուեալ զասել ոմանց, եթէ «Զիարդ քաջ խօսի Եփրատէս, և ո՞ նման նմին բարբառիցէ», կամին անդէն լինել իմաստասէր։

331. «Բարի է առողջութիւն, չար է խօթութիւն»։ Վրիպակ ասացուած։ Բարուոք վարել զառողջութիւնն՝ բարի է արդարև, չարաչարն վարել՝ չար է։ Զհիւանդութիւն բարուոք վարել՝ բարի է, չարաչարն վարել՝ չար է։ Յամենայնէ մարթ է քաղել բարիս, և 'ի մահուանէ անդամ։ Մենեկէս որդի Կրէոնի, միթէ ոչ մեծապէս օգտեցաւ 'ի մահուանէ՝ յորժամ նուիրեաց զանձն 'ի վերայ հայրենեաց իւրոց. յայտ յանդիման ցուցանելով զգութ իւր, զվեհանձնութիւն, զհաւատարմութիւն և զքաջասիրութ-

տութիւն։ Եթէ յարեալ էր նորա 'ի սէր կենաց, զայս ամենայն կորուսեալ, հակառակ նոցին ցուցեալ էր ախտս, զապերախտութիւն, զամպարշտութիւն, զվատաբարութիւն, զհաւատադրժութիւն, և զվերհերոտութիւն։ Ի բաց թօթափեա յանձնէդ զպաշտելիս քո խոհերականս, և առ 'ի լինել ազատ՝ կատե՛ ակն 'ի ճշմարտութիւն։

332. Ոչ խնդրեմ 'ի քէն գիրս ընծայութեան. պահեա զայդոսիկ վատից և վերհերոտից, և այս պատճէն ինչ։ «Յանձն առնեմ քեզ զդիակնս զայս, զտիկս զայս արեան որ չէ տակաւին մածեալ»։ Այսպէս պարտ ինչ յանձն առնել զայր որ չունի միտս խմանալոյ՝ եթէ ոչ ոք կարէ զինքն առնել թշուառ։

333. Այսպէս պատասխանի եւ Դիոգինէս առ որ խնդրէրն 'ի նմանէ թուղթ ընծայութեան։ Բարեկամ, այրն առ որ խնդրես յինէն գիր բարեխօսութեան, տեսցէ ինքնին առանց ինչ իմ՝ նախ զի դու մարդ ես. և եթէ ուշիմ ոք ինչ ծանիցէ ընդ

նեմին եթէ բարի ոք թէ անզգամ ի-
ցես. որ զի եթէ չիցէ քաջ ճանա-
չող՝ թէպէտ և գրիցեմ հարիւր
թուղթ՝ ոչ ճանաչիցէ զքեզ քաջ:
Արժան է քեզ լինել որպէս գահե-
կան ոսկի, որ ինքնին իսկ ճանաչի
հմտից որ գիտիցեն ընտրել զզուան
'ի սաոյն:

334. Անհնար է ինձ չգործել
սխալանս. այլ կարի իսկ հնարաւոր
մտադիր ջանալն առ 'ի չանկանել
'ի սխալանս: Եւ այս իսկ մեծ է զի
հանապազորեայ ջանիւքս պակասի-
ցին սխալանք և կէսք գլխովին ուղ-
ղեսցին:

335. Եթէ ասես վաղիւն ուզղեմ
զսխալանս իմ, ապա յայտ առնես
եթէ կամիցիս այսօր մնալ լիրբ, ցո-
փակեաց, վատ, ցասկոտ, մախա-
ցող, անիրաւ, շահախնդիր և խո-
րամանկ: Տես, քանի՞ ինչ չարեաց
թոյլ տաս 'ի վերայ անձին քո: —
«Այլ վաղիւն փոխեցայց յայլայլ»:
Եւ ընդէ՞ր մանաւանդ ոչ այսօր
իսկ: Պատրաստ լեր առ օրին վասն
վաղուն. ապա թէ ոչ՝ հանապազ օր
յօրէ յերկարաձգեսցես:

336. Թուլացուցանես առ վայր մի անձինդ, և յուսաս զգուշանալ երբ և կամեսցիս։ Խաբիս. թեթև ինչ յանցուած՝ յոր գթես այսօր յանհոգս, վաղիւ 'ի մեծագոյնն գթեցուսցէ. և անփութութիւն կրկնեալ՝ դարձցի 'ի սովորութիւն, զոր ոչ ևս կարիցես ուղղել։

337. Զոր ինչ հնար է յապաղել օգտիւ՝ հնար է արդեօք թողուլ ընքանել առաւել օգտիւ։

338. Մտադրութիւն օգտակար է առ ամենայն, նաև 'ի զբօսանս անգամ։ Իցէ՞ քո տեսեալ ինչ երբեք 'ի կեանս՝ որ անփութութեամբ լաւ ևս կատարեսցի։

339. Որք պնդենն եթէ չիք ճըշմարտութիւն ծանուցեալ, 'ի սուտ հանեն զայն կարծեցելոյ ինն ճշմարտութեամբ։ Թէպէտ և սուտ ինչ զոր ասեն և թէպէտ ստոյգ, սակայն և այն ճշմարտութիւն է ծանուցեալ։

340. Հարկ է թէ մեծապէս արժանաւոր և քաջարդիւն ինչ ինչխան, յոր՝ առ 'ի սէր նորին ևեթ յարիցին մարդիկ։

341. «Կաղ եմ ոտիւք, և ընդէր է ինձ կաղ լինել»։ Սորուկ անարդ, արժանն ի՞նչ է բասրել զՆախախնամութիւնն. վասն ապիկար ոտին միոյ։ Ո՞ր արդարադոյն թուիցի քեզ Նախախնամութեան անսաղ ոտին քում, եթէ ոտին քո՝ Նախախնամութեան։

342. «Ընդէր ծնայ ես 'ի հօրէ անտի և 'ի մօրէ»։ Բա՞ռք, բարեկամ, միթէ կարէիր մինչև ծնեալ առել. Կամիմ զի այս ոք ամուսնասցի ընդ այնմ կնոջ, և ես ծնայց 'ի նոցունց։ Եթէ վատաբախտիկ եղեր ծննդեամբդ, ընդէր ոչ ուղղեցես զքեզ առաքինութեամբ։

343. Մատոյ մեծութիւն ոչ չափի տարածութեամբ, այլ սուղութեամբ և ճշմարտութեամբ կարծեաց։

344. Հարցանեմ քեզ, թէ ո՞ր քան լինչ զարդացար յառաքինութեան, և դու ցուցանես ինձ զգիրս լինչ Քրիւսիպպեայ, և պարծիս հասկանալ։ Որպէս այն թէ ըմբիշ՝ որոյ զօրութեանն կամիցիմ հասու

լինել, փոխանակ ցուցանելոյ ինձ զաճառուտ բազուկն և զԹիկունն լայնամիջոցս՝ ցուցանէր ինձ զձեռէն իւր երկաթիս։ Վա՜յ վատթար սարկիդ. զոր օրինակ կամ է ինձ տեսանել զինչ ըմբիշն արարեալ ի՞նչ ձեռէիւքն, ըստ այնմ կամիմ տեսանել զինչ դու արարեր Քրիւսիպպեայ գրովքն։ Արկեր արդեօք 'ի կիր զխրատս նորա։ Եդեր 'ի չափու զերկիւղ քո և զնդՀ։ Ի գործոց անտի ճանաչի զարդացումն։ Ունիցիս հոգի վեհանձն, ազատ, հաւատարիմ և համեստալից. և ի՞նչ այնպիսի՝ զոր և ոչ մի ինչ ոչ կարիցէ խափանել կամ վեր 'ի վայր առնել։ Հաւածեցեր արդեօք յամենայն կեանս քո զՀեծեծանս, զարտունչ և զանպատեհ ձայնարկութիւնս, թէ «Ո՛հ, քանի թշուառական եմ ես»։ Ածեր զմտաւ թէ զինչ ի՞նչ բանտ, աքսոր և մոլեխինդն։ Եւ կարիցիս ասել յամենայն դէպս. «Անցից քաջասրտաբար ընդ այս, զի ընդ այս կոչէ զիս աստուածութիւնն։

345. Որպէս առարկութիւնս այս «Առաւօտ եղև, գիշեր է», արդար է մինչ անջատեալ է, յերկուս արտհեալ. իսկ անպատեհ եթէ յաջակցաբար ասիցի յերկուց մասանցն մի եւեթ առնելով. նոյնպէս և 'ի խնձոյս ջնջ մինչ անիրաւքան զկամելն զամենայն վասն իւր, առանց մինչ ակն ածելոյ յայլոց: Արդ յորժամ հրաւիրիցիս 'ի կոչունս, մի զորպիսութիւն կերակրոցն նկատիցես որ առաջի դնիցին քեզ, և դրդռեսցեն զախորժակս քո, այլ զձիրս հրաւիրակին քո, որպէս զի ակն ածիցես 'ի նմանէ շուք դնելով որ անկ է նմա:

346. Որում վստահացաւ քեզ զծածուկս իւր, համարիս և դու վայելչական իմն արդար և պատուաւորական՝ հաւատալ զգաղտնիս քո: Անմիտ և խօլական ես թէ զայդ առնես: Ցիշեա զոր տեսեր է յաճախ պատահել: Զօրական ումն 'ի ձև քաղաքացւոյ առն երթեալ նստի առընթեր քաղաքացւոյ, և զքանիւք անկեալ սկսանի չարախօս-

սել զկայսերէ։ Քաղաքացւոյն սա-
դրեալ՝ի համարձակութենէ նորին
և կարծելով ունել զդաղանիս զի-
նուորին, ՝ի գրաւ հաւատարմու-
թեանն՝ բանայ զծածուկս սրտի
իւրոյ, և ասանչայ զիշխանէն. յայն-
ժամ՝ զինուորին յայտնեալ զինքն,
քարշեալ տանի զնա ՝ի բանտ։ Այս
դէպ լինի զօր ամենայն։ Որ ասեն
քեզ զծածուկս սրտին՝ յաճախ զկեր-
պարանս ևեթ ունի և զհանդերձ
առն անկեղծի։ Եւ դարձեալ ոչ է
այդ վստահութիւն, այլ անժուժու-
թիւն լեզուի, և զոր ասէն քեզ յուն-
կանէ՝ զայն ասէ և ամենայն անցորդաց։ Կարաս է ծակ, և ոչ պահիցէ
զդաղտնիս քո, որպէս զիւրն իսկ ոչ
պահեաց։

347. Ցոյց ինձ զի է ՝ի քեզ հա-
մեստութիւն, հաւատարմութիւն,
անյողդողդութիւն, և զի չիցես կա-
րաս ծակ. և ոչ ևամենայնիցս քեզ ասել
ոչ ինձ զծածուկս սրտիդ, այլ ես
ինքնին կանխեցից յայտնել զքեզ
զի լուիցես գաղտնեաց իմոց։ Զի՞ ո-
ոք ոչ սքանչասցի ընդ գիւտ մա-

քուր, յարդարեալ և անկասկած անօթոյ։ Կամ ո՞ մերժիցէ զաւանդատպահ՝ որ և միանգամայն խորհրդատուս ի՞նչ մեզ, ցանկացող բարեացս մերոց և հաւատարիմ. կամ ընդունիցի բաղում հաճութեամբ ոչ զմտերիմ բարեսէր, որ զինչանի առ ուղարութիւնս մեր, և օգնական լինի մեզ 'ի բառնալ զբեռն մեր։

348. Եթէ տեսանիցես զոք հեատաքննին և պնդապէս վարեալ զհետ օտարոտի իրաց որ չեն ընդ մերով իշխանութեամբ, դիտասջիր հաւատեաւ եթէ Ճամարտակ ոմն է, և ոչ լուեսցէ զգաղտնիս քոյ. և ոչ է պիտոյ մերձեցուցանել 'ի նա ձիւթ եռացեալ կամ անիւս առ 'ի տալ բարբառել նմա։ Քթթել մի ակն ողջիկն միոջ, զոյգն ինչ շողոմք շնթոյլ գրանկի, յոյս ինչ պատուոյ և աւագութեան, փաքիտագ ժառանգութեան 'ի կատկէ, և այլք յայսպիսեաց ատոն գողանայցեն զգաղտնիս սրտի քո 'ի նմանէ, և առանց շատ ինչ ջանից։

349. Յորժամ միայնակ կցես, ասես յանապատի լինել. և յորժամ'ի խառնի բազմութեան կայցես, ասես'ի միջի աւազակաց, գողոց և ստամբակաց կալ: Գանգատիս զծնողացդ, զկնոջէ, զմանկանցդ, զբարեկամաց և զաղգականաց: Վաշ.քեզ. եթէ զգօն էիր, 'ի միայնութեանդ ասէիր լինել յանդորրու և յաղաղութեան, և վայելել զանձն, նման ինն լինելով ասուածոյ. իսկ 'ի միջի բազմութեան մարդկան եղով՝ փոխանակ նեղելոյ և կոչելոյ զայն ազմուկ և ամբոխս, կոչէիր հանդէս ասնից, և կամ հրապարակական խաղս, և միշտ հաճ և հաւան գտանէիր:

350. Մինթէ կամիցիս լինել հանդոյն վատթար գուսանաց, որ առանց այլոց ընկերելոյ ոչ կարեն երգել:

351. Իշխողն մեր խաղաղութիւն պարգևեաց աշխարհի, ոչ ևս պատերազմունք, ոչ ևս մարտք, ոչ ևս աւազակութիւնք 'ի ցամաքի և հէնք 'ի ծովու. յամենայն ժամու

և յամենայն ժամանակի հնար է գնալ միայնակ ամենայն ուրեք ամենևին աներկիւղ։ Այլ միթէ կարող էր իշխանն տալ մեզ խաղաղութիւն ընդ հիւանդութիւնս, ընդ նաւաբեկութիւնս, ընդ հրդեհս, ընդ գեանաշարժս և ընդ կայծակունս։ Դիք և էթ կարեն զայն տալ մեզ. և քարոզն որ հռչակէ զայդ՝ ինքն իսկ բանն է։ Որ ունիցի յանձին զխաղաղութիւնս զայս՝ կարէ կալ միայնակ զողջոյն զկեանս իւր։

352. Զի՞նչ առնեն մանկունք յորժամ առանձինն լցեն։ Զբօսնուն 'ի խաղս. գիշեն խիտ և աւազ շինելբերդկունս մանուանս, զոր յետ սակաւուց աւերեն։ Այսպէս հնարին միշտ ինքեանց զբօսանս։ Զոր դոքա յիմարաբար և տղայաբար առնեն, չկարիցեն զնոյն առնել խմաստնօրէն և զգօնութեամբ։ Ամենայն ուրեք գոցի խիտ և աւազ. և են իսկ 'ի մեզ բազում ինչ առ 'ի հիմնել և 'ի կործանել։ Արդ մի՛ քանքարտեսցուք ընդ միայնութիւն մեր։

353. Տրանչէս զառանձնութենէ, և զինչ է զոր առանձնութիւն կոչես։ Մինթէ լցէ՞ լինել օտար 'ի կենակցութենէ մարդկան, կամ թափուր զոլ յամենայն նպաստից։ Բաբէ. գիտասջիր զի ոչ ինչ ընդ հատ 'ի քէն յաշխարհս պատահէ գտանել ուրուք միայնակ և 'ի միջի անդ Հռովմայ. 'ի միջի ծնողաց, բարեկամաց և մերձաւորաց և 'ի խառն ամբոխաց՝ գտանել միայնակ։ Ոչ եթէ տեսութիւն մարդոյ միոյ լուծանէ զմիայնութիւն, այլ տեսութիւն առն առաքինւոյ, հաւատարմի և օժանդակի։ Ասես միայնակ լինել. և ինքն Աստուած շատացեալ յիւրում միայնութենէ, զամենայն գտանէ յինքեան։ Գուն գործեա նմանող լինել նմին. 'ի քո ձեռս է այս։ Կենակից լեր անձամբ անձինդ. կան քեզ բանք բազումք առ 'ի խօսակից լինել և հարցանել ցանձն քո. և զի կայ քեզ ընդ այլոց։ Զուրկ ես յամենայն օգնականութենէ. չկաք քո հայր, ոչ եղբայր, ոչ մանկունք, ոչ բարեկամք. զամենեսին զտուա կո-

ղուսաբ։ Այլ էնցէ՞ քո հայր անմահ, որ ոչ վերջասցի ունել 'ի վերայ քո խնամ, և տալ քեզ զամենայն կարեւոր օգնութիւն։

354. Յորժամ տեսցես զոք 'ի սուգ և յարտասուս հարեալ ընդ մահ կամ ընդ անջատումն որդւոյն կամ ընդ կորուստ ընչից, զգոյշ լեր մի խոտորեցուսցեն զքեզ միաք քո։ և համարիցես Ճշմարտիւ զայրն այն լինել 'ի չարիս յաղագս արտաքին երացդ այդոցիկ։ այլ հաւանեաց զի ոչ դէպքն այնոքիկ վշտացուցանեն զնա, զի և այլ ոք զնոյնս կրեալ՝ ոչ նոյնպէս վշտացաւ, այլ կարծիքն նորա զայնցանէ։ Բայց եթէ հարկ իցէ՝ մի զանց առներ 'ի լալոյ ընդ նմա և ցաւակից լինելոյ բանիւք սփոփանաց։ այլ զգոյշ լեր զի վշտակցութիւնն քո թափ անցցէ 'ի նեղքս 'ի քեզ, և սոուգապէս լիցես վշտահար։

355. Հասին քեզ լուրք 'ի Հռովմայ, և ահա տխրութիւն և ցաւ պատեն զքեզ։ Եւ ընդէր բնաւ անցք որ անցանեն երկիրիւր փար-

սախաւ հեռի 'ի քէն՝ տառապե-
ցուցին զքեզ։ Բաւական է տա՝ ինձ, որ
չար մարմի քեզ գիպել՝ ուր գու-
ոչն գտանիցիս։

356. Յորժամ տայցեն լուրս
գԺնգակս, յիշեա զի չէ այն քեզ
անկ, քանզի ոչ հայի յիրս որ ընդ
քս խշնանութեամբն իցեն։ «Այլ
իրք կարեւորք են ինձ, զի ամբաստան
լինին զինեն իբր յամբարշտութիւն
հատեալ»։ — Եւ միթէ չամբաս-
տանեցին և զՍոկրատ։ — Այլ
գուցէ գատապարտ զիս արասցեն։
— Եւ ոչ Սոկրատ գատեցաւ 'ի մահ։
Դիր զայս քաջ 'ի մտի։ պատիժ
անդ եւթ է՝ ուր գուցեն յանցանք։
անհնարին է երկուց այդոցիկ մեկին
կալ յիրերաց։ Մի համարիր զքեզ
իբր թշուառ։ Այլ տա՝ զի կարծի-
ցես թշուառագոյն, զՍոկրատ ար-
դեօք եւթէ որք գատապարտն արա-
րին զնա։ Զիք ուրեմն քեզ վատնդ,
այլ գատաւորացն։ զի քեզ չէ մարմ-
բնաւ մեռանել իբրև եղեռնաւոր,
իսկ նոցա հնար է գատապարտել
զանմեղն 'ի մահ։

357. Տրամեալ ես զի Թողեր զվայրդ գեղեցիկ և հեծեա և ողբաս։ Թշուառադոյն ուրեմն ես քան զագռաւս և զՀայս, որք փոփոխեն զկլիմն և հատեալ անցանեն զծովս անմեռունչ և անվիշտ վասն սեղեացն զոր Թողուն։ — «Այլ նոքա անբանական կենդանիք են»։ — Եւ միթէ դիք եառնուն քեզ զբան զի եղկելի լինիցիս։ Կամ կարծէիր եթէ մարդիկ հանդոյն ծառոց լցեն խորարմատ հաստատեալք յերկրի՝ զի մի սեղափոխք լինիցին բնաւ։ — «Այլ ես Թողում զիմ բարեկամն»։ — Բաբէ. աշխարհս ամենայն լի է բարեկամօք, և նոքին պաշտպան կացցեն քեզ. լի է մարդկամբ զորս բնութիւն կցորդակից քեզ արար։ Ոգիսաւս որ այնքան տարաշխարհիկ ճանապարհ եհատ, միթէ ո՞չ եգիտ բարեկամս։ Հերակլէս որ այնքան Թափառեցաւ ընդ երկիր, չեգիտ նոյնպէս։

358. Զիք ինչ քո զոր չիցէ ընկալեալ։ Որ եառն քեզ զամենայն՝ բառնայ ինչ'ի քէն։ Ոչ միայն յի-

մար այլ և ապաշնորհ ելցես և անի-
բաւ՝ եթէ կամիցիս հակառակել
ընդ այդ։

359. Կամիս յաւելոյթս հասանել
և ոչ կամիս տեսանել զմահ ուրուք
'ի սիրելեաց քոց։ Կամիս ուրեմն
անմահս լինել ամենայն բարեկամաց
քոց. և զի վասն քո միայնոյ վո-
խեսցեն դիք զօրէնս իւրեանց և
զկարգս աշխարհի։ Մինթէ արդաւ
ելցէ այս, և խորհիցիս ուղղու-
թեամբ։

360. Ընդ մեկնիլ և ընդ անջա-
տուն բարեկամին քոյ և որդւոյ
լաս և ողբաս։ Ո՞չ գիտէիր եթէ
մարդ ուղևոր է 'ի վերայ երկրի։
Ցիմարութիւնդ տանջէ զքեզ։ Մինթէ
յուսայիր ցանկ ընդ քեզ ունել
զհաճոյականան քեզ, և վայելել
հանապազ զվայրս և զկենակցու-
թիւնս ըղձականս։ Ո՞ խոստացաւ
քեզ զայդ։

361. Մի խռովիր 'ի մոի քում
ասելով, եթէ ոանհար եղէց, և յո-
չինչ գրեցայց յաշխարհի. զի ոանի-
հարութիւն եթէ չար ինչ է, ոչ է

քեզ մարթ ըմբռնել 'ի չարիս 'ի ձեռն այլոց, և ոչ անկանել յախտս։ Մինթէ 'ի քոյ ձեռս կցէ ունել աւագական պաշտամունս. մինթէ 'ի կամելն քո և հրաւիրիցին 'ի կոչումն խնջոյից։ Ոչ բնաւ ամենևին։ Եւ մինթէ կցէ՞ այդ քեզ ոտնհարութիւն և անպատուութիւն. մինթէ վասն այդր յոչինչ համարիցիս յաշխարհի, զոր՝ որում՝ անկ էր լինել ինչ յիրս որ ընդ քոյով իշխանութեամբ կցեն և որովք կարես երեւելի իսկ հանդիսանալ։— «Այլաբերեալքիմ, ասես, ամենևին անոք և անօգնական մնայցեն առ յինէն»։ — Զինչ կցէ անօգնականն ամենևին լինել։ Զի չտայցես նոցա արծաթ. զի ոչ գրեսցես զնոսա քաղաքացիս Հռովմոյ։ Ո՞ տայց քեզ զայդոսիկ ընդ մերով իշխանութեամբ լինել, և ոչ այլոց։ Եւ ո՞ կարիցէ ինչ որ ոչ իւր կցէ տալ այլոց։ Ասեն. «Կուտեա ինչս, որպէս զի և մեք վայելեսցուք 'ի նոսին»։ Եթէ մարթ կցէ ինձ ինչս ունել անկորուստ պահելով զհամեստութիւն, զպարկեշ-

տուԹիւն, զհաւատարմուԹիւն, և զվեհանձնուԹիւն, ցոյց ինձ զպատ-
շաճական ուղին առ ընչաստացու-
Թիւն, և եղէց փարԹամ. իսկ եԹէ
կամիցիս զի ես կորուսանիցեմ զըս-
տոյգ բարիս իմ, որպէս զի զսուտ
բարիսն ստացիս, տես քեզէն ԹէՀ
ուրքան անհաւասար ունիս զնժարս
կշռոցն, և ուրքան անշնորհակալու և
անխորհուրդ իցես։ Ո՞ր առաւէլ
սիրելագոյն իցէ քեզ, արծաթ եԹէ
բարեկամ իմաստուն և հաւատա-
րիմ։ Ո՛հ. օգնեա ինձ մանաւանդ
ստանալ զառաքինուԹիւնս և մի
ստիպեր զիս առնել իրս որով կո-
րուսանիցեմ զայնոսիկ։ Ասացեալ
գարձեալ. «Այլ հայրենեաց իմոց
ոչ արբանեկեցից ինչ»։—Զո՞ր արբա-
նեկուԹիւնս։ Գուցէ չաւնիցի՞ նա 'ի
քէն ձեռակերտ գաւիԹս սիւնա-
զարդս, և բաղանիս։ Եւ զի՞նչ իցէ
այդ. միԹէ ունիցի՞ նա և սօլերս 'ի
դարբնոց, կամ զէնս 'ի կարուակէ։
Շատ է ամենեցուն զիւրեանց պար-
տըս կատարել և զիւրեանց գործ։
Այլ եԹէ տայիր հայրենեաց քոց

միւս ևս իմաստուն պարկեշտ և հաւատարիմ քաղաքացի, ոչ ապաքէն հարկանէիր նմին սպասս: Սուտ դապէս այդ այդպէս էր, և վեհագոյն սպաս. չեմ ուրեմն անօգուտ նմին: — «Իսկ արդ զոր ասացեալ ունիցիմ'ի քաղաքի» : — Զայն՝ զոր կարիցես ասանալ կալով մնալով'ի նմին հաւատարիմ և պարկեշտ : Իսկ եթէ հայրենեաց կամելով արքանեկել կորուսանիցես զայսպիսի առաքինութիւնս, զոր սպաս ընկալցի նա'ի քէն՝ եթէ ցոփակեաց եղեր և նենգաւոր:

362. Կամիցիս պայծառացուցանել զքաղաք քո չնաշխարհիկ և ծանրագին ընծայիւք. պարգևեա զքեզ նմին, յեռ կարդելոյ զանձն քո օրինակ կատարեալ հեզութեան, առատամտութեան և արդարութեան:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս մահուան։

363. Զանգիտես յանուանէ մահու՝ իբրև 'ի չարագուշակ ինչ իրէ։ Զկնք ինչ չարագուշակ յամենայնի յորում բնութեան ինչ գործ նշմարեցի։ Այլ պղերգութիւն, երկչոտութիւն, վատասրտութիւն, ըբութիւն, և այլ ամենայն ախտք, ոչ են աղիտաբերք։ Եւ 'ի վերայ այսորիկ եթէ զգուշացի զոք յիմէքէ՝ ոչ ինչ է մեսս տալ զանուն նորին։

364. Յորպիսի գործս պարապեալ գոլով կամիցիս թէ ըմբռնիցս զքեզ մահ։ Ես փափաքիցի զի հասանիցս 'ի վերայ իմ 'ի գործելն իմ արժանաւոր ինչ մարդոյ. մեծ, ազնիւ և կենցաղօգուտ։ Նա մանաւանդ կամիցի թէ գտանիցս զիս պարապեալ յուղղել զիս, և մտադիր

'ի պարտս իմ, որպէս զի յայնմ պա-
հու կարող լինիցի ամբառնալ սրբա-
մաքուր ձեռս յերկինս և առ դիմն
ասել. «Զամենայն կարողութիւնս
զոր ընկալայ 'ի ձէնջ առ 'ի ճանա-
չել զնոսա ձեր, և առ հպատակել
նոցին, ոչ բնաւ ընդ վայր հարի.
այլ գուն գործէի իմովքանն չանար-
դել զձեզ։ Այսպէս վարեցի զգայա-
ռանս իմ, այսպէս և զկարծիս։ Ոչ
երբեք կալայ արտաւնջ զձէնջ. ոչ
դժկամակեցի երբեք ընդ տուրս
ձեր, և ոչ ցանկացայ փոփոխել զնո-
սին։ Եւ ոչ զմի 'ի զօգից որոց կցորդ
արարեք զիս՝ ոչ բռնաբարեցի։ Գո-
հանամ զձէնջ զի ստեղծէք զիս։
Վարեցայ պարգևօք ձերովք ցոր-
քան եառուք ինձ թոյլ վարել. արդ
կամիք յետս առնուլ, աւադիկ դար-
ձուցանեմ առ ձեզ. ձեր իսկ են, և
որպէս հաճոյ ի՞նչ ձեզ՝ արասջիք։
Նաև զանձն իմ դնեմ 'ի ձեռս ձեր։

365. Ընդէ՞ր բուսանին հասկք
ցորենոյ։ Ո՞չ ապաքէն յառաքանալ,
և յետ այնր հնձիլ. ոչ եթէ թո-
ղուն զհասկն 'ի վերայ ցօղնոյ երբև

նուիրական էնչ։ Եթէ էր էնչ 'ի նոսա զգացումն, կարծիցես արդեօք թէ ուխտս դնէին մի՛ բնաւ հնձիլ։ Արդարև ոչ. նա մանաւանդ անէծս էին համարէին զկալ մնալն անհունձ. նոյնպէս են և մարդիկդ. յանէծս համարեալ լինէր նոցա չմեռանելն։ Մարդկան չմեռանել՝ նման է հասկի ցորենոյն չաստքանալոյ և չհասանելոյ 'ի հունձս։

366. Զի՞ փոյթ է քեզ ընդ առիթ մահուան քո, թէ ջերմն ելցէ և թէ սուր, կամ ծով, կամ հիւանդութիւն և կամ բռնաւոր ոք։ Ամենայն ճանապարհք որ տանին 'ի դժոխս՝ հաւասարք են. և մի 'ի կարճառոյցն է ճանապարհ ընդ որ առաքէ զքեզ բռնաւորն։ Ոչ սեսեր երբեք զբռնաւոր զի սպանցէ զոք զամիս վեց. այլ սենդ սպանանէ զմարդ զամն բովանդակ։

367. Ի հասանել ժամուն՝ մեռայց. այլ մեռայց հանդոյն առն՝ որ դարձուսցէ զաւանդ առ փոխառու։

368. Որպէս յերկարագնաց ու-

ղևորութեան՝ 'ի հասանել նաւուդ 'ի նաւահանգիստ ուրեք՝ եկանես զկնոջ, կարես զՀանապարհային հաւաքել խեցեմորթս և սունկս. այլ միշտ հարկ է քեզ զուշ և զուրուշ 'ի նաւ անդր ուղղել, և հայել ստէպ յայն կողմն, թէ գուցէ կոչեսցէ զքեզ նաւապետն. և 'ի կոչելն՝ հարկ է ընկենուլ զամենայն և ընթանալ, զի մի 'ի յամելդ արկանիցես 'ի նաւ անդր ձեռօք և ոտիւք կապելովք եբրև զանասուն մի. նոյնպիսի է և կենցաղոյս ուղևորութիւն, եթէ փոխանակ ժամակացն և սընկի տացի քեզ կին և որդի, կարես առնուլ. այլ 'ի կոչել նաւապետին, հարկ է թողուլ զամենայն և փութալ 'ի նաւ անդր առանց հայելոյ յետս: Եթէ ծերկեսես՝ մի շատ հեռանար 'ի նաւէն, զի մի 'ի կոչել նաւապետին, անպատրաստ գտցես և անժամանս:

369. Հարկ է մահու վաղ կամ անագան հասանել առ մեզ: Յոր պատրաստմունս ըմբռնեսցէ զմեզ: Մշակ զբաղեալ գտցի 'ի հողագործու-

թեան, պարտիզպանն 'ի պարտի-
զին, վաճառականն 'ի տուրևառս
իւր. իսկ դու յի՞նչ արդեօք պարա-
պեալ եցես։ Ինձ փափաքելի է ա-
մենայն ուխտիւք 'ի վերջնում պա-
հուն գտանիլ պարապեալ միայն
յուղղել զկամս իմ. որպէս զի ան-
վերդով, անարդել և անընդդիմակ
առնիցեմ զվերջինն զայն գործ, որ-
պէս այր ազատ, և կարիցեմ ասել
առ դիս. «Ձեղծի՞ արդեօք զօրէնս
ձեր. միթէ ղեղծա՞յ տրիւք ձերովք
զոր եատուքն ինձ։ Ո՞չ ապաքէն
նուաճեցի ձեզ զզգայարանս իմ,
զնղձս և զկարծիս։ Տրանջեցի եր-
բեք զձէնջ. կամ թէ բաարեցի բնաւ
զնախանձամուրթիւնդ ձեր։ Խօ-
թացայ, զի այսպէս կամեցարուք.
զնոյն և ես կամեցայ։ Աղքատացայ,
զի այդպէս կամ եղև ձեզ. զոհ եղէ
և ես ընդ աղքատուրթիւնս իմ։
Նուաստացայ, զի այս էին կամք
ձեր, և ոչ երբեք ցանկացայ վերա-
նալ։ Ե՞րբ տեսէք զիս տխրեալընդ
պայման կենաց իմոց. երբ գտէք
զիս սրտաբեկեալ կամ 'ի քանքար-

ատեն։ Պատրաստ եմ և այժմ՝ի կրել զամենայն զոր և հաճեսջիք հրամայել վասն իմ. և զոյգն ինչ նշանակ կամացդ՝ օրէնք են ինձ անդրժելիք։ Կամիք զի ելից՝ի հրաշակերտ տեսլաբանէս։ Ելանեմ առագիկ, և բիւր շնորհս խոնարհակեան մատուցանեմ ձեզ, զի արժանի համարեցայք մուծանել զիս անդր՝ի զնին ձեռակերտաց ձերոց, և առ՝ի ցուցանել ինձ զաքանչելի կարգն որով վարեքդ զտիեզերս զայս»։

ՑԱՆԿ

ԳԼ. Ա. — Յաղագս Աշխարհիս բարեաց.... 8

ԳԼ. Բ. — Յաղագս ընչաքաղութեան..... 47

ԳԼ. Գ. — Յաղագս արծաթասիրութեան և հաստատութեան 52

ԳԼ. Դ. — Յաղագս Աղքատութեան..... 71

ԳԼ. Ե. — Յաղագս տոհմածոց և կրօնից..... 85

ԳԼ. Զ. — Յաղագս խնամատարութեան և խնամատարաց... 106

ԳԼ. Է. — Յաղագս կա-
հանց և հեշտու-
թեանց..... 144
ԳԼ. Ը. — Յաղագս խնա-
մոց մարմնոյ.... 150
ԳԼ. Թ. — Յաղագս առ-
ոչինչ համարելոյ
ղթշնամանս..... 154
ԳԼ. Ժ. — Յաղագս բարե-
կամութեան և
ընկերութեան... 158
ԳԼ. ԺԱ. — Յաղագս թխբ
կարծեաց 167
ԳԼ. ԺԲ. — Յաղագս մա-
հուան..... 211

ՀԱՅԿ-ՍՐԲԱ.

«Ազգային գրադարան»
NL0127289